491.99-3
Կ-38

V. D. Gabiniantz

# ԲԱՌԳԻՐՔ

# ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԱՐԲԱՌԻ

(*Մօտ* **5000** *բառ ու ոճ*)

*Կազմեց*

ՏԻԳՐԱՆ ՆԱԽԱՄԱՐԴԵԱՆՑ

Տ Փ Խ Ի Ս

*Տպարան Մովսէս Վարդանեանցի*

*1903*

491.99-3
Ն-38
O. D. Gabiniantz
423/133-ՆԱ

# ԲԱՌԳԻՐՔ

## ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԱՐԲԱՌԻ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

*կազմեց*

ՏԻԳՐԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆՑ

ՏՓԽԻՍ
*Տպարան Մովսէս Վարդանեանցի*
**1903**

Дозволено Цензурою. 19 Апрѣля 1903 г. Тифлисъ.

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ներկայ բառգիրքը բովանդակում է իր մէջ բացի բուն ժողովրդական բառերից, ոճերից և դարձուածներից՝ նաև այն դժուարիմաց բառերի բացատրութիւնները, որոնք հանդիպում են մեր մինչև այսօր հրատարակած (Արարատեան բարբառով) աւանդութիւնների մէջ։

Սոյն բառերը, ոճերը, դարձուածները և այլն, ժողոված ենք բացառապէս Վաղարշապատ գիւղում։

Տ. Ն.

## ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| *Օր.* | *օրինակ* |
| *Յոգ* | *յոգնակի* |
| *Յատ. ան. կան.* | *յատուկ անուն կանանց* |
| *Յատ. ան.* | *յատուկ անուն* |
| *Փոխ.* | *փոխաբերաբար* |

# ԲԱՌԳԻՐՔ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԱՐԲԱՌԻ

## Ա

Ա—է (ի, իր, էր. ինք, իք, ին. անց. անկատ):

Աբայ—բրդէ վերարկու:

Աբասի—քսան կոպէկանոց ռուսական դրամ:

Աբով—յուսով (օր. քու աբով դուշմանս մնայ):

Աբուռ, Աբուռ-հայայ—ամօթ. պատկառանք:

Աբութալիր—ծիրանի տեսակ:

Աբրշում—մետաքս:

Աբրշմէ—մետաքսեայ:

Ադաթ—սովորութիւն: Ադաթ անել—սովորութիւն դարձնել:

Ադամամութը—սաստիկ մթնութիւն. խաւար: Ադամամութը կոխել ա—սաստիկ մութն է:

Ադաշ—անուանակից. մտերիմ:

Ազան—մօլլի երգը, որով մինարէից կանչում է մահմեդականներին աղօթքի գալու.

Ազան տալ—աղօթել. հրաւէր կարդալ աղօթքի (օր. մօլլէն ազանը տալիս ա):

Ազապ—չը պսակուած երիտասարդ կամ կոյս:

Ազար—տարափոխիկ ցաւ, հիւանդութիւն (կենդանիների): Տաւարի մէջ ազար ա ընկէ—անասունների մէջ ցաւ է երեւացել:

Ազատել—փրկել. ծննդականին ազատել.

Ազատուել—ծնել. պրծնել:

Ազգ—ցեղ. տոհմ: Ազգ ու ընտանի—ազգ. ազգական. ընտանիք. տուն ու տեղ:

Ազի—մայրիկ:

Ազիզ—հարազատ. հաղուագիւտ. սիրելի. թանկագին. հանդիսաւոր (օր. ազիզ օր): Ազիզ-մազիզ—փափուկ կեանքի սովոր. քնքուշ:

Աղրէհիլ—քաջ. կտրիճ. հսկայ։

Աթաղան բաբաղան—նախնիքներից մնացած. պապենական։

Աթար—քակոր. կովի կամ գոմշի չորացրած աղբ, որ գործ են ածում գիւղերում որպէս վառելիք։

Աթարոց—երկայն ձող՝ թոնիրը խառնելու համար։

Աժդհա—աժդահա. վիթխարի։

Աժենալ—արժենալ։

Ալ—բաց կարմիր։

Ալայ—գաղտնիք. արատ։

Ալանի - անաղ. չորացրած դեղձ՝ մէջը ընկոյզ և շաքար լցրած։ Ալանի ալանի խօսալ—անմիտ, անհամ խօսել։

Ալան-թալան—յափշտակութիւն. կողոպտումն։

Ալարել—ծուլանալ։

Ալարկոտ—ծոյլ։

Ալափստրակ—նապաստակ։

Ալբխալը—խնկոյն։

Ալէկործում—ալէկոծումն. մըրրիկ։

Ալէք—Աղէքսանդր (յատ. ան.)։

Ալըրմաղիկ—թիթեռն։

Ալըրմաղ—մաղի մի տեսակը՝ ալիւր մաղելու համար։

Ալիր—ալիւր։ Ալիր աղցան անել—սաստիկ մանրացնել. փոխ. գանակոծ անել։

Ալիշ-վէրիշ—առուտուր։

Ալմաստ—ադամանդ։

Ալուան—աղնիւ. ընտիր։

Ալուստի—խնկոյն։

Ալշու—վէգի մի կողմը (սուլթան)։

Ալրոտ—ալիւրոտ։

Ախառ կիրակի—Զատիկ կիւրակի։

Ախար, Ախըր—չէ՞ որ։

Ախմախ—յիմար։

Ախմախութիւն—յիմարութիւն։

Ախտ անել—ուխտել։

Ածել—թափել. ձուլել. նուագել որ և է երաժշտական գործիքի վերայ (օր. դուռնայ ածել. թառ ածել. չոնգուր ածել). ձու ածել (օր. հաւը ձու ածեց)։

Ածեր—նորատունկ այգի։

Ականաթ—թակարդ. որոգայթ։ Ականաթ սարքել, Ականաթ դնել—որոգայթ պատրաստել։

Ակը—ակն. գոհար. թանկագին քար. սայլի ակը. աղբիւրի ակիզը (օր. աղբրի ակը կալնուել ա)։ Ակն ու արեգակ—ամենագեղեցիկ։

Ակը տալ—նայել. այցելել. կըրկին տեսնել. տեղեկանալ։

Ակիշ—ակիշ. երկաթից շինած կիսաբոլորակ գործիք, որով տաշտից կպած խմորը քերում են։

Ակլատիղ—մեծ պասին գլուխ սոխի վերայ եօթ հատ սա-

գի փետուր են ցցում և թօկի մի ծայրից կապելով՝ քարշ անում առաստաղից. խուրաքանչիւր շաբաթ այդ փետուրներից մի հատ հանում են, որպէս զի իմանան թէ երբ է լինելու Զատիկը։ Այդպիսի գլուխ սոխը կոչվում է ակլատիզ։

Ակոբ—Յակովբ (յատ. ան.)։

Ահ—երկիւղ։ Սիրտը ահ ա ընկէ—վախեցել է։ Ահ ու դողը ջանն առնել—սաստիկ վախենալ. սարսափել. սոսկալ։ Ահ ու գողի մէջ ա—երկիւղի մէջ է։ Ահաչոր ընել—երկիւղից չորանալ, մեռնել։

Ահէլ—ծեր։

Ահէլութիւն—ծերութիւն։

Ահլի—ծերունի. հասակով. փորձառու։

Աղայ—տէր. պարոն։

Աղաթթու—աղաջրի մէջ պահուած վարունգ, կաղամբ և այլն։

Աղ—աղ. համ (օր. խօսքի աղ)։ Աղ ու հաց—աղ ու հաց։ Աղ ու հացով մարդ—հիւրասէր մարդ։ Աղ անել—աղ ցանել. Աղը դնել—աղի մէջ դնել, պահել։ Գլուխը աղը դնել—սպանել. մեռցնել։ Անաղ ու հաց քրդի չուն—փոխ. երախտամոռ. ապերախտ. Աղն ա պակաս եա մաղը—մի որ և է բան ուզելու է եկել։ Մնի խելքին աղ անել—մէկի խելքին չը հաւանել (օր. խելքիդ ա́ղ անեմ, ա́ղ)։

Աղաք—առաջ։ Մնին աղաք անել—մէկին առջևից քշել. Մնի աղաքը կտրել—մէկի առաջը դուրս գալ՝ բռնելու նպատակով. Աղաքիցը—նրա առջևիցը. Աղաքներիցը—նրանց առջևիցը։

Աղաքուց—առաջուց։

Աղաքուայ—առաջուայ։

Աղբ—անմաքրութիւն. աղբ (օր. տան աղբը տա́ր դէ́ն ածա)։

Աղբանոց—տեղ, ուր աղբը տանում, դէն են ածում.

Աղբաթ—վախճան (օր. աղբաթդ խէր ըլնի)։

Աղբուր - աղբիւր։

Աղգօթի—այն վառօդը, որը դրսից ածվում է չախմախի հրացանի փոսիկի մէջը և բռնկում է կայծքարից։

Աղինջ—բանջարեղէն։

Աղիք—աղիք։ Մենծ աղիքս պուճուրին կերաւ—սաստիկ քաղցած եմ։

Աղլամաղ—անհասկացող։

Աղլուխ—թաշկինակ։

Աղուէս—աղուէս։ Օզնստոսի աղուէս ա կտրէ - սաստիկ նիհարել է։

Աղուէսախոտ—դաշտային խոտ։

Աղուն—աղալու ցորեն։

Աղունել, Աղուն անել—քարմաղով ցորենը մաքրել իր աւելորդ մասերից։

Աղպէր—եղբայր (յոգ. ադպըրտինք)։

Աղպէրութիւն—եղբայրութիւն։

Աղպէրակին—եղբօր կին։

Աղջանարաթ—ծիրանի տեսակ։

Աղջիկ, Աղջիկ-խիղան—աղջիկ։

Աղտել—յաղթել։

Աղցան—բանջարեղէն։

Աղօթք—աղօթք։ Աղօթք անել—աղօթել։

Աղօթարան—արեւելք, դէպի ուր երեսները դարձնում են աղօթելիս։ Աղօթարանը բացուել ա—արեգակը դուրս է եկել. լուսացել է։

Ամալ անել—զօրանալ. աճել. առաջ գալ։

Աման—կերակուրի աման։ Աման-չաման—եղած բոլոր ամանները։

Ա՜ման—բացականչութիւն վըտանգի, նեղութեան ժամանակ (օր. ա՜ման, վա՜յ, էկէք, հա՜սէք)։

Ամանաթ—աւանդ. պահուած բան։ Ամանաթ տալ—որ և է բան տալ պահելու։

Ամանչել—ամաչել։

Ամանչացնել—ամաչեցնել։

Ամանչկոտ—ամօթխած։

Ամակ—խնամք. երախտիք։

Ամարաթ—ապարանք. պալատ։

Ամբար—շտեմարան։ Ամբար անել—շտեմարանել. ամբարի մէջ ժողովել։

Ամբօլ—ամոլ. գութանի առաջին զոյգ եզները։

Ամօթ—ամօթ. պատկառանք։ Ամօթու—ամօթից (օր. ամօթու քիչ էր մնում՝ գետինը մննի)։ Ամօթու փշրուել—ամօթահար լինել։

Ամօթով—ամօթխած. պարկեշտ (օր. ամօթով հարս)։

Այան ըլնել—յայտնի լինել (օր. Աստուն այան ա, որ ես էդ մեղքի տէրը չեմ)։

Այիր—ամօթ. պատկառանք։

Այն-օյին—մանր-մունր. դատարկ. փուչ։

Այնումը գալ, Այնումը ըլնել, Այնումը գցել—զգալ. ուշադրութիւն դարձնել. բանի տեղ դնել (օր. սա՛ղ աշխարքը որ քանդուի՝ այնումը չի գայ)։

Անարուտ—անամօթ. անպատկառ։

Անահ—աներկիւղ։

Անարատ—մաքուր. զերծ։

Անանուխ—անանուխ (բոյս)։

Անգ—ցորենի պարկի ծայրերից միքանի օղակներ են կարում, որոնց միջով բարակ պարան են անցկացնում և ծայրերը միասին ժողովելով կապում, որպէս զի ցորենը պահպանուի թափուելուց։

Այդ օղակները անգեր են կոչվում։

Անգանակ—կաւէ մեծ աման, որի մէջ չոր են լուանում։

Ա՛նգլուխը—գագաթ. ամենաբարձր ծայրը (օր. սարի ա՛նգլուխը)։

Անգլուխ—գլուխ չ'ունեցող (օր. անգլուխ տուն). մոքամոլոր. անկարգ։

Անգագար—անհանգիստ. չար։

Անգարտ—անհոգ. դարտ չ'ունեցող։

Անդնջում—անհանգիստ։

Անել—գործել. աշխատել։

Աներ—աներ. կնոջ հայրը։

Աներես—անամօթ։

Աներեւութք ըլնել—աներեւոյթ լինել։

Անզգամ—անամօթ. անզգամ (կին)։

Անէհարբար—երախտամոռ։

Անըծել—անիծել։ Անըծկաչոր անել—անիծելով սպանել։

Անըծուած—անիծեալ։

Անըմով—նշանաւոր. ականաւոր (օր. փլա՛ն մարդը անըմով մարդ ա)։

Անթասիր—պատուասիրութիւնից զուրկ։

Անթիքայ—հաղուագիւտ։

Անթև—առանց թևի։

Անիսաֆ—անգութ. անխիղճ։

Անիսաֆութիւն—անգթութիւն. անխղճութիւն։

Անլաղաթ—անհամ. անախորժակ։

Անլուայ—անլուաց. չը լուացուած։

Անխէր—անօգուտ։

Անխղճմտանք—անխիղճ. անգութ։

Անխօս—առանց խօսելու. անձայն։

Անծէր—անծայր։

Ա՛նծէրը—ամենավերջին ծայրը (օր. գնաց, հասաւ աշխարքի ա՛նծէրը)։

Անկաջ—ականջ։ Անկաջ դնել, Անկաջ անել—ունկն դնել։ Անկաջը վեր անել, Անկաջի քամակը գցել—իրան չը լսելու տալ։ Անկաջը կախ արած լսել—ուշադրութեամբ լսել։ Անկաջը բաղմանչու ա արէ—իրան ձեռնտու չ'եղած բանը չի լսում։

Անկաջարռնուկ—աւետիք. ուրախ լուր հաղորդողին տուած պարգևը. մանկական խաղի մի տեսակը։

Անկշտում—անյագ։

Անհէսաբ—անհաշիւ. անհամար։

Անձող—ածուխ։

Անճար—խեղճ. թշուառ (օր. անճարը կերել ա բանջարը—առած)։

Անշառ—անվնաս։

Անոռ-անգլուխ—անկարգ։

Անոտք—տակ չ'ունեցող։

Անում—անուն։

Անուշ—քաղցր. համեղ։

Անուշ—յատ. ան. կանանց։

Անուշ անել—վայելել։

Անպակաս անել—չըպակասեցնել։

Անպակաս ըլնել—չը պակասել (օր. մեր գլխիցը անպակաս ըլնես-օրհնութիւն)։

Անպէտք—անպիտան։

Անջախ—հազիւ հազ. վերջապէս։

Անջիգեար—անգութ. անխիղճ (իւր ծնողների և մերձաւորների վերաբերմամբ)։

Անսաս, Անսաս անսամուս—անշշուկ։

Անվիրի վիրի տեղ—ամայի, անմարդաբնակ տեղ։

Անտակ—տակ չ'ունեցող. անհուն։

Ա՛նտակը—ծովի խորքը։

Անտէր, Անտէր-անտիրական, Անտէր ու դուս—անտէր. անօգնական։ Մի դիհն անտէր—անկարգ. անհոգ։

Անտուտ—անծայր. անսահման։

Անցկենալ—անցնել։

Անօթի, Անօթըհանց—նօթի. դեռ ես բան չը կերած։

Անփահմ—անհասկացող. անհեռատես։

Անփոտ—անհոտ։

Անփոտ ծաղիկ—փոխ. անօգտակար. անպէտք (օր. նա անփոտ ծաղիկ ա)։

Աշխար, Աշխարք—աշխարհ։ Արար աշխար, Ալամ աշխար—ողջ աշխարհ։ Աշխար վեր ունել—տարածուել. լցնել (օր. Նրա հարստութիւնը աշխար վէ կ'ունի, էնքա՛մ հարուստ ա)։ Աշխարքի խէրն ու շառը գիտենալ—աշխարհի չարն ու բարին գիտենալ։ Աշխար մննել—ամուսնանալ։

Աշխարքի—շատ. չափազանց (օր. աշխարքի մալ ու դօլվաթ ունի)։

Աշխատել—գործել. փող վաստակել։

Աշխատանք—գործ. վաստակ։ Աշխատանք անել—աշխատել. վաստակել։

Աշխատաւոր—ժրաջան. ջանասէր։

Աշկարայ—ակնյայտնի։

Աշկերտ—աշակերտ (արհեստաւորի)։

Աշշի—խոհարար։

Աշշութիւն—խոհարարութիւն։

Աշառ—արջառ։

Աչք—աչք. փոխ. ամենասիրելի անձն (օր. նա թագաւորի աչքն ա)։ Աչքը կպցնել—նոր սկսել քնել (օր. հէնց նոր ի աչքս կպցրէ)։ Ինձ մի՛ աչքով ես տենում—ինձ լաւ չես ճանաչում։ Աչքը գալ—մի բան աչքին նշանակու-

թիւն ունենալ (օր. նա իրա դարդովն էր մոլորէ, էլ ա՛մ-ջիկ կը գար աչքը)։ Աչ-քը ջուր կտրել, Աչքը ջուր դառնալ—մէկին անհամբեր սպասել (օր. աչքս ջուր դա-ռաւ, աչքս ջուր կտրեց նրա ճամփէն պահելօն)։ Աչքը մնալ վրէն—կարօտ մնալ մի բանի. մի բան տեսնել՝ հաւանել, բայց չը տիրանալ։ Աչքը մննել—սիրելի դառնալ։ Աչքը ընկնել մնի վրէն—հա-ւանել մէկին։ Աչքը կշտա-նալ—մի բանից յագենալ։ Աչ-քը վախենալ—մի բանից վա-խենալ։ Աչք ածել, Աչքը ման ածել—աչքով որոնել մէկին։ Աչքաճիճիկ տալ, Աչքաճլ-վիստ տալ—մի լաւ բան մէ-կին ցոյց տալ, բայց չը տալ նրան։ Աչքից սուրմայ կը թռցնի, Աչքից մազ կը թըռ-ցնի—շատ ճարպիկ աւազակ է։ Աչքով աչք չ'ունի նրան տեսնայ—նրան սաստիկ ա-տում է։ Ա:քով տալ--չար աչքով վնասել։ Աչքից ընկ-նել—արհամարուել մէկից։ Աչքից գցել—արհամարհել. ատել։ Նրան էս աչքից էն աչքը չի փոխի—անչափ սի-րում է նրան։ Աչքդ դուս գայ (անէծք)։

Աչքաբաց—աչալուրջ։

Աչքածակ—ագահ։

Աչքածակութիւն--ագահութիւն։

Աչքակապ—ձեռնածու. խաբե-բայ։

Աչքակապութիւն—ձեռնածու-թիւն. խաբեբայութիւն։

Ապրուստ—ապրուստ. կեանք։ Ապրուստ անել—ապրել. աշ-խատել։

Ապսպարել, Ապսպրել—մէկի միջոցով տեղեկութիւն տալ. պատուիրել։

Ապրօ—Աբրահամ (յատ. ան.)։

Աջ—ձեռք. մասունք։ Աջն առ-նել—հոգեւորականի աջը համ-բուրել։

Աջալ—վերջ. վախճան։ Աջալը գալ—վերջը հասնել։ Ամալ-աջալը կտրել—շատ ստիպել։

Առ—ամօթ։ Առ ու Թասիբ—ամօթ և պատուասիրութիւն։

Առաւօտ—առաւօտ։ Առաւօտը գշերով գշերհանայ, Առաւօտը սուրբ ծէքին, Առաւօտը էն գլխէն—առաւօտեան արշա-լուսի հետ։

Առաստամ—սայլի տակը, աջ և ձախ կողմերից, երկու երկու փայտէ սեպեր են ցցուած, որոնց մէջ մտնում է սռնին և որոնց մէջ էլ պտոյտ է գա-լիս։ Այդ սեպերը կոչվում են՝ առաստամներ։

Առըխ—նիհար (օր. տաւարը շատ առըխ ա)։

Առնել—գնել. վերցնել. խակ միրգ ուտելուց ատամները ցաւել (օր. էնքամ տանձ ու խնձոր եմ կերէ, որ ատամներս առել ա, չեմ կարում հաց ուտեմ)։
Առուտուր—առևտուր։
Առուտուրական—վաճառական։
Առօք-փառօք—մեծաշուք. փառաւորապէս։
Ասել—խօսել. ասել. երգել (օր. հաց ասել. բան ասել)։
Ասեղ—ասեղ։ Ասեղ գցելու տեղ չը կայ—մեծ բազմութիւն է ժողովուած։ Ասեղը ծակում ա, միջովն անցկենում—փոխ. սաստիկ ժլատ է։
Ասլ—ծագումն. ցեղ. իսկ և իսկ։
Ասլան—առիւծ։ Ասլան դառնալ—առիւծի պէս կատաղել։
Ասկերի—խաղողի տեսակ։
Ասպար—զէնք։
Ասպարաւորուել—զինուել։
Աստօծ—Աստուած։ Աստու երեսիցը թափած—Աստուածանից անիծուած։ Աստու պէծ ու կրակ ա—չար, անհանգիստ է։ Աստու պառը—փոխ. խոնարհ. հնազանդ. միամիտ։ Աստու սուր ու թուրը գցել—Աստուծոյ անունով երդուել. անչափ աղաչել։
Աստղ—աստղ։ Աստղը թէքուել—անբախտանալ (օր. նրա աստղը թէքուել ա)
Ասօ, Աստուր—Աստուածատուր (յատ. ան.)։
Ավսոն—թովումն։
Ավսոնել—թովել։
Ավսոնող—թովիչ։
Ատամ—ատամ։ Մնի ատամները համրրել—մէկի թոյլ կողմը գտնել՝ նրանից օգտուելու նպատակով։ Քոմքին էլ ատամովս եմ տուէ—ամենին էլ փորձել եմ։
Արաղ—օղի։ Արաղ քաշել—օղի պատրաստել։
Արայ ունենալ մի բանի հեննայ—մի բան սիրել։
Արաժան—հում կաթի սեր։
Արանքը, Արանքին—մէջը. մէջտեղը (օր. մնացել էր երկու ջրի արանքին, չէր գիտայ՝ ինչ անի, ինչ չ'անի)։
Արարմունք—վարուեցողութիւն. գործ։
Արարմունքով—շնորհալի։
Արեգակ—արեգակ։ Արեգակի կտոր—փոխ. ամենագեղեցիկ։
Արզ անել—պատմել. խնդրել։
Արզայ—խնդիրք։
Արէնթրուշ—արիւնհեղութիւն։
Արէնխում—արիւնարբու։
Արէնշաղախ, Արէնլուիկ, Արէնճեճեխ—արիւնշաղախ։
Արժան—արժանի (օր. նա արժան ա էս բանին. եարար արժան կ'ըլնեմ նրա երեսը

տենալու)։

Արին—արին։ Արին ցցել, Արինք ցցել—արինհեղութիւն անել։ Արինը քաղցր ա—դուրեկան, համակրելի անձնաւորութիւն է։ Արին են չաղ տալի իրար վրա, Իրար արին են խմում—կատաղի թշնամիներ են։

Արխալուղ—հագուստի մի տեսակը։

Արխէյին—հանգիստ։

Արխէյնանալ—միամտուել. հանգստանալ (օր. սիրտս արխէյնացաւ)։

Արծըլի—արծելի։

Արմաղան—Նուէր. հազուագիւտ։

Արմանալ—զարմանալ։ Արմացք բան ա—զարմանալի բան է։

Արնոտել, Արնոտ անել—արեան մէջ շաղախել։

Արշայ ընկնել—յայտնուել։

Արշտոտալ—որոշտալ։

Արոճ—որոճ։ Արոճ անել—որոճալ։

Արտասունք—արտասուք։ Արտասունք չափել, Աղէն արտասունք թափել—դառնապէս լալ։ Արտասունքը աղբրի պէս աչքերիցը թափում ա—սաստիկ լաց է լինում։

Արքազ—գարնան ժամանակ որթերից կտրատած աւելորդ ճիւղերը։

Արև—արեգակ. փոխ. կեանք։ Արև-արքայութիւն—պայծառ արեգակ։ Արևը մէր մըննել—արևը մայր մտնել. փոխ. մեռնել։ Թէ իմ աստծը կ'ըլնի, ես գիտամ արևը ո՛րդէ մէր կը մննի—եթէ իմ աստծը լինի, ես գիտեմ թէ այն բանը ինչ հետևանք կ'ունենայ։ Արևի ձէնն ածել—կեանք վայելել. ապրել։ Արևը խաւարեց—մեռաւ։ Արևի սադաղին—կեանքի համար (օր. քու արևի սադաղին՝ մի կտոր հա՛ց տու)։ Արևին ասում ա՝ դու մէր մտի, ես դուս եմ գալի—փոխ. աննման գեղեցիկ է։ Արևկող անել—կողքը արևին արած՝ տաքանալ։ Արևս վըկայ—կեանքս վկայ։

Աւ—որս։ Աւ անել—որս անել։

Աւատալ—հաւատալ։

Աւատաս—կարծես թէ։

Աւալ—ամենից առաջ. հին ժամանակ։

Աւալախր—միմիայն. հէնց

Աւալուայ—առաջուայ։

Աւարայ—անգործ։

Աւարիգ—էգ գոմէշ, որ առաջին անգամն է ծնում։

Աւելուկ—բանջարեղէն։

Աւել—աւել. առաւել։

Աւլել, Աւել անել—աւլով սըրբել։

Աւռիդ—ագահ.
Աւռդութին—ագահութին:
Աւչի—որսորդ:
Աւչութին—որսորդութին:
Աւղուչ—որսորդութին (թռչունների):
Ափաշկարայ—ակնյայտնի:
Ափալ-թափալ—շտապով:
Ափեղցփեղ—ափեղցփեղց. վայր ի վերոյ:
Ափլփորել—մութը տեղում ձեռքերով շօշափել՝ մի բան գտնելու:
Ափկալ անել—մէկին շրջապատելով բռնել:
Աքան-ցաքան—խառնափնթոր. անկարգ (օր. ի՞նչ աքանցաքան տուն ա):
Աքաշ—փոքրիկ կարաս բռնուածքի համար:
Աքլօր—աքաղաղ:
Աքլօրականչին—հաւախօսին:
Աքլօրակռիւ—աքաղաղների մրցումն. փոխ. գործ է ածւում և մարդկանց վերաբերութեամբ, երբ կռիւը լուրջ չէ (օր. ի՞նչ էք աքլօրակռիւ տալի):
Աֆաթն առնել—նեղը գցել. զզուեցնել որ և է խնդիրքով:
Ա՜ֆֆարիմ—կեցցես:

# Բ

Բարի—ծերունի. պապ:
Բաղան—թիկունք. մէջք:
Բաղիա—պղնձէ խոր աման:
Բազար—շուկա:
Բազարաւոր—շուկայի մարդիկ.
Բազի—մի քանի. մի տեսակ (օր. բազի մարդ ասում ա՝ ըսենց չի, ընենց ա): Բազի վախտ—երբեմն:
Բազուկ—բազուկ (արմատ):
Բաթէն—յետոյ. ապա թէ:
Բաթլախ—սաստիկ ցեխ:
Բաթմիշ ըլնել—անհետանալ. սուզուել (օր. ցխի միջին բաթմիշ էլաւ, մնաց). փչանալ (օր. ծովի միջին շա՜տ մարդ բաթմիշ էլաւ):
Բաժինք—օժիտ:
Բաժկի առնել բերանը—գինի կամ օղի խմել (օր. ըսօր բերանս բաժկի չեմ առէ).
Բաժանել—բաժանել: Բաժանել տալ—բաժանել տալ:
Բալի, Բալքի, Բալքիմ—գուցէ.

Թերևս. կարելի է։
Բալայ—ձագ. ճուտ. ցաւ. պատիժ (օր. ի՛նչ ես գլխիս բալայ դառէ)։
Բալանիք—բանալի։
Բախլել—նախանձել. մէկին բարիք չը կամենալ։
Բախլութիւն—նախանձ. բարիք չը կամենալը։
Բախտ—բախտ. ճակատագիր։ Բախտը բանել, Բախտը կտրել, Բախտը բերել—բախտ ունենալ։ Բախտի դուռը բացուել, Բախտը բացուել—բախտաւորուել։ Բախտին քացի տալ—իւր բախտից փախչել։ Բախտին քար գցել—մէկի բախտաւորութեան խոչընդոտ հանդիսանալ։ Բախտը կապուել—բախտը փակուել (օր. էս աղջկայ բախտը կապուել ա, մնացել ա տանը)։
Բաղ—այգի։
Բաղմանչի—այգեպան։
Բաղչայ—պարտէզ։
Բաղչաչի—պարտիզպան։
Բամբաշել—գլխին բաց ձեռքով սաստիկ հարուածել (օր. ջուխտ ձեռով գլխին ընե՛նց բամբաշեց, որ շշմեց՝ վեր ընկաւ)։
Բամիա—բամիա (բոյս)։
Բայաթի—երգի տխուր եղանակ։ Բայաթին գցել—փոխ. սաստիկ լաց սկսել։
Բայղուշ—բու. փոխ. գուժատու. չարագուշակ մարդ։
Բան—իր. գործ։ Բան բռնել—մի բանի, մի գործի կպչել։ Բանս բուրդ ա—գործըս անյաջող է։ Բանս ձախ ա էթում—գործս անյաջող է գնում։ Բանս աջ ա էթում—գործս յաջող է գնում։ Բանն Աստօծ—Աստուծոյ օգնութեամբ (օր. բա՛նն Աստօծ, բալքի դրան մի ճար եմ անում)։
Բանել, Բան անել—գործել. մշակել. աշխատել։
Բանացնել—բանեցնել։
Բանդ անել—կպցնել մի բանի. չը թողնել գնալ. փոխ. խաբել։ Բանդ ընել—կպչել մի բանի. մնալ մի տեղ երկար ժամանակ։
Բանուոր—գործաւոր. մշակ։
Բանձր—բարձր։
Բանձրանալ—բարձրանալ. մեծանալ. բարձր պատուի հասնել։
Բանձրութիւն—բարձրութիւն։
Բանջրքաղի—բանջարեղէն քաղելու դանակ։
Բանփոգի անել—սպանել։ Բանփոգի ընել—սպանուել։
Բաշ—գլուխ. գլխաւոր. պատի գլուխ. ձիու պարանոցի երկայն վարսը։

Բաշտան—հէնց՚որ (օր. գալու բաշտան, տուեց՚ վէ գցեց)։

Բաշորթիկ—կանանց գլխի զարդ։

Բաշխել—պարգեւել. նւրել։

Բաջի—քոյրիկ (գործ է ածվում ոչ-ազգականների վերաբերութեամբ)։

Բառանչել—բառաչել (օր. կովը բառանչում ա)։

Բա՞ս, բա՞—հապա. ու. թէ։

Բաս մնել—մրցել։

Բասմայ—ընտանի կենդանիների աղբը գիւղից դուրս առանձին տեղ են գցում չորանալու համար. այդպիսի տեղը բասմայ է կոչվում։

Բասմինդ—թաւիշից կարած չոր, որ կանայք, գլուխ կապելիս, դնում են ճկլինդի վերայից։

Բար—պտուղ. բերք (օր. Աստու բար ու նուբարը նրա տանը կայ)։

Բարատու—պտղատու (օր. բարատու ծառ)։

Բարաստ—հակառակ. յամառ։

Բա՛րաքեալլայ—կեցցես։

Բարութ—վառօդ։

Բարուր—խանձարուր։

Բարրել—նորածին մանկան խանձարուրի մէջ փաթաթել։

Բարդի—բարդի ծառ. փոխ. բարձրահասակ։

Բարեկամ—ազգական. բարեկամ։

Բարեկամութիւն—ազգականութիւն. բարեկամութիւն։

Բարեբար—հաւասար։

Բարխանայ—միատեղ ժողոված տան կահ կարասիք (օր. իրա քօչ ու բարխանէն հաւաքում ա, ընկնում ճամփայ)։

Բարաքեաթ—օրհնութիւն. լիութիւն. ույժ. զօրութիւն (օր. սուփրից բարա՛քեաթ. գողանովի փողը բարա՛քեաթ չ'ունի)։

Բարձել—բառնալ։

Բարշել—հաշտուել. սակարկութինը վերջացնել։

Բարիշ—հաշտ։

Բացմէնակ - դաշտային ծաղիկ։

Բացուել—բացուել. յայտնի լինել (օր. բանը բացուեց). սիրտ առնել, քաջալերուել (օր. առաջ ամանչում էր, եննայ քիչ քիչ բացուեց, սիրտ առաւ). հրացանը պայթել (օր. թուանքը բացուեց). ուրախանալ (օր. քէֆս բացուեց)։

Բաց անել—բանալ. յայտնի անել (օր. տես՝ բօխչէդ բաց կ'անեմ, թաքուն բաները արշայ կը գցեմ)։

Բաց թողալ—արձակել։

Բեգեառ—գիւղացու պարտաւորութիւն տէրութեան ձրի ծառայելու։

Բեզարել—յոգնել։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/ 1922
ЯСНЕЛЯ МЯСНИКЯН
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

1005
29012

Բեթար—աւելի վատ։

Բելլու—յայտնի. որոշ։ Բելլու անել—յայտնի լինել. որոշուել։

Բեխաբար—անտեղեակ մի բանի։

Բեղ—ընչացք։ Բեղի տակովն անցկացնել—իրան չը լսելու տալ։ Բեղի տակովն անցկենալ—մէկին կիսասիրտ յարգանք տալ։

Բեռը—բեռն։ Բեռը բռնել—բեռը վերցնել. փոխ. յագենալ (օր. ես իմ բեռը բռնել եմ, էլ տեղ չը կայ ուտելու)։

Բերան—բերան։ Նրա բերնին չիր չի թրջուի—նա գաղտնապահ չէ։ Բերանս նրա բերնի հեննայ էլ չի թրջուի—նրա հետ այլ ես չը պիտի խօսեմ։ Իրար բերնի թքել են—իրար հետ համերաշխ են, բնաւորութեամբ նմանում են միմեանց։ Բերնի տաք ու հովը իմանալ, Բերնի զօլը իմանալ—մէկի կարծիքը նախապէս իմանալ մի բանի մասին։ Բերնի ջուրն էթալ, Բերնի թուքն էթալ—սաստիկ հաւանել. հիանալ. ցանկանալ. ուզել։ Բերանը բաց մնալ—զարմանալ. հիանալ։ Բերնին գալ—չը թողնել խօսքը աւարտել. հակաճառել (օր. մի բան որ անցեմ եմ, չի թողում պրծնեմ. էն, մէկը բերնիս գալիս ա)։ Բերնից պարծուլդի—չափից ճանաչիր։

Բերել—բերել։ Կովը փորթ ա բերէ—կովը հորթ է ծնել։ (Բէ—բեր)։

Բզել—խթել. հրել։

Բզզալ—միջատների ձայն հանելը (օր. ճանճը բզզում ա)։ գործ է ածվում նաև բզզանի վերաբերութեամբ (օր. հօլը բզզում ա)։

Բէբախտ—անբախտ։

Բէղուղուր—չարագուշակ։

Բէդօլվաթ, Բէդօլվաթի չամադան—շռայլ. անառակ. օտարների ճրագ։

Բէզըրգեան—վաճառական (չըրջիկ)։

Բէզըրգեանութիւն—վաճառականութիւն։

Բէհայեայ—անամօթ։

Բէհուդայ—անպիտան։

Բէղաֆիլ—յանկարծակի։

Բէմուրադ—մուրազը փորին (օր. բէմուրադ մեռնես.—անէծք)։

Բէյթի—անպիտան. անպէտք։

Բէյին—ուղեղ. խելք. ուշք։ Բէյինն ընկնել—մտքումը պտտուել. մի բան մտքից չը հեռանալ։ Բէյինը տանել, Բէյնահան անել—գլխացաւանք պատճառել. դզզեց-

նել։ Բէյինը մննել—հասկանալ (օր. գլուխս տրաքեց, էնքամ խօսացի, նոր որ բէյինը մտաւ)։

Բէնքատտ—կտրիչ ատամներից դուրկ։

Բէշնորք—ազեղ. անշնորհ։

Բէջարել—մշակել. հոգ տանել։

Բէսամթ—անյարմար։

Բէվախտ—անժամանակ։

Բէր—այն տեղը, ուր ոչխարները քշում են կթելու համար։

Բէքեարայ—անօգտակար. անպէտք։

Բթել—շտապով ուտել։

Բիաբուռ - անամօթ։

Բիաբուռ անել—անպատուել. խայտառակել։

Բիան—դաշտային խոտ։

Բիրադի, Բիրադնով—բոլորը. ամենքը։

Բիրդան, Բիրդան բիր—յանկարծ։

Բլբուլ—սոխակ։

Բլլալ, Բլլացնել—անիմաստ կերպով խօսել։

Բլղուր—ճմլած, մղած խաղողի մնացորդ, որից օղի են պատրաստում։

Բխով—կապանք։ Ոնները բխով դնել—ոտները շղթայել։

Բխովել—կապանք դնել. շղթայակապ անել (օր. ոնները բխովեցին, տարան բերդը)։

Բկալաշակ—եռանկիւնաձև շոր, որ կանայք, գլուխ կապելիս, դնում են ճլպինդի տակից։

Բկլկել—շնչափողից բռնելով՝ խեղդել։

Բհամ գալ—յառաջանալ. բռնել։

Բհիր—ցից։

Բղաւել—գոռալ. աղաղակել։

Բղդալ—մայել (ոչխարի). կոկորդային ձայն հանել։

Բղդոց—ոչխարի մայելը. կոկորդային ձայն։

Բղուղ—կաւից շինած երկայնաձև աման՝ բռնուածքի համար։

Բմբուլ—փետուր։ Բմբլահան անել—փետուրները պոկել։

Բնակալ—հաւարնում մի ձու միշտ բնակալ են թողնում, որ հաւը շարունակ ձու ածէ։

Բնակալել—տուն ու տեղ դառնալ. երկար ժամանակ մնալ. հաստատուել։

Բնատէն—դուլթանի երկայն շղթայ։

Բնդել—անկանոն, անհաւասար կերպով կարել։

Բնդոց—անկանոն կար։

Բողբաշ—մի տեսակ ջրայի կերակուր (ոչխարի մսից)։

Բոլոր—կաւից շինած բոլորաձև աման՝ զանազան թթուեղէններ պահելու համար։

Բոլորիկ—դորա փոքրիկ տեսակը։

Բոխ—աղաջրի մէջ պահած

բանջար։

Բոյ—հասակ (օր. էրկուսն էլ մի բոյի են)։ Բոյ անել, Բոյ քշել—մեծանալ. հասակն առնել։ Բոյ ու բուսաթ—հասակ և տեսք։

Բոյլաղ—սառնիկ քամի (հիւսիսային)։

Բոց—բոց. ալաւ. տաքութիւն։

Բուբու—թռչունի տեսակ. յոպոպ։

Բուդուրմիշ ընել—սայթաքել (ոտի ծալուելովը)։

Բութայ—Նախասահմանեալ սիրահար։

Բուխարի—հին տեսակի վառարան. մօրթու ամենալաւ տեսակը, որ Բուխարայից է ստացւում և որից գդակ են կարում։

Բուկ—չնչափող։

Բուկօ—Բագրատ (յատ. ան.)։

Բուղ—գոլորշի։

Բուղաղ—որկոր։

Բուղաղիկ—որկրամոլ։

Բուղաղկութիւն—որկրամոլութիւն։

Բուղայ—ցուլ։

Բուղդէյի—սեխի տեսակ։

Բուն - բոյն (աթարի դիզի բուն. թունդրի բուն)։ Թունդրի բունը կապել—թոնրի բունը պատրաստել։ Խելքի բուն—խելօք. իմաստուն։

Բուն դնել—բոյն դնել. երկար մնալ մի տեղ. հաստատուել։

Բունունիկ—կովի աղբից պատրաստած կոնաձև աման։

Բուսուն քաշել, Բուսուն պահել, Բուսուն մննել—ծածուկ մէկի յետեից ման գալ. դարան մանել. լրտեսել։

Բուրդ—բուրդ։ Բրդգցի տալ—անդադար կռուել։ Բրդըհան ընել, Բուրդը տալ—բուրդը թափել. փոխ. սնանկանալ։ Բուրդը Բարերար անել—փոխ. սաստիկ ծեծել։ Բուրդ կը դնի, բամբակ կը գզի—սաստիկ կը բարկանայ (օր. հէրս որ իմանայ, ինձ բուրդ կը դնի, բամբակ կը գզի)։

Բուրքու—տօթ. սաստիկ շօք։

Բուրջ—աշտարակ։

Բուք, Բուք ու բօրան - ձիւնախառն քամի։

Բռթել—հրել։

Բռի—վայրենի. կոպիտ. անկիրթ։

Բռնել - կալնուլ. սկսել (օր. սրա գժերը էլի բռնեցին. տաքութիւնս էլի բռնեց. գլխացաւս էլի բռնեց). մի բան բռնել (օր. շունը սաս բռնեց)։ Էս ծառը բար չի բռնում—այս ծառը պտուղ չի տալիս։ Պաղբիսը բռնել ա—պատուատար յաջողել է։

Անէծքս նրան բռնեց—անէծքս իւր ազդեցութիւնը ունեցաւ նրա վերաբերութեամբ:

Բռունցք—բուռն. խմբուղ:

Բրախ տալ—արձակել. ազատել. ձեռքից բաց թողնել:

Բրիշակ—աւերակ: Բրիշակ անել—աւերակ դարձնել: Բրիշակ ըլնել—աւերուել (օր. տո́ւնդ բրիշակ ըլնի, բալանիքը ընկնի կտուրը—անէծք):

Բօղ—գորշ. մոխրագոյն. անա. ռակ.

Բօլ—շատ. բաւական:

Բօլի—աղաջրի մէջ պահած բանջար:

Բօլուկ—բաւականին:

Բօղկը—բօղկ (կանաչեղէն):

Բօղչայ—կապոց: Բօղչէդ բաց կ'անեմ—գաղտնիքներդ երևան կը հանեմ:

Բօմբի—հացի մի տեսակը:

Բօնձ—կոտրած ամանի մի մասը: Բօնձ անել—փոխ. սպանել:

Բօշա—բօշա. գնչու. փոխ. անամօթ (օր. ի՞նչ բօշա մարդ ա. բօ՛շի երես ունի):

Բօշ—դատարկ. թոյլ:

Բօստան—սեխաստան, որտեղ ձմերուկ, սեխ և վարունգ է բսնում: Բօ՛ստան ա—հօ չէ բսնում. առա́տ է:

Բօստանչի—բօստան պահող:

Բօրփել—կրակը բորբոքել. գըրգռել (օր. նրա տակը բորփում ա):

Բօրանի—կերակուրի մի տեսակը, որ պատրաստում են մսից, բադրջանից, կանաչ լօբուց, բամիայից և այլ բանջարեղէնից միասին:

Բօք—վէգի դուրս պրծած մասը:

# Գ

Գաղ—երկայնութեան չափ, որ հաւասար է մօտաւորապէս 1½ արշինին:

Գազազել—յուսահատել. կատաղել. բարկանալ:

Գազազած—յուսահատուած:

Գաթայ—իւղով և շաքարով պատրաստած հաց:

Գալ (էկայ, էկար և այլն)—գալ. թղթախաղում կամ վէգի խաղում յաջողութիւն ունենալ (օր. ըսօր վէգս չի գա-

լի)․ խմորը հասնել, թխելու պատրաստ լինել (օր․ մի գնա՛ տես խմորն էկել ա, թէ չէ)։

Գալօ—Գալուստ (յատ․ ան․)։

Գանգատ—գանգատ․ բողոք․ տրտունջ։ Գանգատ էթալ—գնալ գանգատի։ Գանգատ տալ—գանգատ տալ։

Գանգատուել—գանգատել։

Գանգատաւոր—դժգոհ․ գանգատաւոր։

Գառը (յոգ․ գառներ)—գառն։

Գառնարած - գառներ արածեցնող։

Գառան-դմակ - մի տեսակ բոյս, որ յայտնի է ժողովրդական բժշկութեան մէջ՝ որպէս վէրք մաքրող յատկութիւն ունեցող։

Գառնանկաջ—գարնան բանջար, որ նման է իր ձեւով գառան ականջին։

Գարունք—գարուն։

Գաւ—կաւէ չիչ։

Գափ—փայտեայ կարթ առասանի վրայ՝ բեռը բարձելու համար։

Գափօ—Գաբրիէլ (յատ․ ան․)։

Գդալ—դըգալ։ Կոտրած դըգալ—ամէն բանի մէջ խառնուող (անտեղի կերպով)։

Գդալաման—դըգալներ պահելու կողով։

Գդակ—գլխարկ։ Ալու գդակը Վալու գլուխն ա դնում, Վալունը՝ Ալու—փոխ․ մէկից պարտք վերցնելով՝ վճարում է միւսին, երկրորդից՝ երրորդին և այսպէս եօլայ է դնում։ Գդակ չ՚ունես—փոխ․ տղամարդ չես․ քաջութիւն չ՚ունիս (օր․ բա դու գդա՛կ չ՚ունես, որ թողաս իրա արածը մարսի)։

Գեադայ—ծառայ․ ամարդի (օր․ գեադայ մարդ)։ Գեադա գիւդայ—ծառաներ․ երեխաներ։

Գեադայութիւն—ծառայութիւն․ ամարդութիւն։

Գեալբարի—կրակախառնիչ։

Գեալաջաղը—առաջիկայ տարին։

Գեահկիր—դանդաղկոտ (ձի)։

Գեամ—սանձ։ Գեամ դնել բերանը—սանձ դնել․ փոխ․ սանձահարել․ զսպել (օր․ մի կա՛ց նրա բերանը ընենց գե՛մ դնեմ, որ քէֆդ գայ)։ Գեամը մնի ձեռը տալ—փոխ․ իրաւունքները մէկին յանձնել։

Գեամի—նաւ։

Գեամչի—նաւավար։

Գեառգեառ—ծիրանի տեսակ։

Գեարան—Գայեանէ (յատ․ ան․ կան․)։

Գեղ (յոգ․ գեղարէնք)—գիւղ։

Գեղցի—գիւղացի։

Գեղցավարի—գեղջկօրէն։

Գետին, Գե՛տինք—հող. երկրագունդ. ցամաք (օր. Ա՛ստօծ, ե՛րկինք, գե՛տինք, ծո՛վ, ցա՛մաք—երդում): Գետինը մննես—(անէծք): Գեննովը տալ—վայր գցել (օր. Նրան ընե՛նց գեննովը տուեց, որ (բխկո՛նը բերնովը դուս էկաւ):

Գերանդի—խոտ կամ ցորեն հնձելու գործիք:

Գերեզման—գերեզման: Գերեզմանիս վրէն որ մի թէզ խոտ էլ կանանչի, քու արածը մտիցս չեմ գցի—ոչ մի դէպքում արածդ չեմ մոռանայ:

Գերեզմաններ, Գերեզմանատուն—գերեզմանատուն:

Գերմակ—մանր աղած:

Գերմաստի—ծառի տեսակ:

Գեօղալ—գեղեցիկ. թանկագին:

Գեօղակ—ցորենի պարկի երեսի չոր, որ ցորենը թափուելուց պահպանում է:

Գեօղլուկ ակնոց:

Գեօղլկաւոր—ակնոցաւոր:

Գեօլ—լճակ. ջրով լիքը փոս:

Գեօռ—գերեզման (մահմեդականների): Գեօռըէ՛ գեօռ ըլնես—գերեզմանումդ հանգիստ չը լինիս (անէծք):

Գեօռխանայ—գերեզմանատուն (մահմեդականների):

Գեօվդայ—հսկայական կառուածք:

Գեօրայ—համեմատ (օր. եօրղանդ ու գեօրայ ոտներդ մեկնա (առած):

Գզզուած—պատառոտուած. փոխ. դառամեալ. ծերունի:

Գզիր—գիւղական տանուտէրի (старшина) ստորին պաշտօնեայ:

Գէլ—գայլ: Գէլկոխ շուն—գայլ խեղդող շուն:

Գէյմ—տեսք. կերպարանք:

Գէշ—տգեղ:

Գէվօ—Գէորգ (յատ. ան.):

Գժանոց—հիմնարկութիւն գժերի համար. գժանոց:

Գժուացնել—խելագարեցնել. փոխ. սաստիկ բարկացնել:

Գժուել—խելագարուել:

Գժութիւն—խելագարութիւն:

Գիժ—խելագար: Ձորերով գիժ—ցնորամիտ. խելագար: Գժերը բռնել—գժութիւնը սկսել:

Գինով—արբեցած (օր. հօ գինովը, հօ մեռելը՝ մին ա):

Գինովանալ—արբենալ:

Գինուկ—խաղողի տեսակ:

Գիտենալ—իմանալ: Ե՛ս գիտամ՝ նա՛—Նրա հետ ես հաշիւս կը վերջացնեմ:

Գիր—գրուածք. նամակ. առ. հմայութիւն: Գիր անել—հմայութիւն անել. կախարդել: Գիր գրել—նամակ գրել. գրել: Գրի ա՛նչ սեր գիտամ,

ո՛նչ սիպտակը—անգրագէտ եմ։

Գիւգիւմ—մետաղեայ սափոր։

Գիւլար—վարդաջուր։

Գիւլլի բաղ—առասպելական պարտէզ, ուր անմահական ծառ է բուսում։

Գիւլաբաթին—ոսկէ թել։

Գիւլաբաթնէ—ոսկէ թելով գործած։

Գիւլլա—գնդակ։ Գիւլլա-բարութ—գնդակ ու վառօդ։

Գիւլբա—գուլբա։

Գիւլխաբայի—պարտիզի ծաղիկ։

Գիւմ ըլնել—խորասուզուել ջրի տակը. անհետանալ։

Գիւս—խիտ. լիքը (օր. նրա փողը գիւս ա)։

Գլգորել, Գլորել—տես Թօլ անել։

Գլխալուխ - անգամակի փոքր տեսակը, որի մէջ գլուխ են լուանում։

Գլխավերևը - գլխի վերևը։

Գլխել—լիքը լցնել (օր. ամանը գլխել ա)։

Գլուխ—գլուխ. մեծ. նշանաւոր (օր. գլուխ հէքիմ. գլուխ ուստայ)։ Գլխատակը բարձ դնել—փոխ. սուտ յոյսերով խաբել։ Գլխահան անել—մոլորեցնել։ Գլխի ընկնել - հասկանալ։ Գլխիս վրէն ես էկէ, Գլխիս վրէն տեղ ունես—փաղաքշական խօսքեր, որ ասում են պատուաւոր հիւրերին։ Գլխիս կրակ ա վառւում—սաստիկ վշտացած եմ։ Գլխովը պտիտ գալ—խիստ հոգ տանել. սատկապէս ծառայել (փաղաքշական խօսք)։ Գլխին տալ—գլխին հարուածել. փոխ. վա՜յ տալ. ողալ։ Գլխին ծեծել—սուգ անել։ Գլխիցը դուս տալ—անմիտ խօսել։ Գլխի վրէն մոլորել—շփոթուել. չ՛իմանալ ինչ անել։ Գլխին, ոտին տալ—սուգ անել. վա՜յ տալ։ Գլուխ տալ—ողջունել. երկրպագել։ Գլուխ գալ—յաջողել (օր. էս բանը ըսկի գլուխ գա՜լու բան ա)։ Մնի գլուխը տանել - մէկին դդուեցնել։ Գլուխը վէ դնել—ննջել. նիրհել. փոխ. մեռնել (օր. Աստօծ ո՛չ անի, Աստօծ էն հաւր չը խօսացնի՝ հէրները որ գլուխը վէ դրեց, անները կը քանդուի)։ Գլուխը մնի ուղուրին դնել—պատրաստ լինել մէկի համար անձնազոհ լինելու։ Գլուխը քարովը տալ—փոխ. սխալուել։ Գլուխը եղել, Գլուխը եղ քսել, Գլուխը թլօրել—խաբել սուտ յոյսերով։ Գլուխը կորցնել—մոլորել (օր. ուրախութիւնիցս գլուխս կոր-

ցրել եմ)։ Գլուխը ու-
տել—փոխ. մէկին զարտա-
մահ անել (օր. որդկերանց
գլուխը կ'ուտի, կը մնայ մէն
մէնակ բուբուի նման)։ Մնի
գլուխը հանել, Մնի գլուխը
բերել—մէկի գլխին փորձանք
բերել (օր. տես ինչ կը բե-
րի քու գլուխը. տե՛հայ ինչ
հանեց քու գլուխը)։ Գլուխ
բերել—ի կատար ածել։ Ան-
դալ գլուխը դալմադալի մէջ
դցել—անդորրութիւնը վրդո-
վել։ Մնի հեննայ գլուխ
դնել—մէկին նշանակութիւն
տալ՝ նրա հետ վիճաբանու-
թեան մէջ մտնելով։ Գլուխը
տալ, Գլուխը թօցնել—գըլ-
խատել (օր. գլուխդ սոխի
պէս կը թօցնեմ)։ Գլուխը
թաս կոխել—տխրել։ Գլու-
խը տակը տալ—յանձն առ-
նել մի բանի ձեռնարկելու։
Գլուխ գլխի դնէք—մեռնէք
(անէծք)։

Գմուել—ջրի տակը մտնել,
չ'երևալ. յանկարծ անհետա-
նալ։

Գնդել—խմորը գունդ գունդ
անել։

Գշեր—գիշեր։ Գշեր ցերէկ—գի-
շեր ցորէկ։

Գող—գիրկ. ծոց։ Գողի քարը
վեր ածել—համաձայնել.
համոզուել։

Գողնոց—առջևը կապելու շոր։

Գոմ—գոմ. տաւար պահելու
տեղ։

Գոռալ—աղաղակել։

Գոռգոռալ—սաստիկ աղաղա-
կել։

Գոռոց—աղաղակ։

Գոռգոռոց—սաստիկ աղաղակ։

Գովալ—գովել (օր. նրան էն-
քա՛մ ա գովում, երկինքը
հասցնում, որ էլ ասիլ չի
ուզի)։

Գովական—գովելի։

Գովք—գովասանք։

Գորսել, Գորսոց տալ—ծեծել։

Գորտալեզ—գորտանման լող։

Գորտնուկ—մարմնի վերայ
դուրս եկած բշտիկներ։

Գուշ անել—գլխակոր լինել
մի բանի վերայ. ի գուճս
ածկանիլ։

Գուրգուրել—գգուել։

Գռնակ—կոլորաձև փայտ, ո-
րով խմորի գնդերը բաց են
անում թխելու ժամանակ։

Գռնակել—խմորի գնդերը բաց
անել։

Գտնել—մի բան գտնել։ (Գտէ—
գտել. օր. ինչ ես գտէ)։

Գրող—գրող. հոգէառ հրեշտակ։
Գրողը տանի քեզ, Գրողի
փայ ըլնես—հոգէառ հրեշ-
տակը քեզ տանի (անէծք)։
Գրողի փայը հատել ա—սաս-
տիկ նիհարել, հիւանդացել

է (օր. խեղճը է՛ն օրն ա ընկէ, որ գրողի փայն էլ ա հասէ վրիցը)։
Գրմփալ—վայր ընկնել բարձրութիւնից։
Գրմփոց—բարձրութիւնից վայր ընկնելիս հանած ձայն։
Գրքատուն—գրատուն։
Գօգոր—Գրիգոր (յատ. ան.)։
Գօլ—գաղջ. բարեխառն (օր. ջուրը գօլ ա). ջերմութիւն (օր. համամի գօլը մարդ ա հեղդում)։
Գօմփօռ (շուն)—գամփռ շուն։
Գօջի—ձկան տեսակ։

# Դ

Դա (դրա կամ ըտրա—դրա։ Ըտոնք—դրանք։ Ըտոնց—դրանց)—դա։
Դաբաղ—անասունների մի տեսակ հիւանդութիւն (օր. մեր կովը դաբաղ ա ընկէ)։
Դագանակ—մահակ։
Դագանակել—մահակով հարուածել։
Դա՛ղ-բէղաղ—բացականչութիւն նեղութեան, վշտի ժամանակ (օր. ամա՜ն, դա՛ղ-բէղաղ նրա ձեռիցը)։
Դադար—հանգիստ։ Դադարգին անել—հալածել. հեռացնել հայրենիքից. բնից քշել։
Դազգեահ—մեծ սեղան, որի վերայ դարձակները կար ու ձև են անում։
Դալ—նոր ծնած կովի կաթը (եփած)։
Դալար—կանաչ. մատղաշ։
Դա՛հ, դա՛հ—այս բացականչութիւններով են ձիերին վարում։
Դահրայ—մեծ դանակ՝ ծառերի աւելորդ ճիւղերը կտրատելու համար։
Դաղել—այրել. փոխ. սիրտը խոցոտել (օր. դու չե՛ս իմանում, նա իմ սիրտը դա՛ղել ա, դա՛ղէ)։ Դաղդղորիկ ածել—սաստիկ այրել։
Դաղթմիշ անել—քար ու քանդ անել. աւե՛րել։
Դաղձ—բանջարեղէն։
Դամաղ—քիմք։ Դամաղը չաղ—լաւ տրամադրուած (օր. ըսօր դամաղդ չաղ ա)։
Դամար—երակ։

Դամբիլ—դամբուլ (պտուղ). փոխ. անշնորհ (օր. Նա տեղն ու տեղը դա́մբիլ ա, դա́մբիլ, ձեռիցը դադ չի գալի):

Դամքաշ—փողահարի ձայն պահող: Դամ քաշել—ձայն պահել (օր. դամքաշը դամն ա քաշում):

Դան—անգամ. ցորենի հատիկ. կերակրի եփելու աստիճանը: Դանը գալ—կերակրի եփը գալ: Փլաւի դանը տեղն ա—փլաւի եփը լաւ է:

Դանակ—դանակ: Դանակը ոսկորին հասցնել—համբերութիւնից հանել. յուսահատեցնել:

Դանակաւոր—դանակ ունեցող (օր. սև եղը որ վեր ընկնի, դանակաւորը կը չատանայ.—առած):

Դանգ—ծանրութեան չափ, որ հաւասար է 1/4 մսխալին: Դանգ ու դուալ—նեղութիւն. ծանրութիւն: Դանգ ու սար անել—ծանրութիւն պատճառել. զզուեցնել խօսքով (օր. Է՛նքամ խօսաց, որ գլխներս դանգ ու սար արեց):

Դանգալոշ—յիմար. տխմար:

Դանգուռ—բանջարեղէն:

Դանգռի ծաղիկ—պարտիզի ծաղիկ:

Դառը—դառը. կծու:

Դառնութիւն—դառնութիւն. կսկիծ: Դառն աղքատ—սաստիկ աղքատ: Դառը տըխուր—սաստիկ տխուր: Դառը կէս գշեր—կէս գիշեր:

Դաստայ—փունջ. խումբ. սրի կոթ: Դաստայ դաստայ—փունջ փունջ. խումբ խումբ:

Դաստախուն—սփռոց:

Դաստամալ—աման լուանալու շոր:

Դատաստան—դատ. վճիռ: Դատաստան անել, Դատաստան կտրել—դատել. վճռել:

Դատել—շահել. վաստակել. դատել. (օր. Թո՛ղ Աստօծ դատի):

Դատում—շահ. վաստակ:

Դատումով—շահաւէտ:

Դար—բարձր տեղ: Դարի դուս—դառիվեր: Դարի վեր-դառիվայր: Դար ու փոս—բարձր ու ցածր տեղ:

Դարգեայ-դարպաս. փոխ. ողորմութիւն (օր. Աստու դարգե՛ային մեռնեմ):

Դարդիմանդ—առատաձեռն. վեհանձն:

Դարդիմանդութիւն—առատաձեռնութիւն. վեհանձնութիւն:

Դարման—յարդ. բժշկութիւն (օր. եարին դարման ա պէտքը): Դարմանի տակի

Ջուր—փոխ. ծածկամիտ. խորամանկ։

Դարվազայ—տե՛ս Դարբազայ։

Դարվիշ—մահմեդական քարոզիչ։

Դարտ—ցաւ. վիշտ. հոգս։ Դարտաւարած անել—վշտացնել. նեղացնել։ Դարդաւարած ըլնել—հոգսերից ճըն-շուել։

Դարտակ—դատարկ. փոխ. անմիտ։ Դարտակ դարտակ խօսալ, Դարտակ դարտակ դուս տալ—անմիտ խօսել։ Դարտակ նստել, Դարտակ մահրում նստել—բոլորովին զըր-կուել. ձեռնթափ լինել (օր. դա՛րտակ նստեմ քեզանից, ո՛րդի—անէծք)։ Դափ դարտակ—միանգամայն դատարկ։

Դարտկել—դատարկել. փոխ. հրացանը արձակել (օր. թուանքը դարտկեց)։

Դարտոտ—ցաւերով, հոգսերով լի։

Դարտոտել—հոգսերից ճնշուել։

Դաւի—վէճ. դատ։ Դաւի բաց անել մէկի վրէն—մէկի դէմ դատ սկսել։

Դափ—թմբուկ։ Դափ ածել—թմբուկ հարկանել։

Դափաչի—թմբկահար։

Դաֆթար—մատեան։ Դաֆթարը կորցնել—փոխ. մոլորել. գլուխը կորցնել։

Դեղ—դեղ. ճար։ Դեղ անել, Դեղ ու դիր անել, Դեղ դարման անել—դեղ տալ. բժշկել։

Դենլիկ—յիմար։

Դենլիկութիւն—յիմարութիւն։

Դերձան—բամբակից մանած բարակ թել. փոխ. նիհար (օր. էնքա՛մ յղարել ա, որ թել ու դերձան ա դառէ, պինչը բռնես՝ փոգին կը տայ)։

Դզել—ուղղել։

Դէզ—ցորենի կամ խոտի չեղջ (աթարի դէզ)։ Դէզ դը-նել—չեղջել։

Դէյր տալ—դառ անցնել։

Դէմ առնել—կպչել մի բանի. ցյագուրդ ուտել (օր. էնքա՛մ կերել ա, որ դէմ ա առէ)։

Դէմ ընկնել—կպչել մի բանի՝ պօկ չը գալ. փոխ. խնդրել, աղաչել։

Դէմ տալ—հրել մի բանի։

Դէմ անել—մօտեցնել. տալ։

Դէմ ու դարձ անել—ընդդիմախօսել։

Դէնը—այն կողմը։

Դէն անել—հեռացնել. քշել (օր. ճանճերը դէն արա)։

Դէն ընկնել—այն կողմը ընկնել. փոխ. ծերանալ (օր. նա շա՛տ ա ծերացէլ՝ դէն ընկէլ)։

Դէն ածել—դուրս թափել (օր.

ջուրը տա՛ր դէն ածա)։
Դէն գցել—տանել դուրս գցել։
Դէն թափիլ—ցրուիլ (օր. փողը դէն ա թափում)։
Դէսը—այս կողմը։
Դէտը—այդ կողմը։
Դըրբ—անգամ (օր. մի դըրբ տամ բանփոգի կ՚ըլնես). ծեծ։
Դըրբել—ծեծել (օր. էնքա՛մ դըրբեցին, որ բամբակով ին ջուրը կաթացնում բերանը). փոխ. շտապով հաց ուտել (օր. լա՛ւ ես դըրբում)։
Դըրբոց—ծեծ։
Դժար—դժուար։
Դժարանալ—դժուարանալ։
Դժոխք—դժոխք. փոխ. անտանելի. անպիտան (օր. էն մարդը դժո՛խք ա, դժո՛խք)։ Դժոխքից կրակ գողանամ՝ ո՛րդէ էրեմ—խեղճ մարդից բան գողանամ՝ ինչպէս մարսեմ։
Դիզել—շեղջել։
Դիլբանդ—թարգման։
Դիհ (յոգ. դհարէնք)—կողմ։ Դիհը պահել—մէկին պաշտպան հանդիսանալ։
Դինջ—հանգիստ. անդորր։
Դիպնել—դիպչել։ Իրար գլխով դիպնել, Իրար դիպնել—իրար խառնուել։
Դիվան—դատաստան։ Դիվան անել, Դիվան կտրել—դատել։
Դիր գալ—դուր գալ։
Դլել—խաբել։
Դհա—աւելի։
Դմբոճիկ—գէր. փափլիկ։
Դմբուկ—բռունցք։
Դնել—դնել (հրամ. դի)։
Դնջանալ—հանգստանալ։
Դնջում, Դնջութիւն—հանգիստ։
Դնքսել—ծեծել։
Դնքսոց—ծեծ։ Դնքսոց տալ—ծեծել։
Դող—դող. մրսելը։ Դողն ընկել ա ջանը—սաստիկ դողում, մրսում է. փոխ. սարսափում է։ Դողմանի դիպնել—սաստիկ դողալ։ Ձնգռ դնգռ դողալ—սաստիկ դողալ ցըրտից, երկիւղից)։
Դողացնել—դողալ. մրսել։
Դովրան—երջանկութիւն։ Դովրան քաշել, Դովրան քշել—երջանիկ ապրել։
Դորակ—ջրի փոքրիկ շիշ։
Դուգուլ—խակ ձմերուկ (ամենափոքր)։
Դուզ—ուղիղ։ Դուզ մարդ—ճըշմարտախօս մարդ։
Դութսաղ—կալանաւոր։ Դութսաղ անել—կալանաւորել։
Դութմայ—սեխի ազնիւ տեսակը, որ գլխաւորապէս Երեւանեան նահանգում է բսնում։
Դուիթ—թանաքաման։
Դուման—մըրիկ. մառախուղ։ Թօզ ու դուման—փոշի և մըրիկ։

Դունիա—աշխարհ։
Դունչ—ռունգն։ Դունչ ու պըռունգը ջարդել—երես-մերեսը ջարդել։
Դուշման—թշնամի։
Դուշմանանալ—թշնամանալ։
Դուռը—դուռ։ Դռներով խօսալ—փոխաբերական մտքերով խօսել (օր. ի՞նչ ես դռներով խօսում)։
Դուռում-թիքա. պատառ։ Դուռում անել—միս, պանիր և այլն հացի մէջ փաթաթել՝ ուտել։
Դուս—դուրս։ Դուս ու տուն անել—դուրս և ներս անել։ Դուս թռնել—դուրս վազել։ Դուս գալ—դուրս գալ. ծլել։ Դուս անել—դուրս անել. արտաքսել։ Դուս տալ—հանել. փոխ. բարբանջել (օր. ի՞նչ ես էրեխայ էրեխայ դուս տալի գլխիցդ). մարմնի վերայ բշտիկներ առաջանալ (օր. ջանը դուս ա տուէ)։
Դուր—ատաղձագործի գործիք, որով փայտը ծակում կամ փորում են։
Դուքան—խանութ։
Դուքանչի—խանութի տէր։
Դպա—դէպի։
Դռի—կիսաեփ (կերակուր)։
Դռլիկ—ապրուստ (օր. ըս էլ մի դռլիկ չի)։

Դռնակ—փոքրիկ դուռը։
Դվօ՞րը—ո՞րտեղով. դէպի ո՞ր կողմը։
Դըրինդ—ձեռքի ափ։
Դրիջակ—երկու դրացիների պատի մէջ փոքրիկ անցք՝ վտանգի ժամանակ իրար հետ հաղորդակցութիւն ունենալու համար։
Դըմբդըմբալ—դղրդիլ։
Դըմփալ—վայր ընկնելով ձայն հանել։
Դընդէգ—Տեառնընդառաջի երեկոյեան ամէն տան բակում խ՛ոտ այրելու սովորութիւն կայ, որը կոչվում է դրնդեզ։ Դընդէգ անել—այդ ծէսը կատարել։
Դրուստ—ուղիղ։ Դրուստ մարդ—ճշմարտախօս մարդ։
Դրստել—ուղղել։
Դև—դև։ Դիվադադար անել—անհանգիստ անել. վրդովել։
Դօլբանդ—խաղողի տեսակ։
Դօլվաթ—հարստութիւն։
Դօնում, Դօնուշ—անգամ։
Դօշ—կուրծք։
Դօշար—եփած քաղցու։
Դօշակ—ներքնակ։
Դօստ—բարեկամ. մտերիմ։ Դօստ ու դուշման—բարեկամ և թշնամի։
Դօստանալ—բարեկամանալ.

մեռմանալ։
Դոստիջան—ռեխի տեսակ։
Դոր—հերթ։ Դորէ դոր—հերթով. կարգով։

# Ե

Եա—կամ (օր. եա են՝ եա դու)։
Եարանի—վայրենի. անմարդաբնակ։ Չօլ եարանի տեղ—անմարդաբնակ տեղ։
Եարու—բեռնակիր ձի. փոխ. կոշտ ու կոպիտ մարդ։
Եաղ—օտար։
Եաղանալ—օտարանալ (օր. Եաղը գնալօն գալօն բարեկամացաւ, բարեկամը չը գալօն չը գնալօն՝ եաղացաւ-առած)։
Եախայ—օձիք։ Մնի եախէն կպնել—մէկի օձիքից կպչել՝ պօկ չը գալ. ձանձրացնել խնդրելով։ Եախէն ազատել մնի ձեռիցը, Եախէն պրծացնել մնի ձեռիցը—ազատուել մէկի ձեռքից։
Եախնի—արգանակ ոչխարի մսից պատրաստած (կերակրի մի տեսակը)։
Եախու—սպեղանի։
Եաղի—անհաշտ թշնամի։
Եաղու—թոյն։
Եաղուել—թունաւորել։
Ե՞աղուզ—ինչո՞ւ։
Եաղութ—յակինթ։
Եայլաղ—ամարանոց։
Եայլի—բոլորաձև պար։
Եանղլիշ—սխալ։ Եանղլիշ ընկնել—սխալուել։ Եանղլիշ գցել—սխալեցնել։
Եաշ—տարիք։ Եաշն առնել—հասակն առնել. մեծանալ։
Եաշով—տարիքով։
Եար—սիրահար։
Եարար—արդեօք։
Եարաղ—զէնք. գործիք։ Եարաղ ասպար—զէնք ու զրահ։
Եարայ—վէրք։ Եաման եարայ ընկնել—անբուժելի հիւանդութիւն ստանալ։ Եաման եարայ—անբուժելի հիւանդութիւն։ Եարալու փարալու, Եարոտ փարոտ—վիրաւոր. վէրքերով ծածկուած։ Եարայ փարի միջին կոխել ա, Եարէն սաղ ջանը վեր ա կալէ, Եարայ փարէն կոխել ա—մարմինը վէրքերով ծածկուել է։ Սրանով եա-

բայ չի սազանայ—փոխ. սրանով կարլիք չի հոգացուի (օր. բա՛ն գիտաս՝ բա՛ն տաս, թէ չէ սրանով եարայ չի սազանայ)։ Ջանը եարայ լափաշայ ա դառէ—մարմինը վէրքերով ծածկուել է։

Եարամազ—խորամանկ։

Եաւայ—վայրախօս։ Եաւայ եաւայ խօսալ—վայրախօսել։

Եաւաշ—կամաց. սպասիր (օր. եաւաշ դամ համնեմ)։ Եաւաշ եաւաշ—կամաց կամաց։

Եաւշան—օշինդր (santalinum)։

Եափնջի—թաղիքից պատրաստած վերարկու. տառատոկ։

Եր—երբ։

Եգին—արագ։ Եգին եգին—արագ արագ։

Եդ—յետ։

Եդ ընկնել—յետ ընկնել. փոխ. յղանալ։

Եդ ընկած—յղի։

Եդ էկած—փոխ. խիստ փորձառու (օր. շա՛տ եդ էկած մարդ ա)։

Եդ կաննել—յետ կանգնել։

Եդ դառնալ—յետ դառնալ։

Եդ անել—արձակել (օր. պարանը եդ արեց)։

Եդ առնել—յետ վերցնել։

Եդ տալ—յետ տալ. հողը քանդել, բաց անել (օր. յիքին եդ տուլինք)։

Եդ էթալ—յետ գնալ. բացուել (օր. փողը եդ ա էթում)։

Եդ տանել—բաց անել (օր. փարդէն եդ տարաւ)։

Եդանալ—ուշանալ։

Եդի—ուշ։

Եդով, Եդը, Եդև—յետոյ։ Եդևիցը—նրա յետևից (օր. եդևիցը գալիս ա, որ նրան կալնի)։ Եդևներիցը—նրանց յետևից (օր. եդևներիցը գալիս ա, որ նրանց կալնի)։ Եդևներիցս—մեր յետևից (օր. եդևներիցս գալիս ա, որ մեզ կալնի)։

Եղը—եղն։

Եղանդարի } խաղողի տեսակներ։
Եղան աչք }

Եղան ճակատ—բանջարեղէն։

Եղան լեզու—եղնալեզու. բոյս, որի տերևները վէրք մաքրող յատկութիւն ունին։

Եթիմ—որբ։

Եթուկ ըլնել—տեղեակ լինել մի բանի (օր. նա էս ճամփէքանցը եթուկ ա)։

Եղ—իւղ։ Եղի պուլիկ—իւղաման։

Եղալի—իւղալի։

Եղաման—իւղաման։

Եղասրոց—դանակ սրելու քար։

Եղիշ—Եղիշէ (յատ. ան.)։

Եղշնակ—դաշտային բոյս։

Եղոտ—իւղոտ։

Եղոտել—իւղոտ լինել (օր. իմ գլուխը եղո՛տեց, մնաց քու-

նը մեղրոտի—առած)։

Եղսան—Եղիսաբեթ (յատ. ան. կան.)։

Եղօ—Եղիազար (յատ. ան.)։

Եմ—անասունների ուտելիք (խոտ, գարի և այլն)։ Եմ տալ—անասուններին կերակրել։

Եմիշ—սեխ. մրգեղէն։

Ենեայ—յետոյ։ Ենեուց—յետևից։

Եռալ—եռալ. եփել. փոխ. տեղիցը շարժուել (օր. ըսկի սիրտը չի տալի տեղիցը եռայ)։ Եռ գալ—եփ գալ (օր. ջուրը եռ ա գալի)։

Եռման—եռացող (օր. եռման ջուրը տարաւ չը՛ռալէն ածեց գլխին)։

Եսիր—գերի։ Եսիր տանել—գերել։

Երդիկ—երդ. գիւղական տների տանիքի վերայ բաց արած անցք՝ լոյսը ներս թափանցելու համար։

Երես, Երեսըհարք—երես. դէմք։ Երեսը պարզ անել—պարզերես անել մէկին օտարների առաջ (օր. էլի դո՛ւ իմ երեսը պարզ կ'անես խալխի աղքին)։ Երեսիցը ընկնել—ատելի, զզուելի դառնալ։ Երես չ'ունենալ—ամօթ չ'ունենալ։ Երեսին ձուաձեղ էփես՝ չի՛ուտուի—փոխ. սաստիկ ագեղ է։ Երեսը կարմրել ա՝ դառէ կարմիր ձուաձեղ—երեսը ձուաձեղի պէս կարմրել է։ Երեսը գոմշի կաշի ա չինէ—անամօթ մարդ է։ Երեսի մինը գնդան ա չինէ՝ մինը կրակ—երեսը պնդել է, չի ամաչում։ Երեսի ջուրը գնացել ա, Երեսի մեռօնը գնացել ա—պատկառանք 'չ'ունի։ Երեսը վէ բերել, Երեսիցը կպնել, Երեսի ջուրը տանել, Երեսիցը կախ ընկնել—սաստիկ զզուեցնել որ և է բան խնդրելով։ Երես տալ—մէկին վատ սովորեցնել՝ նրա բոլոր ցանկութիւնները կատարելով (օր. երես մի տայ, տատաւ կ'ուգի-առած)։ Խաչ անել երեսին, Խաչահանել երեսին, Խաչակնքել երեսին—երեսին խաչ հանել։ Երեսովը տալ—իր արած բարիքը մէկին յիշեցնել. յանդիմանել։ Երեսը երեսին առնել—պատահել. հանդիպել (օր. թէ մի երեսս նրա երեսին կ'առնի՝ ես գիտամ նա)։

Երիշ—գնացք. քայլուածք։ Երմիշ ընել—քայլել. առաջանալ։

Երկար, Երկէն—երկայն։

Երկարութիւն, Երկէնք—երկայ-

նութիւն։
Երշել—ընթանալ. շտապել։
Եքայ—մեծ. ահագին։ Եքայ եքայ – մեծ մեծ։
Երան—նորից. կրկին. եւ առաւել։
Եօլայ էթալ—կառավարուել. մի կերպ ապրել։
Եօլագեղան—վարուեցողութիւն ունեցող (օր. եօլագեղան մարդ)։
Եօրղան—վերմակ։ Եօրղան դօշակ—անկողին։ Եօրղանին քացի տալ—փոխ. երկար ժամանակ ծանր հիւանդ պառկել։ Եօրղանդ ու դեօրայ ոտդ մեկնա—միջոցներիդ համեմատ գործ սկսիր։

# Զ

Զարնել—նիհարել (օր. մեր կովը շա՜տ ա զարնէ)։ Այս բառը գործածւում է անասունների վերաբերութեամբ։
Զարուն—նիհար։
Զաղ—խր. առարկայ։ Զեռղ զա՛ղ չի ընկնի—ոչինչ չես վաստակի։ Զաղն էլ մի զա՛ղ ընկի—բանն էլ մի բա՛ն լինի։
Զաթլ—մանաւանդ. հէնց (օր. զաթլի ես քեզ ի ման գալի)։
Զալում—ճարպիկ (օր. շա՜տ զալումն ա)։
Զալմութիւն—ճարպկութիւն։
Զահլայ տանել, Զահլաքուշ անել—զզուեցնել։
Զահմաթ—նեղութիւն. ճանճրութիւն։ Զահմաթ քաշել—նեղութիւն կրել։
Զահրմար—ցաւ։ Զահրմա՛ր ուտես (անէծք)։
Զաղայ—քարայր։
Զանգալ—սրունգների վերայից հագնելու կաշուէ ճիտք։
Զանգակ—զանգակ։
Զանգուլակ—փոքրիկ զանգակ։
Զառ, Զառվարաղ—ոսկեթել. ոսկեթիթեղ։
Զարբ—սարսափ. ույժ. զօրութիւն (օր. նա դեռ իմ զարբը չի տեհէ)։
Զարբել—ահ տալ. վախեցնել (օր. նրան ընե՛նց զարբեմ, որ քէփդ գայ)։
Զարար—վնաս։ Զարար անել—վնաս կրել։
Զարբաղան—թնդանօթ։
Զարգեար—ոսկերիչ։

Զարգևալութիւն—ոսկերչու-
թիւն։
Զարդանդ – ած. երկիւղ. սար-
սափ։
Զարդանդել—սարսափել։
Զարթնէ—բացի։
Զաւդակ—չատախօս. վայրա-
խօս։
Զաւդակութիւն—չատախօսու-
թիւն. վայրախօսութիւն։
Զաւդակութիւն անել—վայ-
րախօսել։
Զաւթել—գրաւել. տիրանալ
ուրիշի սեփականութեան։
Զեպլել—անպատուել։
Զերդամրի—ներքնատուն։
Զըրխ—զրահ։
Զը՛րթ—ծաղրական բացական-
չութիւն (օր. զը՛րթ, ո՛նց
չէ՝ էս բանը կը մարսես)։
Զըռ—բոլորովին. գլխովին (օր.
էս տանձը զըռ խակ ա)։
Զիան—վնաս։ Զիան անել—վը-
նաս կրել. տուժել։
Զիբիլ—աղբ. կեղտոտութիւն։
Զիբիլ մարդ—անպէտք, փա-
լաս մարդ։
Զիզիկ—յախճապակու կտոր.
փոխ. դրամ (օր. զիզիկ չը
կայ)։
Զիլ—խիստ. սաստիկ. բարձր։
Զիլ ձէն—բարձր ձայն (օր.
նա չա՛տ զիլ ձէն ունի)։
Զլել—ձայնը բարձրացնել (օր.
լա՛ւ ես ձէնդ զլէ)։

Զմնդորել—նախատել. յանդի-
մանել։
Զմռսա-դուշ—գիշակեր թըռ-
չունի մի տեսակը։
Զնգլակ, Զնգռակ—փոքրիկ
ողկոյզ. ճիռ։
Զնդան—սալ (դարբնոցի)։
Զնուղ—խնձորի տեսակ։
Զնջիլ—շղթայ։ Ոտները զնջիլ
դնել—շղթայել։
Զնջլել—շղթայակապ անել։
Զոխ—աղաջրի մէջ պահուած
բանջար։
Զովզ—ուրախութիւն. քէֆ։
Զու քաշել—հեռուից վազելով
յարձակուել.
Զուխր բերել—սարսափ ձգել
(օր. սա՛զ աշխարքը զուխր
ա բերէ)։
Զուլալ—վճիտ (օր. աղբուրը
էնքա՛մ զուլալ էր, էնքա՛մ
զուլալ, որ ասեղը գյօլի
մէջը՝ տակին կ'էրևար)։
Զուլում—պատուհաս. դժբախ-
տութիւն։ Զուլում բերել
մէկի գլուխը—մէկին փոր-
ձանքի մէջ գցել։
Զուռնա—փող. անարդական
խօսք։ Զուռնա ածել—փող
հարկանել. փոխ. լալ։
Զուռնաչի—փող հարկանող։
Զռալ—էշի ձայն հանել (օր.
էշը զռաց)։
Զռոց—էշի զռոց։ Զռոցը
դնել—փոխ. սաստիկ լալ

(օր. էլի զառցը գրե՞ց)։
Զրինգ—առույգ. կայտառ. ամրակազմ (օր. զրինգ մարդ)։
Զրից—զրույց։ Զրից անել—զրուցել։
Զօլ—շերտ։ Զօլ-զօլ—շերտաւոր։
Զօռ—ույժ. զօրութիւն։ Զօռ անել—ստիպել։ Զօռով գլուխ, Զօռ զօռնայ—ուժով. ստիպելով։
Զօռել—յաղթել։
Զօռով—ուժեղ. քաջ. (օր. զօռով մարդ). ստիպելով. ուժով (օր. զօռով բան չինի)։
Զօրել—մեղկանալ (օր. ձեռս չի զօրում՝ սպանեմ)։
Զօրանալ—մեծանալ. աճել (օր. զօրա՛նաս, որդի, զօրա՛նաս)։
Զօրբայ—ուժեղ. պզդեցիկ (օր. նա զօ՛րբայ մարդ ա)։

# Է

Էգ—էգ. իգական սեռի անհաս։
Էգնափողէք—ննջեցեալի այգը։ Էգնափողէք անել—ննջեցեալի այգը կատարել։
Էգուց—վաղը (օր. բսօրուայ բանը էգուց մի՛ գցի—առած)։
Էգուցուայ—վաղուայ։
Էդ—այդ։
Էդթավուր—այդպիսի։
Էդքան—այդքան։
Էթալ—գնալ. ծախսուել (օր. տան վրէն շա՛տ ծախս ա էթում)։ Իլիմ իլիմ էթալ—անվերադառնալի կերպով գնալ, կորչել։ Էթալդ ըլնի՝ գալդ չ՛ըլնի (անէծք)։
Էլ ա—զոնէ. (օր. դու էլ ա միտըս գցէիր)։
Էլի—էւ. դարձեալ։
Էլլիկ—համայնք։
Էլըմով—զգուշութեամբ։
Էլօղլի—օտար։
Էծ (յոգ. իծաներ)—այծ։ Իծաները գալ, Իծաները բռնել—զժուլթինը բռնել, սկսել։ Իծաներ ունի—տարօրինակ մարդ է։
Էհախբար—վարկ. երախտիք։ Էհախբարը կորցնել—վարկը գցել։
Էն—այն։
Էնգլխէն—առաջուց. սկզբից. Առաւօտը էն գլխէն—արշա-

լուսի հետ։
Էնթավուր—այնպիսի։
Էնքամ—այնքան (օր. էնքա՜մ սիրուն, էնքա՜մ նաշխուն, որ չ'ուտես, չը խմես, չը հագնես, չը մաշես՝ հէնց նրա գլուխ ջամալին թամաշ անես, հայիլ-մայիլ մնաս, բերնիդ թուքը ծլծլալէն էթայ...)։
Էշ—էշ։ Ի'շի քուռակ—փոխ. կոպիտ. տգէտ. յիմար։ Էշ կարել—փոխ. շուարած մնալ։ Աղօթած էշ—փոխ. շուարած, մոլորած մարդ։ Էլի իրա էշն ա քշում—յամառ է. դարձեալ իր ասածն է պնդում։ Էշ նիննիլը մի ամօթ, վէ գալը՝ էրկու (առած)։
Էշխ—եռանդ. փափագ. սէր։
Էշխով—եռանդոտ. գործունեայ։
Էս—այս։
Էսթավուր—այսպիսի։
Էսքամ—այսքան։
Էտել, Էտ անել—խաղողի որթերի աւելորդ ճիւղերը կտրատել (գարնանը)։
Էտոց—կեռ դանակ, որով ծառերի ճիւղերը կտրատում են։
Էտուր—էտ անող մշակ։
Էր—քարայր. քարանձաւ։
Էրազ—երազ։ Էրազ տեսնալ—երազել։
Էրեխայ—երեխայ։ Էրեխայ էրեխայ խօսալ—երեխայի պէս խօսել. դատարկաբանել։
Էրեխավարի—երեխայի պէս։
Էրեխութիւն—երեխայութիւն (օր. է՛լի էրեխութիւնդ միտդ ընկաւ)։
Էրել—այրել. փոխ. սիրտը խոցոտել (օր. չես գիտայ՝ նա ինձ է՛րել ա, է՛րէ)։
Էրի—կենդանիների առաջի ոտների ազդրի մասը։
Էրինջ—երինջ։
Էրկաթ—երկաթ. Էրկաթը տաք տաք կը ծեծեն (առած)։
Էրկու—երկու։ Էրկու-երեսանի—կեղծաւոր։ Էրկու-ոննանի—երկոտանի։
Էրկուփոգխ—յղի։
Էրկուփոգանալ—յղանալ։
Էրնէկ—երանի։ Էրնէկ տալ—երանի տալ։
Էրնջանուկ—բանջարեղէն։
Էրոցք—ջերմ։ Էրոցքս բռնեց—ջերմս սկսեց։
Էրուել—այրուել։ Էրուել-փոթթուել, Էրուել-խորովուել—բոլորովին այրուել։
Էրք—իրաւունք։ Էրք բանացնել—իրաւունք բանեցնել։
Էրևալ—երևալ։
Էփ—եփ։ Էփը գալ—սկսել եփել (օր. կերակրի էփն էկաւ)։ Եօ նրան էփած կը

ճանանչեմ—նրան չատ լաւ եմ ճանաչում։

Էփել—եփել։

Էփեջայ—բաւականին։

# Ը

Ըլնել (էլայ, էլար և այլն)—լինել։ Չ՚ըլնի մ չ՚իմանամ—չըլինի թէ։

Ընդէ—այնտեղ։ (Ընդիան—այնտեղից։ Ընդերանք—այնտեղերը)։

Ընենց—այնպէս։ (Ընենցով—այնպիսով)։

Ընկեր—ընկեր։

Ընկերանալ—ընկերանալ. ընկեր դառնալ։

Ընկնաւոր—նուաղկոտ. ընկնցիկ (հիւանդ)։

Ընկնաւորել—նուաղել։

Ընկնել—վայր ընկնել. սկսել (օր. հունձն ընկել ա. վար ու ցանքը ընկել ա. կռիւն ընկել ա մեր քուչէն)։ Մնի եննուցն ընկնել—մէկին հետամուտ լինել։

Ընչանք, Ընչում—մինչև։

Ըռեխ—երախ. բերան։

Ըռխել—բերանն առնել։

Ըսենց—այսպէս։ (Ըսենցով—այսպիսով)։

Ըսկի—բոլորովին։

Ըստէ—այստեղ։ (Ըստիան—այստեղից։ Ըստերանք—այս տեղերը)։

Ըտկել—զտել. մաքրել։

Ըսօր—այսօր։

Ըսօրուայ—այսօրուայ։

Ըտենց—այդպէս։ (Ըտենցով—այդպիսով)։

Ըտէ—այդտեղ։ (Ըտիան—այդ տեղից։ Ըտերանք—այդտեղերը)։

# Թ

Թարախայ—թերթ։

Թարառուկ—անպէտք. զզուելի։

Թարլամեխ—ամենամեծ մեխ։

Թարուն—խումբ. բազմութիւն։ Թարուն-թարուն—խումբ խումբ։

Թագալ—դարձ կալ:

Թագալել—դարձ կալել:

Թագուջակ—մարդերի աւելորդ խառերը հանելու գործիք:

Թագարէք—պատրաստութիւն: Թագարէք անել—պատրաստութիւն տեսնել:

Թազայ—նոր:

Թազադան—նորից:

Թազի—որսորդական շուն (բարակ):

Թաթ—արջի թաթ:

Թաթալաբաղ—խառնեբայ. սասխօս: Թաթալաբաղութիւն անել—խառնել. սուտ խօսել:

Թաթախում—Ջրօրհնեաց և Զատկի թաթախման գիշեր:

Թաթաշոր—մանկան ձեռքերը փաթաթելու շոր՝ օրօրոցում քուն գնելու ժամանակ:

Թաթման—ձեռնոց:

Թաթխել—թաթախել:

Թալ տալ—խառնել. հետքը կորցնել:

Թալահ—բախտ: Թալահը բանել—բախտ ունենալ.

Թալան—աւար. կողոպուտ: Ալան-թալան—կողոպտումն:

Թալանել—աւարել. կողոպտել:

Թալաք—որոգայթ: Թալաք սարքել—որոգայթ պատրաստել: Մէկին թալաք գալ—փախ. խաբել մէկին:

Թախտ—գահ. աթոռ:

Թակ—մէս կամ լուացք թակելու փայտ:

Թահր—կերպ. տեսակ: Մի թահր—մի տեսակ:

Թաղ—գիւղամասն. քաղաքամասն. կամար. ձմերուկի, սեխի կամ վարունկի ճիւղաւորութիւնը (օր. ձմերկի թաղ. սեխի թաղ. խիարի թաղ): Խիարը թաղ ա բըշում—վարունկի թուփը սկըսում է մեծանալ:

Թաղադ—ոյժ. զօրութիւն: Թաղադից ընկնել—ուժից ընկնել:

Թաղել—հորել. հողով ծածկել (օր. մեռել թաղել. ջիգին թաղել):

Թաղկել—մաղերը սանրելիս խճճուել:

Թաղկուճ—սանրելու ժամանակ թափուած մաղերը:

Թամահ—ցանկութիւն: Թամահ անել—ցանկութիւն ունենալ. լայեաղ անել մի բանի:

Թամահքեար—ագահ. ընչաքէր:

Թամաշայ—հանդէս. տեսարան: Թամաշայ անել, Թամաշ անել—նայել. հանդիսատես լինել:

Թամամ—յատուկ անուն կանանց.

Թամամ—լրիւ:

Թամմել—լրանալ:

Թամարզու—կարօտ մի բանի: Արզու թամարզու—չտես. մի

բանի կարօտ.

Թամբալ—ծոյլ:

Թամբալութիւն—ծուլութիւն:

Թամբահ—պատուէր: Թամբահ անել—պատուիրել. յանձնարարել:

Թամզացնել—մաքրել. սրբել:

Թամուզ—մաքուր:

Թայ—ընկեր. հատ (օր. մաշկի թայ. խուրջնի թայ).

Թայդաշ—ընկերակից. հասակակից:

Թայթի—շտապով: Թայթի եմ—շտապում եմ:

Թանխայ—սուտ խոստումն: Թանխայ տալ—սուտ յոյսեր տալ մէկին:

Թառ—փայտէ երկար ձող, որի վերայ հաւերը գիշեր ժամանակ հանգստանում են. երաժշտական գործիք. սայլի երկայնութեամբ երկու կողմից ձգուած փայտերը: Թառժաժ անել—անհանգիստ անել. տանջել՝ ինչպէս հաւին թառի վերայ (օր. ինչ ես թառժաժ անում, չես թողում մի հալալ քնեմ):

Թառլան, Թառլան ղուշ—բազէ. փոխ. գեղեցկուհի:

Թառօ—Անթառամ (յատ. ան. կանանց):

Թասակ—արախչին. փոքրիկ գլխարկ:

Թասիր—պատուաճանաչութիւն: Մէկի թասիրը քաշել—մէկի կողմն անցնել, պաշտպանել:

Թավլայ—գոմ ձիերի, էշերի համար:

Թավլաչի—գոմապան:

Թավուր—կերպ. տեսակ: Թավուր թավուր—տեսակ տեսակ:

Թավր—խաղի ժամանակ եթէ մանուկներից մէկը որ և է զեղծում է գործում, միւսները բողոքում են, ասելով՝ «էս թավր չի», այսինքն անկանոն է:

Թարաշ—կողոպուտ: Թարաշ անել—կողոպտել:

Թարաքեամայ—թուրքի մի ցեղ, որ գլխաւորապէս պարապում է խաշնարածութեամբ. փոխ. կոշտ. կոպիտ (օր. թարաքեամայ մարդ):

Թարգ անել, Թարգը տալ—ձեռք վերցնել. հրաժարուել մի բանից (օր. գինու թարգը տուեց):

Թարէք—գիւղական տների պատերի վերայ շինուած առանձին տեղ՝ զանազան մանր-մունր բաներ դարսելու համար:

Թարխուն—թարխուն (բոյս):

Թարս—հակառակ:

Թարսուել—հակառակել:

Թարփ—ձկան որոգայթ գե-

տերի մէջ։ Թարփ դնել—սրտդայթ պատրաստել։

Թարք—գաւակ։ Թարքը քաշել—գաւակն առնել մէկին՝ ձիու վերայ նստած ժամանակ (օր. ձին նի էլաւ, նրան քաշեց թարքը՝ հմյլայ)։

Թաւայ—փոքրիկ կաթսայ երկայն կոթով (օր. ձուն դրեց թաւէն՝ խաշեց)։

Թաւալել, Թաւալ տալ—գլորուել գետնի վերայ (օր. էշը աղբի միջին թաւալ ա տալի)։

Թափան—փորոտի։ Թափան-փոտր—փորոտիք։

Թափաւութ—զանազանութիւն։ Թափաւութ անել—զանազանութիւն անել։

Թափել—թափել. տանել դէն ածել (օր. էս ամանի ջուրը տար թափա). վայր ընկնել (օր. բարով տալու բաշտան՝ ծառի խնձորները քօմայ թափեց գետինը. ամանիքը բոսէ, ընդէ գեննին թափուած են)։

Թափչրմիշ անել—պահ տալ. յանձնարարել։

Թափշակ—բահի այն մասը, որի վերայ յենում են ոտով փորելու ժամանակ։

Թաք, Թաքիլան, Թաքըլի—միայն թէ։

Թաքբար անել—կրկնուել (օր. հիւանդութիւնը էլի թաքբար արեց)։

Թարօ—Թադուհի (յատ. ան. կան.)։

Թերուել—փետել. փետրահան անել։

Թել—թել։ Թել ու դերձան ա դառէ—սաստիկ նիհարել է։

Թելկալ—ուշաթափ լինել (օր. սովածութիւնից սիրտս թելկաում ա). սաստիկ ցանկանալ. բաղձալ։

Թեր—չորացրած կանաչեղէն, որ պահում են ձմեռը կերակրի մէջ գցելու համար (օր. թերը չորացրեց՝ ածեց տոպրակը)։

Թերէփ—կիսաեփ։

Թերթել—թարթել արտեանունքը։

Թերթեանունք—արտեանունք։

Թերխաշ—կիսաեփ (օր. թերխաշ ձու)։

Թերմացք—ջրի կամ կերակրի մնացորդ (օր. քու թերմացքը ո՞վ կը խմի)։

Թերմուն—գինով և զանազան քաղցրեղէններով պատրաստած ըմպելիք։

Թէզ—շուտ։ Թէզ անել—շտապել. շուտ անել։

Թէզհասնուկ—խաղողի տեսակ։

Թէզով—շուտով։

Թէժ—բորբոքուած (օր. թէժ կրակ). փոխ. բարկացկոտ։

Թըժացնել—բորբոքել կրակը։

Թըյուկ—բանջարեղէն։

Թէկուզ—մինչև անգամ. որ. թէ որ. (օր. ամբարները լիքը ցորեն ա, թէկուզ տասը տարի էլ սով ըլնի՝ նրա այնումը չի։ Թէկուզ գլխին թուր ու սուր հագցնես, չընքովը օձ փաթթես՝ սատծիցը եդ չի դառնայ)։

Թէղ—ցորենը կալում յարդի հետ խառը ժողոված։

Թէչի—թել մաննելու գործիք։

Թէշտ—չոր լուանալու ամանն։

Թէփ—ալիւրից մնացած տականքը՝ մաղելուց յետոյ։

Թէք ընկնել—պառկել։

Թը՛ռ—երբ ուզում են թռչուններին թռցնել նստած տեղից՝ այսպիսի բացականչութիւն են գործ ածում։

Թըրպպել—ուշաթափ լինել. թուլանալ։

Թի, Թիակ—թի. հող դէն ածելու գործիք։

Թիլ—թոյլ. ծոյլ։ Թիլիկ-միլիկ մարդ---ծոյլ, թոյլ մարդ։

Թիլանալ—թուլանալ։

Թիթէն—անասունների չորացած աղբը, որ դաշտերից են ժողովում։

Թիմարել—ձիուն քորել, սղալել։

Թինգը տալ—յենուել։

Թիքայ—պատառ։ Թիքայ թիքայ անել—կտոր կտոր անել։ Թիքումդ դառնուի—երբ որդին մօր հետ վատ է վարվում, մայրը ասում է՝ որպէս անէծք. «որդի, թիքումդ դառնուի», այսինքն՝ քո՛ որդին էլ նոյնպէս վարուի քեզ հետ։ Մենծ թիքէն անկաջը թողալ—չարաչար սպանել։

Թլուստ—կակաղ։

Թլսորել—խաբել. համոզել։

Թխսամէր—ձագեր ունեցող հաւ։

Թխտմոր—խաչ. (թթուած խմոր, որ ալիւրը շաղախելիս խառնում են նրա հետ)։

Թմփլիկ—գէր. փափլիկ։

Թոբա անել, Թոբալամայ անել—ձեռք վերցնել. հրաժարուել. մի բան թողնել (օր. նա գինին թոբալամայ ա արէ)։

Թողալ—թողուլ։

Թոնթորալ—տրտնջալ. փընթփնթալ։

Թոնթորանք—տրտունջ։

Թոնթուփ տալ—ցատկել. թըռչկոտել։

Թոռ—թոռն։

Թուանք—հրացան։ Թուանք գցել—հրացան արձակել։ Թուանքով տալ—գնդակահար անել (օր. թուանքով տուեց՝ վէգցեց)։

Թուլթակ—սրինգ. երգող թըռչուն: Թուլթակ ածել—սրնգել:

Թուլթուն—ծխախոտ. քթախոտ (բուռնութի): Թուլթուն քաշել—ծխել. քթախոտ հոտոտել:

Թուլթունչի—ծխախոտ, քթախոտ պատրաստող:

Թուլայ—շան ձագ:

Թուլի—աւազակ. սրիկայ:

Թուլափայ—աւելորդ պատառ:

Թուխս—ձագեր ունեցող հաւ: Թուխս դնել—հաւին ձուաների վրայ նստեցնել՝ ձագեր հանելու համար:

Թուման—տասը ռուբլի:

Թունդիր—թոնիր:

Թուշ (յոգ. թշեր)—այտ:

Թուշ ընկել—պատահել. դիմաւորել:

Թուր—սուր: Սրբած թրից երես չի թէքի—սաստիկ համարձակ է:

Թուրքանալ—թուրք դառնալ. փոխ. սաստիկ բարկանալ (օր. հէրս էս որ լսեց, թուրքացաւ):

Թուրքի դույրուղ—խաղողի տեսակ:

Թուփ—վազան տերև:

Թուք—թուք: Է՛լի օխտը թուք նրա երեսը—համեմատաբար՝ էլի նա աւելի ազնիւ է: Թքածս չեմ լիզի—փոխ. խօսքիցս յետ չեմ կանգնի: Թուք ու մուր—յանդիմանութիւն. նախատինք. անարգանք: Թուք ու մուր տալ—յանդիմանել. նախատել: Թուք ու մուքը կպնել—սաստիկ վախենալ. ծարաւել (օր. ծարաւ թուք ու մուքս կպել ա): Թուքը էթալ, Թուքը վազել—հիանալ մի բանի վրայ:

Թպրտալ—տե՛ս Թրպրտալ:

Թռնել—թռչել:

Թռցնել—բաց թողնել, որ թռչի (օր. ղուշը բաց թողաց, թռցրեց). գողանալ (օր. ալուստի ընե՛նց թռցրեց, որ մարդ չը տեհաւ). կտրել (օր. թրով տուեց, գլուխը թռցրեց:

Թսկուրի—կրիա:

Թրթնջուկ—բանջարեղէն:

Թրիշայ—մատն. կտոր:

Թրիք—քակոր. կովի կամ գոմէշի աղբ:

Թրպրտալ—նոր մորթած հաւի շարժումները (օր. գխլլով տայու բաշտան՝ վեր ընկաւ, գեննին թրպրտաց):

Թրջել—թրջել. թաց անել (օր. հաց թրջեց):

Թրջուել—թաց լինել. փոխ. սաստիկ արբենալ:

Թրքել—աղբ թողնել (օր. կովը թրքեց. գոմէշը թրքեց):

Թքել—թքել. փոխ. յանդիմանել. արհամարհել (օր. թքեց հեռացաւ. Նրան ընե՛նց թքեց, մրեց, զմնդորեց, լուաց, ներկեց՝ մէջ դրեց, որ չունը ձեռիցը հաց չէր առնի):

Թև—բազուկ. թռչունի թև: Թևերս կարեց՝ թողաց—ինձ անել զրութեան մէջ դրեց: Թև տալ—յորդորել. զրգռել կռուի:

Թևաւոր—թև ունեցող. թեւաւոր:

Թեջակ—ձկան թև:

Թեքանոց—կանանց բազուկներին հագնելու չոր գործի ժամանակ:

Թօղ—փոշի: Մնի աչքերը թօղ փչել—փոխ. մէկին խաբել: Թօղ ու դուման—փոշխախառըն քամի:

Թօլ անել—գլորել:

Թօլ ընել—գլորուել:

Թօխան—կանգնած վէգի հարթ մասը:

Թօռ—ուռկան:

Թօռշի—ձկնորս (ուռկան ձգող):

Թօռշութիւն—ձկնորսութիւն:

Թօփ—գնդակ. թնդանօթ:

Թօփուն—խումբ: Թօփուն թօփուն—խումբ-խումբ: Թօփ անել—ժողովել: Թօփ ընել—ժողովուել:

Թօփ-ծաղիկ—պարտիզի ծաղիկ:

# Ժ

Ժաժ գալ—շարժուել (օր. տո՛ մի ժա՛ժ արի, է):

Ժաժ տալ—շարժել:

Ժաժկան—շարժուն:

Ժաժիկ—կանաչախառն պանիր:

Ժաժք—երկրաշարժ: Ժաժք էլաւ—երկրաշարժ եղաւ, երկիրը շարժուեց (օր. Ակոռի ժաժք էլաւ, տները քամմայ քար ու քանդ արեց, բռիշակ արեց, թողաց):

Ժահր—շարաւ. թարախ:

Ժահրոտ—շարաւոտ. թարախոտ:

Ժամ—եկեղեցի: Ո՛նչ ժամ կայ՝ ո՛նչ ժամատեղ—ոչինչ չը կայ (օր. քնիցը վեր ա կենում ունում՝ ո՛նչ ժամ

կայ, ո՛նչ ժամատեղ)։ Սոյն մաքով թուրքերէնում գործ է ածվում այս դարձուածքը. «Նեա թաս վար, նեա համամ (ո՛չ ջրի աման կայ, ո՛չ բաղնիք)։ Ժամ անել—հոգեհաց տալ։ Նրա ժամը գուս ա էկէ—նրա բանը վերջացած է։ Ժամէ-ժամք—աղջամուղջ։

Ժամարար— պատարագիչ։

Ժամհար—ժամկոչ։

Ժամոց—քահանային տրուող դրամ։ Ժամոց տալ—քահանային դրամ նուիրել։

Ժանգ—ժանգ. փոխ. դէմքի մռայլ։ Ժանգերը վեր ածել—մռայլել. տխրադէմ լինել։ Երեսիցը ժանգերը թափում ա—սաստիկ դժներես մարդ է։

Ժանգառք—վերջալոյս։ Ժանգառքը կոխել ա—արեգակը մօտ է մայր մտնելու։

Ժանգել—մռայլել։

Ժանգոտ—ժանգով ծածկուած. փոխ. դժներես. դաժան (օր. ի՜նչ ժանգոտ մարդ ա)։

Ժանգոտել—ժանգով ծածկուել։

Ժժմունք—ժժմունք. որդ։

Ժնգժնգալ—լալով թախանձել. խնդրել։

Ժում—անգամ։ Ժումէժում—երբեմնապէս։

Ժուռ—խակ խաղող։ Ժուռը մուռ ըլնես—երիտասարդ հասակում մեռնես (անէծք)։

Ժրել—առողջանալ (օր. նա լա՛ւ ժրել ա, հա՛)։

# Ի

Իբրուխ—պղնձէ ջրի աման՝ երես լուանալու համար։

Իգիթ—կտրիճ. քաջ։

Իգիթութիւն—կտրճութիւն։

Իղ—հետք։ Իղն ու թօզը կորաւ—հետքը կորաւ։ Իղն ու թօզը չ'էրեաց—հետքը չը գտնուեց։ Իղակորուստ անել—հետքը կորցնել։

Իղան—ուշիմութիւն. իմացականութիւն. յիշողութիւն։

Իղանով—ուշիմ. լաւ յիշողու-

թեան տէր։

Իղին — թոյլտուութիւն։ Իղին տանել — թոյլտուութիւն ստանալ։ Իղին տալ — թոյլատրել. դպրոցական արձակուրդ տալ։

Իլլաքի, Իլլաքիմ — մանաւանդ։

Իլլաճ — հնար։ Իլլաճ անել — հնար գտնել. փրկել. ազատել։

Իլիկ — ճախարակի այն սրածայր երկաթէ ձողը, որի վերայ թելը մանելիս փաթաթւում է. ողնաշար (օր. միջքիս իլիկը ցաւում ա)։

Իլխի — ձիանների ջոկ, երամ։

Իլղօն — մի տեսակ թուփ, որը գործ է ածվում որպէս վառելիք։

Իծապտուկ — խաղողի տեսակ։

Իմաստուն — իմաստուն. խելացի։

Իմաստունութիւն — իմաստութիւն։

Իմացնել, Իմաց տալ, Իմացում տալ — յայտնել. հաղորդել։

Ինադ — վրէժ։ Մնից ինադը հանել — մէկից վրէժխնդիր լինել։

Ինչալօն — հազիւ հազ։

Ինչքամ — ինչքան։

Ինջիմիշ — նեղութիւն։ Ինջիմիշ անել — նեղութիւն տալ։ Ինջիմիշ ըլնել — նեղանալ. ցաւ զգալ։

Ինս — կենդանի արարած (օր. ինս ես, ջինս ես, ջանավար ես՝ ձէն հանա)։ Ինս ու ջինս չը կայ — ո՛չ ոք չը կայ։

Իշանալ — փոխ. մոլորուել։

Իշաննուկ — երկայնաձև նստարան։

Իշարաթ — նշան։ Իշարաթ անել — նշանացի անել։

Իշտահ — ախորժակ (օր. իշտահը ատամի տակին ա— առած)։

Իշուկ — սա չինվում է փայտից և այնպէս յարմարեցրած է, որ կթոցը դնում են սորա վերայ և առանց ուրիշի օգնութեան՝ շալակում։

Իսան, Իսանաորդի — ադամորդի։

Իսաֆ — խիղճ. հոգի (օր. բա՛ դու ի՛սաֆ-չ՛ունես)։

Իսպաթ — ապացոյց։ Իսպաթ անել — ապացուցել։

Իստակ — մաքուր. զուտ. իսկ և իսկ։ Իստակ մարդ — մաքուր, ազնիւ մարդ։

Իստակութիւն — մաքրութիւն։

Իսակել — մաքրել. զտել։

Իսրի պուճախ — դժոխք։

Իրա — իր։ Իրան իրան — ինքն ինքն։ Իրան ու գլխու — ինքնագլուխ. առանց ուրիշի խորհրդի։ Իրար գցել — կըռուեցնել։ Իրար ընկնել —

յարմարուել իրար հետ (ընտելութեամբ)։

Իրիկնապահ—երեկոյեան ժամանակ։

Իրիկնադէմ—երեկոյեան դէմ։

Իրիկուն—երեկոյ։

Իրիկունը—երեկոյեան։

Իրիցանուկ—բանջարեղէն։

Իւխումը տալ—վերջացնել. բնաջինջ անել (օր. աղուէսը մեր հաւերի իւխումը տուեց)։

Իփրում—Եփրէմ (յատ. ան.)։

# Լ

Լագան—կոնք։

Լագլակ—արագիլ։

Լագաթ—համ. ախորժակ։ Լագաթ ունել—համ ունել. փոխ. բաւականութիւն ստանալ։ Լագաթ տալ—համ տալ. փոխ. բաւականութիւն տալ։

Լագաթին—յաւ. ճաշակով (օր. յաւ, լագաթին ուտում ա. նա ըսկի լագաթի՛ն բան կարայ չինի)։

Լալ—համր. լալ. թանկագին քարի տեսակ։

Լալանալ—համրանալ։

Լալազար—դաշտային կարմիր ծաղիկ։

Լակել—շան ջուր խմելը (օր. շունը ջուր ա լակում)։ Գործ է ածվում նաև մարդկանց վերաբերութեամբ՝ անարգական մաքով (օր. էն մարդը էնքամ գի՛նի ա լակէ, որ տակի վրէն չի կարում կաննի)։

Լակոտ—շան ձագ. գործ է ածվում նաև կանանց վերաբերութեամբ՝ անարգական մաքով (օր. ա՛յ դանջղ, լակոտներդ հաւա՛քա, կո՛րի բաթման)։ Լակոտ-լուկուտ—պստի տղայք։

Լայեաղ—վայել. արժանի։ Լայեաղ անել—արժանի համարել։

Լանգաուք—երկայն ձող, որ նպաստում է լարախաղացին լարի վրայ հաւասարակշռութիւն պահպանելու։

Լաշ—դիակ. մարմին։

Լաշակ—շղարշ։ Լա՛շակ չ՚ունես—փոխ. անամօթ ես (կնոջ)։ Սևալա՛շակ ընես—ամուսինդ՝ մեռնի (անէծք)։

Լաչառ—անամօթ (կին)։
Լապռ—մսի թաղանթ։
Լաց—լաց։ Լաց ընել—լաց լինել. դժգոհ լինել (օր. իրա բախտիցը լաց ա ընում)։ Լացով-լալաչկով—սաստիկ լացով։
Լացակընել—հեղձամղձուկ լինել։
Լաւանալ—բժշկել. առողջանալ, դէպի լաւը գնալ (օր. հիւանդը լաւացաւ, էլաւ ոնց որ մօրէն մին)։
Լաւացնել—առողջացնել։
Լաւութին—բարիք. լաւ բան (օր. լաւութին ես անում՝ կարմնջովն էլ անցկացըրա. առած)։
Լափ—չան կերակուր։ Լափ ածել մնի գլխին, Շան լափը ածել մնի գլխին—փոխ. սաստիկ անպատւել մէկին։
Լափել—լափել. ուտել. կլանել։
Լափին—ալիք։ Լափին տալ—յորձանք տալ։
Լափչի—կօշկի մի տեսակը։
Լաքայ—բիծ. արատ։
Լգամ—սանձ. երասանակ։
Լեթուել—յագենալ մի բանից։
Լեղ—լող։
Լեղանալ, Լեղ տալ—լողալ (օր. խի՞ լեղանամ, խի՞ դոդամ.-առած)։
Լեղացնել—լողացնել։
Լեղի—լեղի։ Լեղակտուր ընել, Լեղաճաք ընել, Լեղապատառ ընել, Լեղին ջուր կտրել, Լեղին պատռել, Լեղի-մեղին պատռել—սաստիկ վախենալ։ Լեղաճաք անել, Լեղապատառ անել—սաստիկ վախեցնել։
Լերդ—լեարդ։ Լերդ ու ջիգեարը էրել, փոթոթել—փոխ. սաստիկ վշտացնել։
Լերդաքաշ—ագահ։
Լերդաքաշութին—ագահութին։
Լեքուել—երես առնել. լըբըտուել։
Լէն—լայն։
Լէնացնել—լայնացնել։
Լէնանալ—լայնանալ։
Լէնատերև—լայնատերև։
Լէնաբերան—լայնբերան։
Լէնք—լայնութին։
Լժուել—տես Լեքուել։
Լիզել—լիզել։
Լիզու—լեզու (օր. լիզուդ ի՞նչ պատում ա, ասա՝ տամ)։ Լիզուն իրան անել, Լիզուն իրան քաշել, Լիզուն բունը դնել—լռել։ Թրի կտրածը կը սաղանայ լիզուի կտրածը չի սաղանայ (առած)։
Լիզուանիկ—ճարտարախօս. չարալեզու։
Լիդր—ծանրութեան չափ, որ հաւասար է 12 գրվանքին։
Լիլիֆար—պարտիզի ծաղիկ։

Լինգ—երկաթէ բիր։ Լինգ գցել—փոխ. ոտը գցելով մէկին վայր գցել։

Լինդ—(յոգ. լնդերք)—լինդ։

Լիս—լոյս։ Լիսէ լիս—մինչև լոյս։ Լիսն ու մութը չը բաժանուած—դեռ չը լուսացած։ Լիս ու ճար անել—օգնութիւն անել։ Լիս ընկնել—յայտնուել։ Լիսուէ լիս էր—մօտ էր լուսանալու։ Բաց աչքով լիսացնել—գիշերը չը քնել։

Լիսանալ—լուսանալ (օր. լիսացէ, օրը ճաշ ա դառէ)։

Լիսացնել—ամբողջ գիշեր անքուն մնալ։

Լիսին—լուսին։ Լիսինը նորել ա—նոր լուսինը երևում է։

Լիքը—գեղուն. փոխ. վշտացած (օր. սիրտս լիքն ա)։

Լլուել—սաստիկ արբենալ (օր. լա՛ւ ես լլուէ)։

Լկուել—պապանձուել։ Լկուես։ պապա՛նձուես (անէծք)։

Լխտիկ, Լխտիկ-մխտիկ—գէր. փափուկ։

Լկստուել—երես առնել։

Լղար—նիհար։

Լղարել—նիհարել։

Լղպոր—խիստ փափուկ։ Այս բառը գործադրւում է գըլխաւորապէս թռչունների լերկ ձագերի վերաբերութեամբ (օր. ծիծեռնակի ճուտը հլա լղպոր ա)։

Լնգլնգալ—իր տեղումը շարժուել (օր. ատամներս լընգլնգում ա)։

Լոլօկ—պտուղ. միրգ։

Լու—լու։ Լուն ուղտ շինել—փոքր բանը մեծացնել՝ պատմել։ Լուից ճրագու կը հանի—սաստիկ ժլատ է։

Լուանալ—լուանալ (օր. շոր լուանալ. գլուխ լուանալ). փոխ. անպատուել (օր. նրան մի լա՛ւ լուացի՝ վէ գրի)։

Լուլայ—խողովակ (օր. սոռցի լուլայ)։

Լուս տաղ—լուսաբացին երգող տաղ։

Լոք—քայլ։ Լոք տալ—ցատկել. ոտքը գցել, անցկենալ (օր. լոք տուեց, առուն անցկացաւ)։

Լպստել—լիզել (օր. մեղր ծախողը գդալը կը լպստի.—առած)։

Լպստած—երես առած. փչացած։

Լքցնել—լցնել։ Լքցնիլ տալ—լցնել տալ։

Լքլքալ—սիրտը սաստիկ բաբախել։

Լքլքոց—սրտի սաստիկ բաբախումն։

Լօղ—տես Լօձ։

Լօթի—վատնող. շռայլ։

Լօթուիկ—ագահ. շատակեր։

Լօթակութիւն—ագահութիւն. չատակերութիւն:

Լօձ—դեղձի այն տեսակը, որի կորիզը ամուր կպած է մսից:

Լօղօղ—երկայնահասակ և նիհար (օր. ի՛նչ լօղօղ մարդ-ա մեր հարևանը):

Լօպպազ—դատարկախօս. պարծենկոտ:

Լօր—թռչուն:

Լօք—լօք ձուկն (լօքօ):

# Խ

Խաբար—լուր. համբաւ: Խաբար տալ—յայտնել. իմաց տալ. գաղտնիք հաղորդել:

Խաբարբզան—բամբասասէր. լրտես. անգաղտնապահ. քսու:

Խա՛բարդայ—զգուշացի՛ր. հեռացի՛ր. ճանապարհ տո՛ւր:

Խաբել—խաբել:

Խաբուկ—խաբեբայ:

Խազինայ—գանձ. գանձարան. պարսկական բաղանիքների ջրամբար:

Խաթայ—փորձանք (օր. խաթէդ ինձանից քաշա. խի՛ ես ինձ խաթի մէջ գցում): Խաթայ բալայ—պատուհաս. փորձանք:

Խաթուն—տիկին. պատուանուն (կանանց):

Խաթէր—ի պատիւ (օր. էս բանը քու աղիդ խաթէր եմ անում):

Խաթուն բարմաղի—խաղողի տեսակ:

Խաթր—կամք. ցանկութիւն: Խաթրը կոտրել, Խաթրիցը անցկենալ—կամքը մերժել: Խաթրը պահել, Խաթրին չը դիպչել—մէկին յարգելով՝ նրա ցանկութիւնները կատարել:

Խաթրջամ—աներկմիտ: Խաթրջամ ըլնել, Խաթրջամ կենալ—աներկմիտ լինել:

Խալ—բիծ. նշան մարմնի վերայ:

Խալւոր—բծաւոր:

Խալաթ—պարգև: Խալաթ տալ—պարգև տալ. պարգևատրել:

Խալթարանդ—ստախօս. խաբեբայ:

Խալթարանդութիւն—ստախօսութիւն. խաբեբայութիւն։

Խալլի—խաղողի տեսակ։

Խալիչայ—գորգ։

Խալխ—ժողովուրդ. բազմութիւն (օր. էթում ա տեսնում՝ մի եքայ մէյդանի միջի խալխը կիտուել են)։

Խալվար—մի խալվարը հաւասար է 30 փութին։

Խալֆայ—աւագ դասատու գիւղական դպրոցներում։

Խախալ—խաբբալ. հացահատիկը քարերից մաքրելու գործիք։

Խախալել—խախալով ցորենը մաքրել։

Խակ—տհաս. փոխ. անզարգացած. անփորձ (օր. ի՛նչ խակ մարդ ա)։

Խաղկ անել, Խաղկ ու խայտառակ անել—անպատուել. յանդիմանել. անարգել։

Խամ—անփորձ. անմշակ հող։

Խամութիւն—անփորձութիւն։

Խային—չարամիտ. նենգ։

Խայնութիւն—չարամտութիւն։

Խանդակ—փոս տեղ։

Խանձել—երեսանց այրել (օր. մազերը խանձել)։ Բուղաղը խանձել—բողաղը այրել։

Խանձիլ—այրուած չորի կտոր, որ դնում են վէրքի վերայ՝ արեան առաջն առնելու համար։

Խանձուել—այրուել։

Խանմաղայ—պատուանուն հարսի կողմից իւր տալին։

Խանում—աղջիկ-պարոն։

Խանչալ—դաշոյն։ Խանչալից քարը վէ՛ չի ընկնի—բան չես կորցնի։

Խաշ—տաւարի կամ ոչխարի ոտներից և փորոտիքից պատրաստած կերակուր. թըթխմոր։

Խաշել—եփել (օր. ձու խաշել. միս խաշել). այրել (օր. արեը մարդի խաշում ա, էրում, փաթոթում՝ թողում)։

Խաշիլ—ալիւրից եփած կերակուր, որ ուտում են իւղով։

Խաշլամայ—եփած միս։

Խաշու—արգանակ. մսաջուր։ Խաշուդ բերանս չի՛ էրէ—քեզանից ոչ մի բարիք չեմ տեսել։

Խաշուել—եփուիլ. այրուիլ։

Խառաղ—հիւսն։

Խառաղութիւն—հիւսնութիւն։

Խառնել—խառնել. խանգարել. արգելք լինել։

Խառնշտորել—կրկին խառնել. շփոթել. տակն ու վրա անել։

Խաս—նուրբ. ազնիւ. զուտ. իսկական. անխառն։

Խասիաթ—բնաւորութիւն։ Խասիաթ չ'ունի—բնաւորու-

թիւն չ'ունի։ Խույ ու խասիաթ—բնաւորութիւն։

Խասաքի—ապօրինի կին. սիրուհի։

Խարջ—ծախս. հարկ։

Խարջլղ—ծախսելու փող։ Ջէբխարջլղ—գրպանի ծախսելու փող։

Խար—որդ, որ գլխաւորապէս վարդենու վրայ է գոյանում։

Խարարայ—աւերակ։

Խարաբ անել—փչացնել։

Խարաբ լինել—փչանալ։

Խարջու հաւող—խաղողի տեսակ։

Խարտ—դանակ սրելու քար։

Խաւիծ—խաշլի տեսակ կերակուր՝ ծննդականներին ուտեցնելու համար։

Խաքայ—ածուխի մանրուք։

Խելի—քիչ։ Մ'խելի—մի քիչ։

Խելք—խելք. խելացիութիւն։ Խելքի բուն—իմաստուն. խելացի։ Խելքը գլուխը գալ, Խելքի գալ—ուղղուել. խելօքանալ (օր. Նրան տանում են գցում փորը, բալի ընդէ խելքը գլուխը գայ)։ Խելքի բերել—ուղղել. խելօքացնել։ Խելքը բան ա կտրում, Խելքը մի բանի հասնում ա—մի բան հասկանում է։ Խելքով-քեամալով—խելացի. ընդունակ։ Խելքը հացի հեննայ ուտել—յիմարանալ։ Խելքին զօռ տալ—այնպիսի բաների մասին մտածել, որ իւր մտաւոր ուժերից վեր են։ Խելքը գլխիցը թռնել—յիմարանալ. հիանալ մի բանի վրայ։ Խելքը տանել, Խելքը գլխիցը տանել, Խելք ու քեամալը տանել—խելքամաղ անել. ապշեցնել. հիացնել. զարմացնել։ Խելքը մննել—հասկանալ։ Խելքամաղ լինել, Խելքն էթալ—հիանալ. ապշել (օր. ընե՞նց ամարաթ շինեց, որ տեսնողի խելքն էթում էր)։ Խելքըհան անել—խելքից հանել. մոլորեցնել։

Խելօք—խելացի։

Խեղտել—տես Հեղտել։

Խեմ—մաղի կամ խախալի շրջանակ։

Խեցատ—խեցի. խեցատ. կոտրած ամանի կտոր։

Խեց ընկնել—պտուղը նոր սկսել հասնել (օր. ծիրանը խեց ա ընկէ)։

Խէյրաթ—բարուք։ Խէյրաթ տեհնալ—բարուք համարել։

Խէյրաթխանայ—անկելանոց։

Խէչապղէր—խաչեղբայր։

Խէր—օգուտ. վաստակ։ Բերանըդ խէր բաց արա—օգտակար բաներ խօսիր։ Խէր տալ—օգուտ տալ։

Խըրթ—բոլորովին. իսպառ օր. ջուրը խըրթ կտրուեց)։

Խթուել—խրուել օր. ոտս ցեխը խթուեց)։

Խթման գշեր—Զատկի և Ջրօրհնեաց թաթախման գիշեր։

Խժալժի—պատճենաւոր բամբակը դրսի կողմից մաքրելու գործիք։

Խժռել—մանր կտրտել. փշրել. փոխ. հարստութիւնը վատնել։

Խժռուել—փշրուել։

Խի՞—ինչո՞ւ։

Խիալ—միտք. կարծիք. կասկած։ Խիալ տանել—կասկածել։

Խիալբազ—կասկածոտ։

Խիար—վարունգ։

Խիղան—ընտանիք. որդիք։

Խիղանամէր—զաւակամայր։

Խին—կերակրին համ տալու հիւթ։

Խլթէխլթ—լիքը (օր. ժամը խլթէխլթ լիքն ա խալխով)։

Խլթխլթալ—եռալ։

Խլթխլթոց—եռալը։

Խլշկոտացնել—ականջները սրել, ուշադրութեամբ ականջ դնել (օր. ի՞նչ ես անկաջներդ խլշկոտացնում)։

Խլպլտալ—խլրտել ձկների։

Խլպլտան—խլրտող։

Խղճմտանք—խիղճ։

Խղճմտանքով—բարեխիղճ (օր. խղճմտանքով մարդ)։

Խճճել—խառնել։

Խճճուած—խառնուած (օր. թելը խճճուած ա. բաններս խճճուած ա)։

Խմել—ըմպել. արբենալ (օր. էգ ո՞րդէ ես ըտենց խմէ, ոտից, ձեռից ընկէ, լլուէ՝ մնացէ)։

Խմած—արբեցած։

Խնամաքար—հին ժամանակներում թագաւորների արքունիքում, որահի մէջ, մի ահագին տափարակ քար էր դրուած, որի վերայ գալիս, նստում էին հարսնախօսութեան եկող մարդիկ։ Այդ քարը կոչվում էր խնամաքար։

Խնթխնթ—քթի մէջ խօսող։

Խնկան-ծաղիկ—դաշտային ծաղիկ։

Խնոցի—իւղ շինելու գործիք։

Խնձորածաղիկ—դաշտային խոտ։

Խնձորի—խնձորենի ծառ)։

Խոզան, Խոզանատեղ—երկու տարի անմշակ մնացած վարելահող։

Խոզակաշի—խաղողի տեսակ. սեխի տեսակ։

Խոկալ—զզուել մի բանից, մանաւանդ կերակրից։

Խոնար—խոնարհ։

Խոնարութիւն—խոնարհութիւն։

Խոռակ—կերակուր։

Խոսրովշահի— ծիրանի տեսակ։

Խոտոց—ձկան կտոր։

Խորը—խոր. ամուր։ Խորը քնել—ամուր քնել (օր. ընե՜նց խորն ա քնում, որ ոտներիցը բռնես դէն գցես՝ չի իմանայ, հո նա՛, հո մեռելը՝ մին ա)։

Խորթ—անհարազատ։

Խորխողի—ճարպը մանր կտորած և տապակած։

Խորոված—շամփրի վերայ խորոված միս։

Խորոմ—երկու խորոմը հաւասար է մի խրձին (օր. մի խորոմ խոտ)։

Խուլասայ—մի խօսքով. ինչ և իցէ. վերջապէս. մախլաս։

Խուճուճ—գանգուր։

Խում—ումպ։

Խույփորել—սաստիկ վախենալ. սարսափել։

Խունջիկ մունջիկ անել—նազ անել։

Խուշուր, Խուշուր մուշուր—փայտի մանր կտորտանք։

Խուրմայ—արմաւ։

Խուրմի ծառ—արմաւենի։

Խուրջին—երկու աչքանի տոպրակ։

Խուփ—կափարիչ։

Խչմար—երկճիւղ փայտ՝ որթի տակ նեցուկ տալու համար։

Խջերկաթ—խաչաձև երկաթ՝ թոնրի վերայ կաթսաները դնելու համար։

Խռուակ—պատի միջի անցք, որով ջուրը անցնում է պարտէզը կամ այգին ջրելու համար։

Խռմփացնել—խռմփացնելով քնել։

Խռուկ—բանջարեղէն։

Խտիտ—գիրկ։ Խտիտն առնել—գիրկը վերցնել. գրկել։

Խտտել—գրկել։

Խրատ—խրատ (օր. էս քեզ խրա՛տ, էլ չը ցանես կտվըհա՛տ.-առած)։

Խրատել—խրատել. խրատ տալ։

Խրատուել—խրատուել. խրատ ստանալ։

Խրել—խրել. մտցնել (օր. մատը աչքը խրեց)։

Խըրուկախոտ—դաշտային խոտ։

Խրուել—խրուել մի բանի մէջ (օր. ցխի մէջ խրուեց, մնաց)։

Խրխի—կենդանիների կաշի, որ մարդիկ առաջ հագնում էին՝ կենդանիների կերպարանք ընդունելու համար։

Խրթլաուկ—շնչափող։

Խև—խելագար։

Խօնչայ—մատուցարան։

Խօշը գալ—դիր գալ։

Խօսալ—խօսել։ Պետռ պետռ խօսալ—ափեղցփեղ խօսել։ Մենծ մենծ խօսալ—մեծա-

խօսել։

**Խօսք**—խօսք. խոստում։ Նրա կշտին խօսքս էրկու չիլնի—նա իմ խօսքը անտես չի անի, չի թողնի կրկնելու։ **Խօսք տալ**—խոստանալ։ **Խօսքով ընկել**—խօսքի բռնուել. խօսակցութեան պատահել։ **Խօսքը չուանի չը գնել**—խօսքը բանի տեղ չը գնել. **Խօսքը կտուրը գցել**, **Խօսքը չօլերը գցել**—խօսակցութեան նիւթը նպատակով փոխել։ **Խօսքիցը եդ դառնալ**, **Խօսքիցը եդ կաննել**—խոստմնադրուժ լինել։ **Խօսքը գետինը գցել**—մէկի խնդիրը մերժել։ **Խօսք կապել իրար հեննայ**, **Խօսքները մին անել**—համաձայնութեան խօսք տալ իրար։ **Խօսք բաց անել**, **Խօսք գցել**—առաջինը խօսել. չարժառիթ տալ խօսելու։ **Խօսքը կապի գնել**, **Խօսքը գեննին չը մնալ**—խօսքին նշանակութիւն տալ։ **Խօսքը փէշումը կօլօլեց՝ գընաց նրան խաբար տուեց**—մէկի ասած գաղտնիքը միւսին հաղորդեց։

# Ծ

**Ծալ** (յոգ. ծալք)—շորի կամ գդակի ծալ։ Մի ծալը պակաս ա—փոխ. թեթեւամիտ է։

**Ծալքատեղ**—տեղաշորը դարսելու տեղ։

**Ծախել**—վաճառել։

**Ծախծխել**—շատ բանը վաճառել (օր. ունեցած, չ'ունեցածը ծախեց, ծախծխեց՝ ընկաւ ճամփայ)։

**Ծակ**—ծակ։ Ծակ ու ծուկերը—բոլոր ծակերը (օր. տան ծակ ու ծուկերը կալնում ա)։ Ամեն ծակ ու ծուկերը գիտայ—փոխ. ամեն տեսակ գաղտնիքներ գիտէ։

**Ծաղ**—հարսանեաց ժամանակ տուած պարգեւ հրաւիրեալների կողմից։

**Ծամել**—ծամել. ատամներով մանրացնել։

**Ծամծմել**, **Ծամծմորել**—երկար ծամել։

**Ծամուն**—մաստաք։

**Ծանդր**—ծանր. դժուար։ Ծանդրը ու թեթեւ անել—խոր-

նել. խորհրդակցել. կշռադատել։

Ծանդրած—յղի։ Այս խօսքը գործ է ածվում բացառապէս կենդանիների վերաբերութեամբ (օր. մեր կովը ծանդրած ա)։

Ծանդրութիւն—ծանրութիւն. դժուարութիւն։

Ծառկուտուտ—Թռչուն։

Ծարաւ—ծարաւ։ Ծարաւը կոտրել—ծարաւը յագեցնել։ Ծարաւ կը տանի աղբուըը՝ եդ կը բերի—խորամանկ է. Ծարաւ թուք ու մուքը կըպել ա—սաստիկ ծարաւ է։

Ծարաւնալ, Ծարաւել—ծարաւել։

Ծափ—ծափ։ Ծափ տալ—ծափ հարկանել։ Ծափ ու ծիծաղ անել—անչափ ուրախանալ։

Ծաքարի ծաղիկ—պարտիզի ծաղիկ։

Ծեղ—չիղ։

Ծեր—ծեր. ծերունի։

Ծերութիւն—ծերութիւն։

Ծերտ—քակոր. թռչունների աղբ։

Ծէր—ծայր. վախճան։ Ծէրը ծէրին անջախ ա հասցնում—հազիւ է կառավարւում։

Ծէփ—պատի սրուածք։

Ծէփել—ցեխով կամ գաջով պատը սրել. փոխ. խփել. հարուածել։

Ծէք—արշալոյս։ Սուրբ ծէքին, Սուրբ ծէքի հեննայ—արշալուսին (օր. առաւօտը սուրբ ծէքի հեննայ վէ կացաւ գնաց)։

Ծէքել—ծագել (օր. արևը նոր ա ծէքէ)։

Ծիծ—ստին։ Մօր ծիծ կըտրող—փոխ. ճարպիկ. աչքաբաց։ Հարիր մարդի ծիծ ա տալի—մի բանի համար ամենքին էլ յուսադրում է՝ խաբելու նպատակով։ Թուանքի ծիծ—հրացանի այն մասը, ուր դրվում է պիստօնը։ Ծիծ տալ—երեխային կաթ տալ։

Ծիծաղ—ծիծաղ։ Ծիծաղը երեսին—ուրախ. զուարթադէմ։

Ծիծաղալ—ծիծաղել։

Ծիծեռ—փոքրիկ կեռ երկաթ թեշու ծայրին, որից թելը կապում են մանելիս։

Ծիտ—ճնճղուկ։

Ծիրանի—ծիրաններ։

Ծլանք—ծուէնք։

Ծլել—բողբոջներ արձակել. բուսնել։

Ծլծլալ—թափուել (օր. ջուրը վերեցը ծլծլում ա)։

Ծլկուել—դուրս սպրդել. անհետանալ. փախչել։

Ծլուլ—քթից հոսած ջուրը

(օր. քնթի ծլուլը թափում ա)։

Ծլունգ ընել—ցատկել։

Ծլվլալ—թռչունների երգելը։

Ծլվլոց—թռչունների երգը։

Ծծել—կաթը ծծել. հիւթը ծըծել։

Ծկթել—թռչունների ձուից նոր դուրս գալը. փոխ. գործ է ածվում նաև բոյսերի վերաբերութեամբ (օր. ծառը նոր ա ծկթէ)։

Ծղան—ճղոտած հաստ փայտեր։

Ծղծամ—ակամայից ծամելը։ Ծղծամ տալ—ակամայից ծամել։

Ծղնօտատեղ—նոր հնձած արտատեղ։

Ծղրտալ—ճիչ արձակել։

Ծղրտոց—ճիչ։

Ծղօն—ծղօտ։

Ծնդկան—ծննդական։

Ծուար—ձկների բուն։ Ծուար անել—ձկների միատեղ ժողովելը (օր. ձկները քարերի տակին ծուար են արէ)։

Ծուլ ընել, Ծուլ ծուլ ընել—տեղից վեր թռչել. ցատկել (օր. ձուկը ծուլ էլաւ, էլ եդ ընկաւ ջուրը)։

Ծուծ—հիւթ։

Ծունդր—ծունր։ Ծունդր դընել—ծունր դնել։

Ծպտալ—ձայն հանել։

Ծպտուն—ձայն. շշուկ։ Չէն ծպտուն հանել—տես Ծպտալ։

Ծվալ—ճչալ։

Ծվոց—ճիչ. աղաղակ։

Ծափ լիզու—դաշտային խոտ։

Ծրտել—ծրտել (օր. հաւը ծրտեց)։

Ծրափ-պրափ—փուչ. դատարկ (օր. ծրափ-պրափ բաների եննուց մի ընկնի)։

Ծրտոտ—աղտոտ. անմաքուր (օր. էն ծրտո՛տին մտիկ արա, նա՛ էլ մարդի չի հաւանում)։

Ծօր տալ—երգելիս կամ խօսելիս ձայնը երկարեցնել. (մեղրը ծօր ա տալի)։

## Կ

Կաթ—կաթ (օր. կովի կաթ). կաթիլ (օր. էն աղջիկը մի կաթ մըրին ա էլէ, կաթացէ սիրտս)։ Կաթ կաթ—կաթիլ

կաթիլ (օր. անձրևը կաթ կաթ գալիս ա)։

Կաթալ—կաթել (օր. մեր կըտուրը կաթում ա). փոխ. վայր ընկնել (օր. տանձը ծառիցը կաթաց)։

Կաթացնել—վայր ձգել. փոխ. գնդակահար անել։

Կաթնով—կաթնապուր։

Կալ—ցորեն կասելու տեղ. հնձանի այն հարթ տարածութինը, ուր խաղողը ճըմլում են։

Կալմէջ անել—շրջապատել. չորս կողմից ճանապարհը փակել (օր. չորս դհիցը նրան կալմէջ արին՝ կալան)։

Կալնել—կալնուլ. խփել. ծածկել (օր. ծակը դայիմ կալաւ. գնա՛ սեղուն կա՛լ)։

Կալնուել—բռնուել. խփուել (օր. ծակը կալնուել ա)։

Կախան—պահունի խաղողի կամ շուջուխի շարան (ձըմռան համար)։

Կախանել, Կախան անել—խաղողի շարաններ պատրաստել։

Կախանատուն, Կախանանոց—մառան, ուր կախաններ են պահում։

Կախ տալ, Կախ անել—քարշ անել (օր. ոտները կախ արեց կամ կախ տուեց թունդիրը). խեղդել։

Կախ ընել—իջնել. ցածրանալ (օր. կախ էլաւ փորը). խեղդուել։

Կախէթի հաւող—խաղողի տեսակ։

Կակղացնել—փափկացնել։

Կակող—փափուկ։

Կամ—կամն. ցորեն կասելու գործիք։ Կամ անել, Կամ քշել—ցորեն կասել։

Կամակատար—կամք, ցանկութին կատարող։

Կամապաշտ—յամառ. իր ասածի։

Կամապաշտութին—յամառութին։

Կայենք—կարողութին. հարստութին։

Կանանչ—կանաչ։

Կանանչել—կանաչել. աճել. մեծանալ (օր. կանա՛նչես, ո՛րդի, կանա՛նչես.-օրհնութին)։

Կանաչկենի—խաղողի տեսակ։

Կաննացնել—կանգնեցնել։

Կաննել—կանգնել։

Կաշի—կաշի։ Կաշիդ դարախանումը կը ճանանչեմ—քեզ լաւ եմ ճանաչում։ Կաշուսը չի սթրում—համգիստ չի մնում (օր. էս բանը որ գլուխ չը գայ՝ ո՛նց կարայ կաշուսը սթրի)։ Կաշուիցը դուս գալ—սաստիկ տանջուել, չարչարուել։

Կապայ—վերնազգեստ։

Կապարի դոխ, Կապարի լուլ—աղաջրի մէջ պահելու բանջարներ։

Կապել—կապել։ Կարմիրը կապել—պատկել. փոխ. վրէժխնդիր լինել. սպանել (օր. ես նրա կարմիրը կը կապեմ)։

Կապկպել, Կապկպօրել—մի քանի տեղից կապել (օր. նրան կապկպեցին՝ տարան)։

Կապնուել—պայմանաւորուել (օր. քանի տարով կապնուենք)։

Կապոտել—շատերին կապել (օր. նրանց կապոտեցին՝ տարան)։

Կապոց—շորի մէջ պահած բան։

Կապտել—կապոյտ գոյն ստանալ։

Կասել—կասել։

Կասենաս—կարծես թէ։

Կատար—Կատերինէ (յատ. ան. կան.)։

Կատար ծաղիկ—պարտիզի ծաղիկ։

Կատեպան—այգեպան։

Կատեպանութիւն—այգեպանութիւն։

Կատիկ—կոկորդ։

Կատու—կատու։ Կատու դառնալ—փոխ. խեղճանալ (օր. նրան որ տեհաւ՝ կատու դառաւ, ձէնը կտրեց)։ Մէջները սև կատու ա անցկացէ—կռուել են, թշնամացել են իրար հետ։ Փոխանը կատու ընկաւ—սաստիկ վախեցաւ. շփոթուեց. մոլորուեց։

Կարմիր քիշմիշի—խաղողի տեսակ։

Կարմրատակել, Կարմրել—ամօթից կարմրել։

Կարմունջ—կամուրջ։ Կարմունջ կապել—կամուրջ շինել։

Կարօ—Կարապետ (յատ. ան.)։

Կարօտ—կարօտ։ Արօտ-կարօտ—չ’տես. կարօտ մի բանի։ Կարօտն առնել—փափագին հասնել։

Կարօտել—կարօտիլ. կարօտանալ (օր. ես նրան շա՜տ եմ կարօտէ)։

Կաւաս—ջրաբերան։

Կաքաւ—կաքաւ. (երգող թռչուն)։ Կաքաւաերիշ էր ուզում էթայ, ագռաւաերիշն էլ մտիցն ընկաւ (առած)։ Տե՛ս ո՞նց ա կաքաւի նման ման գալի—տես ի՜նչ գեղեցիկ քայլուածք ունի։

Կաքաւակռիւ—կաքաւների մըրցումն։

Կենալ—մնալ. ապրել։

Կեղտ—աղտեղութիւն. փոխ. արատ (օր. վրէն կեղտ կայ)։

Կեղտոտ, Կեղտոտ-մնջոտ—աղտոտ. անմաքուր։

Կեմ—խուրձ կապելու խոտէ

կապ։

Կենդ—ոչ-զույգ։ Մի կենդ—մի հատիկ։ Կենդ կենդ—հատ հատ։

Կենդապար—պարի մի տեսակ, որ առանձին առանձին են պարում։

Կեսառ—սկեսրայր։

Կեսուր—սկեսուր։

Կերցաւ—ուտիչ ցաւ։

Կզանալ—գլուխը կորացնել։

Կէսք—կէս։ Կէսքն ընկնել—մինչև կէսը հասնել (օր. ջուալը կէսքն ա ընկէ)։

Կիսագին—կիսագնի։

Կիսաջան—կիսակենդան։

Կիտել—ժողովել։

Կիտուել—ժողովվել։

Կիտուկ—կոյտ։ Կիտուկ կիտուկ—կոյտ կոյտ։

Կիրակուր—կերակուր։ Կիրակուրը էփել—փոխ. ծեծել. վրէժխնդիր լինել մէկից։

Կլափին անել—քաղցածութիւնից բերանը բաց ու խուփ անել (ջրից նոր հանած ձկան նման)։

Կլաւոց—տես Մլաւոց։

Կլեկ—անագ։

Կլեկել—անագով ծածկել, սրել։ Մնի գլուխը կլեկել—մէկին խաբել։

Կլեպ—կեղև (օր. ձմերկի, խիարի կլեպ)։

Կլխկոնձի տալ, Կլխկոնձի անել—գլխի վերայ գլորուել, շրջուել։

Կլկլացնել—գեղգեղել. ձայնը բարձրացնել (օր. ընե՛նց հաղ ա տուում, կլկլացնում, որ մարդի քէ՛ֆ ա բերում)։

Կլմբօզ—թթու դրած ճակնդեղ։

Կլպել—կեղևը հանել (օր. խիարը կլպել)։

Կլօճ—բաղարջ։

Կծան—կծող. փոխ. խորամանկ (օր. նա շա՛տ կծանն ա)։

Կծել—կծել. փոխ. խօսքով վիրաւորել։

Կծղել—հացահատիկի հնձելու ժամանակն անցնել (օր. ցորենը կծղել ա)։

Կծուել—կծու դառնալ. կըծուել։

Կճեպ—կեղև (օր. ձուի կճեպ)։

Կճուճ—պտուկ. խոր ընկած կլոր աման։

Կճպել—կեղևը հանել (օր. ձուն կճպել)։

Կմկմալ—կակազելով խօսել։

Կմկմոց—կակազելով խօսելը։

Կնիկ—կին։

Կնջեռ—խաղողը ճմլելուց յետոյ մնացած մասերը (ճաճայ)։

Կշտանալ—յագենալ։

Կշտել—շորերը վեր քաշել (օր. շորերը կշտեց, ջուրն անց կացաւ). ծառերի աւելորդ

ճիւղերը կտրատել (օր. ծառը կշտել)։

Կշտին—մօտը։ Կշտովն անցկենալ—մօտովը անցնել։

Կշտում—յագենալը (օր. ինչքամ ուտում ա՝ էլի նրան կշտում չը կայ)։

Կոթուռնջ—խաղողի տեսակ։

Կոխ պրծնել—գօտեմարտել։

Կոխել—խրել. մէջը դնել։

Կոկոմ—կոկոն։

Կոկուել—զուգուել. զարդարուել։

Կողակ—ձկան մի տեսակը, որ գլխաւորապէս Սևանայ լճում է որսւում։

Կողք—կող։

Կողքավեր—յամառ։

Կողքավերութիւն—յամառութիւն։

Կողքին—մօտը. կից։

Կոնդ—անդամալոյծ. բլուր։

Կոնձկոնձալ—կաղկանձել. ծեծից կամ ցաւից շան ձայն հանելը (օր. շունը կոնձկոնձում ա)։

Կոշտ—կարծր հողի կտոր։ Կոշտը նստել ա քարի գլուխը լաց ա ըլնում (առած)։

Կոշտել—անպատուել. յանդիմանել։

Կոռան—մեծ կենդանիների վէգ (կովի, եզան և այլն)։

Կովկիթ—կով կթելու աման։

Կոտիմ—կոտիմ (կանաչեղէն)։

Կոտր ընկնել—սնանկանալ։

Կոտրել—կոտրել. փոխ. արատաւորել (օր. նա աղջկայ անունը կոտրեց, էլ ո՛վ կ'առնի նրան)։

Կոտրուել—կոտրուել. փոխ. ամաչել. քաշուել (օր. ինձ որ տեհաւ՝ շա՜տ փիս կոտրուեց)։

Կորեկ—կորեակ։

Կորթին—կորթին (կանաչեղէն)։

Կու—տես Թրիք։

Կուդրակ—խաղողի որթի բուն։

Կուել—տես Թրքել։

Կուզ—կուզ (կենդանի)։

Կուզ—սապատ։ Կուզէ կուզ անել—գլխիկոր շրջել։ Կուզէ կուզ—գլխիկոր. կռացած։

Կուզիկ—սապատող։

Կուժ—սափոր։ Կուժն ամեն օր ջուր չի բերի (առած)։

Կուժկոտրուկ—դաշտային ծաղիկ։

Կուլ էթալ—կլանիլ (օր. առանց քեզ հացը կուլ չի էթում)։

Կուլ տալ—կլանել։

Կուլկուլ—փոքրիկ սափոր։

Կում—ումպ։ Կում անել—մի ումպ ջուր, գինի և այլն խմել։

Կունդ անել—հարստութիւնը վատնել. մէկից փող վերցնել՝ չը տալ (օր. նրա փո-

դերը լա՛ւ կունդ արիր)։

Կունդկի տալ, Կունդկի անել—տես Կլխկոնձի տալ։

Կուշտ—յագեցած։ Կուշտ ու կուռ—ցյագուրդ (օր. կուշտ ու կուռ կերայ՝ կշտացայ)։

Կուշտը—մօտը։

Կուռ—բազուկ. ձեռք։ Կուռը բռնել—ձեռքը բռնել։

Կուռիկ—ջրաղացպանի փայտէ ջրաման։

Կուտ—ցորենի տականք՝ հաւերին տալու համար. այրուած հաց (օր. հացը կուտ էլաւ, թափեց թունդիրը)։

Կուտուզ—անպօչ հաւ։

Կուտաուզ - թզուկ։

Կուրծ—կուրծ (օր. կովի կուրծ)։

Կուցումել—ցրտից մատները կուչ գալ, սառչիլ։

Կչփորել—ատամների մէջերքը մնացած հացի կամ մսի կըտորը հանել, մաքրել։

Կպնել—կպչել. փառուել (օր. դէզը կպաւ)։

Կպցնել—կպցնել. վառել (օր. դէզը կպցրեց). փոխ. հարուածել (օր. ընե՞նց մի սիլլայ կպցրեց, որ տեղն ու տեղը վեր ընկաւ)։

Կռանալ—գլուխը ծռել դէպի գետին։

Կռացնել—գլուխը ծռել տալ դէպի գետին։

Կռթել—տես Հեջունել։

Կռիւ—կռիւ։ Կռուել մնի հեննայ—կռուել մէկի հետ. բարկանալ մէկի վերայ։

Կռճել—ցամաքեցնել (օր. գեօլի ջուրը կռճել)։

Կռճօն—կերակուրի, խոտի կամ յարդի մնացորդ։

Կռնատակ—կռան տակը։ Կռնատակերը ձմերուկ դնել—գովաբանել մէկին։

Կռնատ—կուռը կտրած մարդ։

Կռուժ—հաւկ։

Կռտել—մալել. գինին մի ամանից միւսը ածել՝ մաքրելու նպատակով (օր. գինին կռտել)։

Կտաւ—կտաւ։

Կտոր—մասն։ Կտոր կտոր անել—մաս մաս անել։ Կտոր կտոր գալ—նաղ անել։

Կտուահատ—կտուահատ։

Կտուց—թռչունի կտուց։

Կտտոր—ոչխարի, այծի աղբ. կտտոր։

Կտտորել—ոչխարի, այծի կըտտորելը։

Կտրել—կտրել. փոխ. գողանալ (օր. տունը կտրել. դուքանը կտրել)։

Կտրուել—կտրուել. գործ է ածվում կաթի վերաբերութեամբ, երբ նա փչանում է մերելիս (օր. կաթը կըտրուեց)։

Կացել—կացով մի բան վերցնել։

Կրակ—կրակ. փոխ. պատուհաս։ Կրակի մէջ ընկնել—փոխ. պատուհասի մէջ ընկնել (օր. կրակի մէջ եմ ընկէ, չեմ իմանում ինչ անեմ, ոնց անեմ, որ լաւ ըլնի)։ Հուր յաւիտենական—մինչև ի մահ։ Ասա հուր ու կրակը վրէդ թափի (անէծք)։ Կրակ ա թափում վրիցը, Կրակ ա, կրակ—աշխոյժ, գործունեայ մարդ է։ Կրակ անել—կրակ պատրաստել. վառել։ Կրակ տալ—այրել. հրացանը արձակել։

Կրակուել—այրուել։

Կրակքաշի—կրակախառնիչ։

Կրել—տանել. կրով լցնել։ Կրեմ գլուխդ (անէծք)։

Կրետ—իշամեղու։

Կրկին անել—կրկին հիւանդանալ. (օր. հիւանդը կրկին արեց)։

Կրնկել—չտապով գնալ։

Կօթ—մեղեխ (օր. բահի կօթ. քլնկի կօթ. ուրագի կօթ)։ Բահին կօթ գցել—բահի համար կօթ պատրաստել, գցել, ամրացնել։

Կօթել—կօթ գցել որ և է գործիքի. փոխ. անպատուել. յանդիմանել։

Կօթաուջ—տանձի, խնձորի և ուրիշ պտուղների միջուկ։

Կօլօլ—կլոր։

Կօլօլել—փաթաթել։

Կօլօլացնել—գնդաձև դարձնել։

Կօծկել, Կօծիկ դնել—կտրած ամանը կամ բաժակը կպցնել փոխ. թերութիւնը, արատը ծածկել։

Կօկլիկ—հարթ. հաւասար։

Կօկլկացնել—հարթել. հաւասարեցնել։

Կօմբալ—հաստ մահակ. դադանակ։

Կօնծել—արբենալ. խմել։

Կօնծած—արբեցած։

Կօպալ—թմբուկի փայտեր։

Կօռ—ձրի արքունական ծառայութիւն գիւղացիների կողմից։

Կօռօփ—մեծ գունդ (օր. կովը մի կօռօփ թրքեց)։

Կօտ—փայտէ ջրի աման. ցորենի չափ։

Կօրծ անել—շրջել. շուռ տալ (օր. ամանը կօրծ արեց)։

# Հ

Հագնիլ, Հագնուել—հագնուել. շորերը հագնել (օր. մեզ հագնիլ ա պէտք. շորերը հագել ա. հագնուել ա, հագ-րուէ)։

Հագցնել—մացնել. հագցնել (օր. շորերը հագցրեց. չաք-մէքը հագցրեց)։

Հազազ—ժամանակ. միջոց։

Հազ անել—սիրել. հաւանել. բաւականութիւն զգալ (օր. նա շա՜տ ա հազ անում՝ էրե-խէքանց հեննայ խօսալ, հազ անի)։

Հազիր—պատրաստ (օր. ամեն բան հազիր ա). պատրաստի (օր. հազիր բանի ա ման գալի)։ Հազիր ղո՞ւ էթաս—լա՞ւ է դո՞ւ գնաս.

Հազրել—պատրաստել։

Հաթաթայ—սպառնալիք։ Հաթաթայ տալ—սպառնալ։

Հալ—դրութիւն։ Հալ չ'ունե-նալ, Հալից ընկնել, Հալ չ'ընել վրէն, Հալ չը մնալ վրէն—ուժերը սպառուել. ծերանալ։ Հալ-հալբաթ—անպատճառ (օր. հալ-հալբաթ գաս)։

Հալբաթ—երևի. ի հարկէ։

Հալալ—հարազատ. իսկական. զուտ։ Հալալը հարամել—ա-րատաւորել (օր. լաւ կնիկը իրա մարդին մուխաննաթու-թիւն չի անի, իրա հալալը չի հարամի)։

Հալաղի—խաղողի տեսակ։

Հալել—հալել. ձուլել. փոխ. մաշել (օր. նա իմ սիրտը հալել ա, թողէ)։

Հալիոր—ծեր. ծերունի։

Հալիորել—ծերանալ։

Հալիորուկ—խաղողի տեսակ։

Հալուել—ձուլուել. փոխ. մա-շուել (օր. սիրտս հա-լուել ա)։

Հախ—վարձ. վճար. հասանե-լիք։ Հախունհախ—իրաւացի և անիրաւացի։ Հախ Աս-տու—յանուն Աստուծոյ։ Հա-խից գալ—վրէժխնդիր լի-նել. յաղթել (օր. ես նրա հախից կը գամ)։

Հակալ հակալ գցել—հալածել։

Հաղ—յօդ (օր. մանների հա-ղերը). երգ. խաղ։ Հաղ ա-սել—երգել։ Հաղ անել—խաղալ։ Հաղ ու պար—խաղ և պար (օր. դրանում ի՞նչ

կայ որ, էդ ինձ համար հաղ ու պար ա)։ Հաղով հասկացնել մինին մի բան—կողմնակի կերպով մէկին մի բան հասկացնել, յիշեցնել։

Հաղալ—խաղալ։

Համ—համ. և. միեւնոյն ժամանակ։ Համ տալ—համ տալ։ Համը հանել—զզուեցնել։ Համով-կամով ապրել—միաբան ապրել։ Համն էլ հա՛մին պտի (առած)։

Համամ—բաղանիք։

Համամչի—բաղնիսպան։

Համազ—Համասփիւռ (յատ. ան. կանանց)։

Համայ—բայց։

Համբարք—համար. հաշիւ։

Համբարքով—համարով. հաշուով։

Համբրել—համարել. հաշուել։

Համեցէք անել—հրաւիրել։

Համեմ—համեմ (կանաչեղէն)։

Համէշայ—մշտապէս։

Համբերել—սպասել. մնալ. տանել։

Համբերութիւն—համբերութիւն (օր. համբերութիւնը կեանք ա)։

Համփրել—եկեղեցու դուռը կամ որ և իցէ սրբատեղի համբուրել։

Համփօ—Համբարձում (յատ. անուն)։

Համքեար—արհեստակից. գաղափարակից։

Հայաթ—բակ. սրահ։

Հա՛յդէ—սպառնալի բացականչութիւն, երբ կամենում են մէկին տանից դուրս անել (օր. հա՛յդէ, տանիցը դո՛ւս գնա)։ Հայդէ հայդ—միայն. հէնց (օր. հա՛յդէ հայդ ընկել էր նրանց եննուցը, որ հանի)։

Հայիլ մայիլ մնալ, Հայիլ մայիլ ըլնել—հիանալ. սքանչանալ։

Հա՛յիփ—ափսո՜ս։ Հա՛յիփ նըրան—ափսո՜ս նրան։

Հայլի—հայելի։

Հայում—հէնց. միայն (օր. հէնց ուտելու հայումն ա)։

Հայվան—կենդանի. անասուն. փոխ. ագէտ. անուսում։

Հայվարայ—դատարկ. պարապ (օր. հայվարայ մարդ)։

Հանաք—կատակ։ Հանաք անել—կատակ անել։

Հանդարտ—հանգիստ. մեղմ։

Հանդարտել—հանգստանալ. մեղմանալ (օր. ծովը հանդարտեց)։

Հանդ—անդ. դաշտ։

Հանել—հանել. պոկել։ Հանիլ տալ—հանել տալ։

Հանք—շունչ. անգամ. հանք։ Մի հանքի—մի անգամից։ Հանք քաշել—շնչել։

Հաշտ—նախասենեակ։

Հաչարաշ—խաղողի տեսակ:
Հաջաթ—գործիք: Հար ու հաջաթ—զանազան գործիքներ (օր. հար ու հաջաթը հաւաքեց):
Հաջի—Մեքքա ուխտ գնացած մահմեդական:
Հասանըէկլի—սեխի տեսակ:
Հասար—պարխալ. պատ: Հասար քաշել—պարսպել:
Հասնել—հասնել մէկին (օր. հասաւ նրան). միրգը հասնել (օր. տանձը հասել ա): Հասուէ հաս էր—քիչ էր մնում հասնի:
Հասրաթ—կարօտ. փափաք: Հասրաթ մնալ—կարօտ մնալ: Հասրաթը հանել, Հասրաթն առնել—կարօտն առնել: Ցամաք հացի հասրաթ ա—չոր հացի կարօտ է: Հասրաթը սրտումս մնաց—փափաքիս չը հասայ:
Հաստապլուխ, Հաստաըէլին—անըմբռնակ. բթամիտ:
Հատ—մի հատ. սպիտակ բիծ բբի վերայ: Հատը քաղել—բբի վերայի սպիտակ բիծը հեռացնել աղօթքի զօրութեամբ:
Հատացնել—վերջացնել:
Հատիկ—հունդի հատ (օր. ցորենի հատիկ):
Հատնել—վերջանալ (օր. մեր հացը հատել ա. համբերութիւնս հատել ա):
Հարամ—վատ. անարդար (օր. կերածդ հարամ ըլնի, քընթո՛վդ դուս գայ—անէծք).
Հարամել—պղծել (օր. մուկն ընկաւ կարասը՝ հարամեց):
Հարամի—աւազակ. շատակեր:
Հարամբաշի—աւազակապետ:
Հարամզադայ—խորամանկ. սատանայ (օր. հարամզադայ մարդ):
Հա՛րայ—օգնութեան կանչողի ձայն՝ վտանգի, նեղութեան ժամանակ: Հա՛րայ կանչել, Հա՛րայ տալ—օգնութեան կանչել: Հա՛րայ-հրոց—գոչիւն. աղաղակ: Հա՛րայ-մաղաթ—օգնութեան կանչելու ձայներ:
Հարարաթ—ազդեցութիւն:
Հարաքեաթ—ոյժ. զօրութիւն: Հարաքեաթից ընկնել—ուժից ընկնել: Հարաքեաթ անել—աշխատել.
Հարել—շարժել (օր. խնոցի հարել):
Հարերգա—մշտապէս:
Հարիսայ—ցորենից պատրաստած կերակուր (կօրկօտ):
Հարիր—հարիւր:
Հարու տալ—խեթկել. պօզահարել:
Հարսանիք—պսակադրութիւն: Հարսանիք անել—պսակել: Հարսանիք ըլնել—պսակուել:

Հարսանքաւոր—հարսանեաց հիւրեր։

Հարսնակուլ—եղան ծնկոսկրը աղդրի փափուկ մսի հետ. Այդ մասին աւանդութիւն կայ, թէ մի հարս այդ մսից կամենալով կուլ տալ՝ խեղդուել է։

Հարցնել—հարցնել։ Հարց ու փորձ անել—մանրամասն հարցնել. տեղեկութիւններ ժողովել ուրիշներից մի բանի մասին։

Հարփ ու զորփ բանացնել—սպառնալ. իր ուժը ցոյց տալ. հպարտանալ։

Հաց—հաց։ Հացի հասցնել մնին—մէկին որոշ վիճակի հասցնել (օր. նա քեզ լաւ հացի կը հասցնի. Նրան էլ ապօրտանց հացին հասցրեց)։ Հացը կտամին անջախ ա հասցնում—փոխ. հաղիւ հազ ծայրը ծայրին հասցնելով ապրում է։

Հացատուն—հաց պահելու սենեակ։

Հացաւորել—հաց մատակարարել. կերակրել։

Հացթուխ—հացաթուխ։

Հաւ—հաւ։ Հաւ ու ճիւ—ընտանի թռչունների ամեն տեսակը։ Թռչուած հաւ—փոխ. խեղճ. ողորմելի։

Հաւայ—եղանակ. կլիմայ։

Հաւանգ—փոքրիկ սանդ՝ մէջը ընդեղէններ մանրելու համար։

Հաւանգ-դաստայ—սանդխոտն։

Հաւար—օգնութիւն։ Մնի հաւարին հասնել—մէկի օգնութեան հասնել։ Հաւար գցել, Հաւար ձէն տալ—օգնութեան կանչել։

Հաւանել, Հաւան կենալ—հաւանել. համակրել (օր. փլան աղջկանը չա՛տ եմ հաւանում, համայ ի՞նչ անեմ՝ ձեռս ճար չը կայ)։

Հաւաքել—ժողովել։

Հաւաքուել—ժողովվել։

Հաւէս—եռանդ. բաւականութիւն։ Հաւէսը կոտրել ա—եռանդը գնացել է։ Հաւէս ունենալ—եռանդ ունենալ։ Հաւէսի խաթէր—բաւականութեան համար։

Հաւկուր—գիշերը լաւ չը տեսնելը. գիշերը լաւ չը տեսնող։ Հաւկուր ընկնել—ճաւկուրով հիւանդանալ։

Հաւող—խաղող։

Հաւուզ—աւազան։

Հեթհեթալ—հեկեկալ։

Հեծել—հեծելազունդ։

Հեղտել—խեղդել։

Հեղախտորել—սաստիկ խեղդել։

Հեննայ—հետը. միասին։ Իրար հեննայ—իրար հետ։

Հեշտ—դիւրին։

Հեշտացնել—դիւրացնել։

Հեջուն—հեջունի համար ասեղ։

Հեջունել—մանած թելը մաքրել, բարակացնել։

Հետ—հետ. անգամ։ Հետը կասել—կասել մէկի հետ. բարկանալ մէկի վերայ։ Հետը ընկնել—թշնամանալ մէկի հետ (օր. Նա մի հետ հետս ընկել ա, ուզում ա ինձ վնասի եա գլուխս փորձանք բերի). զբաղուել մի բանով (օր. մարդ որ բանի հետ ընկնի, դարդը մտիցը կը գցի)։ Հետ ածել—հալածել։ Մի հետ—մի անգամ։

Հերս—բարկութիւն։ Հերսը գալ, Հերսը բռնել—սկսել բարկանալ։

Հերսոտ—բարկացկոտ։

Հերսոտել—բարկանալ։

Հերու—անցեալ տարի։

Հէնց—ուղղակի. այնպէս։

Հէշ—բնաւ. բոլորովին։

Հէսար—հաշիւ։ Հէսաբ տեսնալ—հաշիւ տեսնել. հաշուել։

Հէր—հայր։ Հէրանց տուն—հօր տուն (օր. հարսը գնացել ա հէրանց տունը. հարսը գնացել ա հէրանց)։

Հէրիք—բաւական։ Հէրիք ա—բաւական է։ Հէրիք անել—բաւականացնել (օր. էս հացը մեզ բսօր հէրիք կ՚անի)։

Հէքիմ—բժիշկ։ Հէքմի գցել—հիւանդին բժշկների մօտ տանել բժշկելու։

Հէքիմբաշի—բժշկապետ։

Հէքմութիւն—բժշկութիւն։

Հընտրել—ընտրել. մաքրել. զատել։

Հին—հին. վաղեմի։ Հին դարմանը քամուն չեն տայ (առած)։

Հինայ—կարմրացնելու ներկ։ Հինայ դնել—հինով ներկել։ Ոտները հինայ դնել—փոխ. մէկի տունը գնալ-գալը կտրել (օր. ոտներդ հինա՛յ եմ դրէ, էլ մեր տները չե՛ս գալի)։

Հինել—նախապատրաստութիւն տեսնել կտաւ, կարպետ և այլն գործելու ժամանակ։

Հլա—դեռ ևս։

Հմար—համար. մասին։

Հմի—այժմ։

Հմիկուայ—այժմեան։

Հնանալ—հնանալ։

Հնդստան—Հնդկաստան։

Հնձան—հնձան։

Հնձել—հնձել (օր. խոտը հընձել. ցորենը հնձել). փոխ. ժողովել (օր. Ջատկին տէրտէրները լա՛ւ են հնձում)։

Հնձուոր—հունձ անող մշակ։

Հողապահուստ—նեղ օրուայ համար պահած բան։

Հոգի—հոգի։ Հոգիս բերանս ա

էկէ—յուսահատուել եմ։ Հոգիս բերանս ա հասցրէ—յուսահատեցրել է։ Մնի հոգին հանել—մէկին տանջել. չարչարել։ Հոգըհան անել—սաստիկ տանջել։ Հոգուց, հաւատից հանել—յուսահատեցնել։

Հով—զով։ Հովը փչում ա—զով է։

Հովանալ—զովանալ։

Հովսալայ—համբերութիւն։ Էլ հովսալայ չը կայ—էլ համբերութիւն չը կայ։ Հա՛մայ հովսալայ ունես—լա՛ւ համբերութիւն ունիս։

Հունար—շնորհ. հմտութիւն։

Հունարով—շնորհալի (օր. հունարով մարդ)։

Հունդ—ունդ. սերմն։

Հունձ—հունձ։ Հունձ անել—հնձել։ Հունձն ընկել ա—հունձը սկսել է։

Հուշտ անել—խրտնեցնել։

Հուշտ ըլնել—խրտնել։

Հուշտոտիկ—խրտնող։

Հուջաթ—յամառ. հակառակ։

Հուջաթութիւն—յամառութիւն։ Հուջաթ անել—հակառակել։

Հուսել—հիւսել (օր. մազերը հուսել)։

Հուրի մալաք, հուրի փարի—յաւէրժահարսն։

Հուրհուրատել—շողշողահար գալ։

Հուրք—ջերմութիւն (օր. արևի հուրք. կրակի հուրք)։

Հուփ տալ—սեղմել. ճնշել։

Հռհռալ—բարձրաձայն ծիծաղել։

Հրաբունի—րաբունի. գիտնական։

Հրէն, հրէնիկ—ահաւանիկ։

Հրէս, հրէսիկ—ահաւասիկ։

Հրէտ, հրէտիկ—ահաւադիկ։

Հրուսկ—սապոնի կտոր։

Հօ՜, հօ՜—եզները քշելու, կանգնեցնելու եղանակ, ձայն։

Հօլաղ—դաշտային մշակութեան համար վարձած ամսական մշակ։

Հօլաղութիւն—ամսական մշակութիւն։

Հօլ—բզզան (խաղալիք)։

Հօռ—յարդ կրելու սայլ։

Հօռոմ, Հօռոմսիմ—Հռիփսիմէ։

Հօրի—գութանի ամենավերջին եզները։

Հօքիր—հօրաքույր։

# Ձ

Ձագ—գամշի ձագ։

Ձար—մազ (ձիու)։

Ձաւար—ծեծած ցորեն. Ձաւար անել—փոխ. վայրախօսել (օր. ի՛նչ ես ձաւար անում)։ Իրար եախից ձաւար հաւաքել—փոխ. իրար հետ անտեղի վիճաբանել, կռուել։

Ձեռ—ձեռք. դաստակ։ Ինձ մի ձեռով ես բռնո՞ւմ—ինձ լաւ չես ճանաչում։ Ձեռից ըրծնել—ձեռքից ազատուել։ Ձեռները ծոցումն ա մնացէ—անպաշտպան է մնացել։ Ձեռ տալ—ձեռքով կպչել մի բանի. մէկին ձեռք տալ։ Ձեռ գցել—մի բանի տիրանալ։ Մէկին ձեռ առնել—մէկին ծաղրել, խաղալիք դարձնել։ Ձեռ ու ոտից ընկնել—ուժերը պակասել. ծերանալ։ Ձեռ ու ոտը կապել—ձեռք ու ոտքը կապել։ Ձեռ չի ընկնում—չի ճարւում. չի գտնւում։ Ձեռը դատարկ, Ձեռը պակաս—աղքատ. կարօտ. զուրկ։ Մէկի ձեռը ընկնել—մէկի ձեռքը ընկնել (օր. Թէ մի նա ձե՛ռս կ'ընկնի, ես գիտամ նրա արեը մըղէ մէջ կը մնի)։ Ձեռը գագ չի ընկնում—ոչինչ չի շահում։ Ձեռը քաշել, Ձեռը վէ կալնել—մոռանալ մէկին. հրաժարուել մի բանից (օր. Հօ գլխիցս ձեռը չե՛մ քաշէ)։ Ձեռից գալ—մի բանի ընդունակութիւն ունենալ. մի բան անելու կարող լինել (օր. ի՛նչ ասես՝ նրա ձեռից կը գայ)։ Ձեռ (ձեռք) չի տայ—ձեռնտու չէ։ Ձեռ (ձեռք) քաշել—ստորագրել։

Ձեռնաքաշ—գող։

Ձեռնաքաշութիւն—գողութիւն։

Ձեռնալեղ—լոգի մի տեսակը, որ կատարւում է գլխաւորապէս ձեռքերի միջոցով։

Ձէն—ձայն։ Ձէն տալ—ձայն տալ։ Ձէն ձէնի տալ—ձայնակցել։ Ձէն-ծպտուն չը հանել—բոլորովին լռել։ Ձէն ա գալի—ձայն է լսւում։

Ձի—ձի։ Ձին ձիաւորիցը վէ կը բերի—սաստիկ համարձակ, աներկիւղ է։

Ձիաւոր—ձի նստած մարդ. հեծեալ։

Ջիակորեկ — դաշտային խոտ։

Ջին — ձիւն։ Ջինը կտրեց — ձիւնը դադարեց։ Ջին ու դալի քուլայ քուլայ։ Սև ձի՛ն դայ գլխիդ (անէծք)։ Ջի՛ն դայ գլխիդ (անէծք)։

Ջկնկուլի — ձռչուն։

Ջմերուկ — մեղրապոպ. ձմերուկ։ Ղօլթղատակերը ձմերուկ դնել — սաստիկ հպարտանալ։ Մի ձեռով էրկու ձմերուկ բռնել — միաժամանակ երկու մեծ, անկարելի գործի ձեռնարկել։

Ջողի — ձող։ Ջողու ծէրով վարդը գնչին չի հասնի — անչափ հպարտ է։

Ջուաձեղ — ձուով և իւղով պատրաստած ուտելիք։ Ջուաձեղի խաթէր թաւի կօթը կը պաչեն (առած)։

Ջուիկ ձու՛կ անել — յօշատել։

Ջուկը — ձուկն։

# Ղ

Ղարուլ — համաձայն։ Ղարուլ ըլնել — համաձայնել. ընդունել։

Ղադադայ — արգելք։ Ղադադայ անել — արգելել։

Ղադաք — կտաւ։

Ղադէգ տանեմ, Ղադէգ տանեմ — չա՛րդ տանեմ (փաղաքշական խօսք)։

Ղադմի — մշտական. մշտապէս։

Ղադր — պատիւ. յարգանք. նշանակութիւն։ Մնի ղադրը իմանալ — մէկի յարգը ճանաչել։

Ղադ — սադ։

Ղազալ — ծառի չորացած տերև։ Ղազալաթափ ըլնել — տերևաթափ լինել։

Ղազար — պատիժ. պատուհաս։ Ղազար անել — պատժել։

Ղազանփիրի — բանջարեղէն։

Ղաթի — փայծաղն։ Ղաթի ունի — փայծաղի հիւանդութիւն ունի։

Ղաթիր — ջորի։

Ղալաթա — խնձորի տեսակ։

Ղալամ — գրիչ։ Լաւ ղալամ ունի — լաւ ձեռագիր ունի։

Ղալամքեար — ճաշակով նկարած։

Ղալաթ — սխալ։ Ղալաթ անել — սխալուել։

Ղալը—կեղծ։
Ղալըութիւն—կեղծիք. նենգութիւն։
Ղալին—խիտ։
Ղալխան—վահան։
Ղալմաղալ—աղմուկ։ Ղալմաղալը գնել—սկսել աղմուկ հանել։ Ղալմաղալ անել, Ղալմաղալ գցել—աղմուկ հանել։
Ղալմաղալչի—աղմկարար։
Ղալպայ—անառակ կին։
Ղամայ—դաշոյն։ Ղամով տալ—դաշոյնով հարուածել։
Ղամբարայ—ձմերուկի տեսակ։
Ղամիշ—եղէգն։
Ղամչի—մտրակ։
Ղամչել—մտրակել։
Ղայդայ—երաժշտութեան եղանակ. ձև։ Մի ղայդով—մի ձևով. մի տեսակով։
Ղայիշ—կաշուէ գօտի։
Ղայիմ—ամուր. փոխ. ժլատ (օր. ղայիմ մարդ)։
Ղայլան—նարգիլէ. չիբուխ։
Ղայմացնել—ամրացնել։
Ղայմութիւն—ամրութիւն։
Ղայրաթ—ջանք. աշխատանք։ Ղայրաթ անել—աշխատանք գործ դնել։
Ղայրու—բացի (օր. նրանից ղայրու)։
Ղանդ—շաքարի մի տեսակը։
Ղանիմ—թշնամի։
Ղանջղ—էգ շուն. գործ է ածվում կանանց վերաբերութեամբ անարգական նշանակութեամբ (օր. բօլ ա, այ ղանջղ, լիգուդ քեզ քաշա)։
Ղաշ—թամբի գլուխ։ Ղաշի թափանչայ—մեծ ատրճանակ՝ թամբի գլխից կախելու (ձի նստելիս)։
Ղաշու—ձի մաքրելու խոզանակ։
Ղաշխայ—սպիտակ նշան կենդանիների ճակատի կամ մարմնի ուրիշ մասերի վերայ (օր. ղաշխայ քուռակ)։
Ղասաբ—մսավաճառ։ Ղասաբի դուքան—մսավաճառի խանութ։ Ղասաբութիւն անել—մսավաճառութիւն անել։
Ղասաբութիւն—մսավաճառութիւն։
Ղաստահիւանդ—սուտ հիւանդ։ Ղաստահիւանդ տալ—սուտ հիւանդանալ։
Ղաստի—գիտութեամբ. մտադրութեամբ։
Ղարալթու—ստուեր. երևոյթ։
Ղարաշի—գնչու. փոխ. աղմըկարար։
Ղարաւլել—նշանի բռնել (օր. թուանքը ղարաւլեց, տուեց՝ վէ գցեց)։
Ղարաւուլ—պահապան։ Ղարաւուլ քաշել—պահպանել. հսկել։
Ղարբանոց—ձրի հիւրանոց օ-

տարականների համար։

Ղարիբ—օտար. պանդուխտ։

Ղարբութիւն—օտարութիւն. պանդխտութիւն։

Ղաւուրմայ—եփած, աղը դրած միս. կերակուրի տեսակ։

Ղափաղ—խուփ. ծածկոց։

Ղափալթմիշ անել—կերակրով լի պղինձը դնել թոնրի վերայ եփելու։

Ղափլան—վագր։

Ղաֆազ—վանդակ։

Ղաֆիլ—յանկարծ։ Ղաֆիլ տեղը—յանկարծակի։

Ղդար—չափ։ Էն ղդար—այնչափ։

Ղըզըլբուսուն—սեխի տեսակ։

Ղըռ—քարքարոտ դաշտ։ (Վաղարշապատում մի ամբողջ գիւղամասն, իր քարքարոտ լինելու պատճառով, կոչւում է՝ ղռեր)։

Ղժվժալ—խառնաշփոթ ձայներ հանել։

Ղժվժոց—խառնաշփոթ ձայներ։

Ղիամաթ—սոսնամանիք։

Ղիժ—խէժ։

Ղիմայ—փոքրիկ կտոր։ Ղիմայ ղիմայ անել, Ղիմայ ղիմայ կտրատել—յօշատել։

Ղին—պատեան (օր. խանչալի ղին. թրի ղին)։

Ղմշել—մեղկանալ (օր. ո՞նց ղմշեցիր մարթես)։ Ղմիշ անել, Ղմիշը գալ—տես Ղմշել։

Ղնամիշ անել—անարգել. յանդիմանել (օր. նրան կանչում ա կուշտը, լա՛ւ ղնամիշ անում, ճամփու դնում)։

Ղշխրու—աղմուկ։ Ղշխրու դըցել—աղմուկ բարձրացնել։

Ղոլ—սայլի թև։

Ղոչ—խոյ։

Ղովա—հրէշ։

Ղորթ—ճշմարիտ. ուղիղ. արդար։

Ղորթել—արդարացնել։

Ղորթմանց—ճշգրիտ. իսկական։

Ղուաթ—ոյժ. զօրութիւն։

Ղուաթով—ուժեղ. քաջ։

Ղուրուր—ղաղաղ. պատեան (օր. թուանքի ղուրուր. փշտովի ղուրուր)։

Ղուզուզ—հպարտ։

Ղուզուզանալ—հպարտանալ։

Ղուզում—ոյժ. զօրութիւն։ Ղուզումից ընկնել, Ղուզումը կտրուել—ուժասպառ լինել. թուլանալ։

Ղուլթի, Ղուլթիկ—արկղ. տուփ։

Ղուլ—ծառայ. ճորտ (օր. նա սուրբ Կարապետի ղուլն ա)։

Ղուլլուղ—ծառայութիւն։ Ի՞նչ ղուլլուղ—ի՞նչ յանձնարարութիւն ունիս անելու։ Ղուլլուղ անել—ծառայել։

Ղուղ—ուղեղ։ Մնի ղուղը տանել—մէկին զզուեցնել, ձանձրացնել անտեղի խօսակցու-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
1923
имени А. Мясникяна
ԱՅ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

թխուններով:

Ղումաշ—նուրբ. սիրուն:

Ղույրուղ—Ջնիկ տատ:

Ղունգ – եղունգ: Սատանի ղունգ—լուսայի ղանդուած. քար: Ղունգ ղունգ անել—փոխ. անտեսել. խնայել (օր. ղունգ ղունգ կնիկ ա):

Ղուշ—թռչուն:

Ղուշբաղ—թռչնատէր:

Ղուրդ – գայլ (օր. գնալն էլաւ, գալը չ'էլաւ, տեսաս ղուրդ ու ղուշ կերաւ նրան, թէ ջանավարների փայ էլաւ):

Ղջի—բանջարեղէն:

Ղռայ—խակ սեխ:

Ղռալ—ագռաւի ձայն հանելը (օր. ագռաւը ղռում ա). չար գուշակութիւն անել (օր. ի՞նչ ես ագռաւի նման գըլխիս ղռում):

Ղռաւ--եղեամն: Ղռաւ գնել—եղեամն գնել (օր. էս գշեր ղռաւ ա դրէ):

Ղռվալ—աղմուկ հանել. վիճաբանել:

Ղռող—ագռաւի հանած ձայնը. փոխ. չար գուշակութիւն:

Ղռվռող, Ղըռըվըռ—աղմուկ. աղաղակ:

Ղռմաթ—վիճակ. բախտ: Ղըռմաթ ընկել—վիճակուել: Ղըռմաթ անել—վիճակել (օր. Աստօծ նրան ինձ ղռմաթ ա արէ):

Ղրխօխ—[illegible]:

Ղրաղ—ծայր. եզր. [illegible] [illegible] ա, [illegible] Ղրաղ քաշել – հեռանալ: Ղրաղը քաշել, Ղրաղ քաշուել—հեռանալ:

Ղրաղին—ծայրին. ափին (օր. ծովի ղրաղին. գետի ղրաղին. գեօլի ղրաղին):

Ղրկել – ուղարկել:

Ղրղի—բաղէ:

Ղրղըճան—մօի կռճուկ:

Ղրճացնել, Ղրճատացնել – ատամները կրճտել:

Ղրփել – ամուր քսել. (օր. ի՞նչ ես էղքամ գլուխդ ղըրփում):

Ղօլան—ձիու փորակապ: Ո՞վ ա թողում նրան ղօլան գողանայ—ո՞վ է նրան նշանակութիւն տալի.

Ղօնաղ—հիւր:

Ղօնաղլըղ—ճաշկերոյթ. հրաւէր: Ղօնաղլըղ սարքել—ճաշկերոյթ պատրաստել:

Ղօչաղ—քաջ. կարիճ:

Ղօչաղութիւն—քաջութիւն. կարճութիւն:

Ղֆիլ—կողպէք: Ղֆիլ դի՛ բերնիդ—փոխ. չափդ ճանաչիր:

Ղֆլել, Ղֆիլ գնել—կողպել. կողպէք գնել դռան վերայ:

# Ճ

ճաթ — կորեկի հաց։
ճայուեր — բուներեի վերայ իջնող մազերը (կանանց)։
ճախարակ — այլի ճախարակ։
ճամբարակ — գութանի երկայն շղթայ։
ճամփայ — ճանապարհ։ ճամփէն պահել — սպասել մէկին։ ճամփու դնել, ճամփու գցել — ճանապարհ գցել. հեռացնել. դուրս անել։
ճամփորդ — ճանապարհորդ։
ճանանչ — ծանօթ։ ճանանչը գալ — ծանօթ լինելը յիշել (օր. նա ճանանչս գալիս ա)։ ճանանչութեան տալ — ծանօթութեան տալ։
ճանանչել — ճանաչել։
ճանկ — ճանկ։ Մէկի ճանկը ընկնել — մէկի ձեռքը ընկնել։
ճաշ — ճաշ. ճաշուայ հաց. կէս օր։ Օրը ճաշ ա — կէս օր է։ ճաշքուն տալ — մինչև ճաշ քնել. երկար քնել։
ճառճառուկ — դաշտային խոտ։
ճար — հնար. դարման. օգնութեան։ ճար անել — օգնել. հնարը գանել մի բանի։ ճարը տեհնալ — հնար գանել փրկութեան (օր. գլխից ճարը տես)։ ճարը կտրուել — յուսահատիլ. փրկութեան հնար չը գանել։
ճաքացնել — ճեղքել. փոխ. բարկացնել (օր. նա մարդ ա ճաքացնում)։
ճաքել — ճեղքուել։
ճաքճքել — մի քանի տեղից ճեղքուել (օր. կարասը էրկու դհից ճաքճքել ա ու գինին տանում ա՝ չի պահում)։
ճգնել — շատ աշխատել (օր. հազար տարի ճգնես, ձեռք գալ չի ընկնի)։
ճենջ — կերակրատ ամանները լուանալուց մնացած կեղտը։
ճեսօք անել, ճեսօք չինել — խօսակցութիւնը երկարեցնել։
ճըմճըմայ — ճահճոտ տեղ։
ճըպճըպացնել — աչքերը արագ թարթափել (օր. աչքերը ճըպճըպացնում ա)։ ճըպճըպան աչքեր — արագ թարթափող աչքեր։
ճըւալ — ճչալ։
ճըւճըւալ — սաստիկ ճչալ։
ճըւոց — ճիչ։
ճըւճըւոց — սաստիկ ճիչ։

ճժլախտի—մանկական խաղի մի տեսակը։

ճիթ—ճիտ. ողնոյն։

ճիժ—շրջանաձև գիծ, որ երեխայք խաղի ժամանակ գծում են գետնի վերայ. ճիժ քաշել—շրջանաձև գծել։

ճիլ—ջիղ։ ճիլ միս—ամուր միս։

ճիլալ—խաղողի տեսակ։

ճիմ—կանաչով ծածկուած հողի կտոր։

ճինգեանայ—աղմուկ հանող. ձանձրացնող։

ճինգեանութիւն—աղմուկ հանելը։ ճինգեանութիւն անել—աղմուկ հանել։

ճիճիկ տալ—մէկի ախորժակը մի բանով շարժել՝ բայց չը տալ։

ճիպօտ—բարակ փայտ։

ճիտ—պարանոց։ ճիտը կըտրել—պարանոցը կտրել։ ճիտ անել—գրկել։

ճիւ—մարմնի որ և է անդամ։ ճիւահան անել, ճիւ ճիւ անել—մարմինը մաս մաս անել. յօշոտել։

ճլէրք—թոքախտ։ ճլէրք գըցել—թոքախտով հիւանդացնել (օր. էս աղէն մարդի ճլէրք կը գցի՝ էնքա՛մ շար Յուլիանոս, Ասու. կրակ ա)։

ճլմկոտալ—յօրանջելով մարմնի անդամները շարժել։

ճլոտ—ջղոտ. ուժեղ։

ճլորթի—ճլորթի (որով ճօճվում են)։ ճլորթի ընկնել—ճօճուել։

ճլպինդ—այն շորի կտորը, որի վերայ կանայք ճակատի ոսկիները շարում են։

ճլպատի—խաղողի տեսակ։

ճլօթ—ապտակ։

ճլօթել—ապտակել։

ճղակ—պատի ճեղքուածք։

ճղել—ճեղքել։

ճղուել—ճեղքուել. բաց լինել։

ճմրտել—ճմլել. քամել։

ճոթ—մասն. կտոր։

ճոթոել, ճոթ անել—կէս անել. ճեղքել։

ճոլոլակ ընկնել, ճոլոլակ ըլնել—կախուել մի բանից։

ճոպան—հաստ թոկ։

ճուղք—ճիւղ։

ճում անցնել—սար ծակուել (օր. սոս ճում անցաւ՝ վեր ընկաւ)։

ճուտ—թռչնաձագ. փոխ. գործ է ածվում և մարդկանց վերաբերութեամբ (օր. ճուտերդ կատա՛րուեն. ճուտերդ թո՛ւնդիրն ընկնեն.-անէծք)։

ճպոռ—բիժ։

ճպռոտ—բժոտ։

ճռճռալ—կատարուելոյ առաջ ձայն հանել (օր. փէտը ճռճռաց. սատոյը ճռճռաց՝ բերդան կտորուեց)։

ճռնչալ—ծանր բեռան տակ

յոգոց հանել։

Ճարպաշուկ—բանջարեղէն․

Ճրագ—լոյս. վառած մոմ կամ լապտեր։ Հօրնը մօր ճրագ ա—մի հատիկ զաւակ է։ Նրանից ճրագ չի կպնի—նա օգտակար մարդ չէ դառնալու (օր. հմիկուայ աղէքանցից ճրա՛գ չի կպնի)։ Ճրագը կպցնել—ճրագը վառել։ Ճրագը իրա տակ լիս չի տայ։

Ճրագվառոց—ճրագ վառելու ժամանակ։

Ճօթ—հանդերձեղէնի կտոր (մահուդ, պաստառ և այլն)։

Ճօճ—երեխային ճօճելու տեղ։ Ճօճ կապել—ճօճ պատրաստել։

Ճօնթ—քղանցք (չորի)։

# Մ

Մաղայ—ախուրժակ։ Մաղաժաժ ընել—զզուել մի բանից։ Մաղէն վեր ունել, Մաղէն տալ—ախորժակ ունենալ մի բանի (օր. մաղէս չի վեր ունում էս կերակրիցն ուտեմ)։

Մա՛ղաթ—վտանգի ենթարկուողի աղաղակ (օր. հա՛րայ, մա՛ղաթ, Ե՛կէք, հա՛սէք, սպանում են)։

Մաղաթ—Մաղաթ (յատ. անուն)։

Մաղան—հանք. մատիտ։

Մաղխա—մատակ ձի։

Մաղ—մարմնի մաղ։ Նրա մի մաղն էլ ա չի թէքուի—նրան ոչ մի վնաս չի դիպչի։ Մաղ էր մնացէ, որ քարափիցը վեր ընկնէր, մենծ թիքէն անկաջը մնար—սակաւ էր մնացել, որ ժայռից վայր ընկնէր, չարաչար մահանար։ Մաղերը բիզ բիզ ընել, Մաղերը գլխին բիզ բիզ կաննել—փոխ. սաստիկ զարմանալ։

Մաղխոտ—դաշտային խոտ։

Մաղայ—քաղցրաւենիք։

Մաթ—եփած քաղցու։

Մաթալ—յուսահատուած։ Մաթալ մնալ—յուսահատիլ. չիմանալ ինչ անել (օր. սրա ձեռին մնացել եմ մաթալ)։

Մաթ ընել—հիանալ. ապշած մնալ (օր. էս որ տեհաւ, մնաց մաթ էլած նրա երեսին մտիկ անելօն)։

Մաթլարայ—ափսէ։

Մաթոս—Մատթէոս (յատ. անուն)։

Մաթրաթ—կաւէ աման։

Մալ—ապրանք. ընտանի կենդանիներ։ Մալ ու դօվլաթ—ապրանք և հարստութիւն (օր. երայ մալ ու դօվլաթի տէր ա)։

Մալաչայ—տանձի ազնիւ տեսակը։

Մալուլ-մուշկիլ—մոլորուած։

Մալում—յայտնի. նկատելի։ Մալում անել—երևալ. նշմարուել։ Մալում ըլնել—յայտնի լինել. նկատուել։

Մախաթ—մեծ ասեղ։

Մախլաս—վերջապէս. ինչ և իցէ։

Մախլատուզ—մաղնիտ։

Մախմուր—թուլիշ։

Մախմուր-ծաղիկ—պարտիզի ծաղիկ։

Մախմրէ—թաւշեայ։

Մախսուս—դիտութեամբ. դիտմամբ։

Մահ—մահ։ Մահը տալ—մահացնել (օր. որ էս բանը չէք արէ, իմաց կացէք մահների կը տամ)։

Մահացնել—սպանել. մահացնել։

Մաղադինոս—մաղադինոս (կանաչեղէն)։

Մաղբուն—զուրկ։ Մաղբուն անել—փչացնել. վատնել։ Մաղբուն նստել մի բանից—զրկուել մի բանից (օր. մա՛ղբուն նստես ջանիցդ—անէծք)։

Մաղ—մաղ, որով ալիւր են մաղում։ Հո՛րիր մաղի հաց ա կերէ—շա՛տ հմուտ, փորձուած մարդ է։

Մաղալլաղ—գլխիվայր։ Մաղալլաղ տալ—գլխիվայր շըրջուել։

Մաղել—ալիւրը մաղի միջով անցնել, մաքրել. փոխ. բարակ անձրև գալ (օր. անձրևը մաղում ա)։

Մայա—դրամագլուխ. բաղադրութիւն, որով պանիր են մակարդում։

Մայել ըլնել—հիանալ մի բանով. զմայլել. զարմանալ։

Մայիֆ—կոյր։ Մա՛յիֆ ման գաս աշխարհի երեսին (անէծք)։

Ման—սայլի ճախարակը պըտոյտ տալու փայտ։

Ման գալ—զբօսնել. որոնել։ Կուփ կուփ ման գալ—շատպով, բայց կանոնաւոր շրջել։

Մանգաղ—մանգաղ. խոտ հընձելու գործիք։ Մանգաղ վէդնել—փոխ. մէկին նախապատրաստել մի բանի համար։

Մանգաղաթև—չղջիկ (գիշերա-

յին թուշուն)։

Մանգգիլ—իջևան. մի որոշ տարածութին։ Մանգգիլ կալնել—մի որոշ տարածութիւն անցնել, գնալ։

Մանդր—մանր։

Մանդրացնել—մանրացնել։

Մանդրունք—փշրանք։

Մանել—մանել։

Մանիշակ—մանուշակ (պար-տիզի ծաղիկ)։

Մաննահարել—մատներով գլոգ-չել մի բանի։

Մաննահէսաբ—մատնահաշիւ։

Մաշայ—ունելիք։

Մա՛շալլայ—կեցցե՛ս։

Մաշակալ—մաշիկ կարող վար-պետ։

Մաշիկ—կիսակօշիկ, որ թէ մարդիկ և թէ կանայք ան-խտիր հագնում են գիւղե-րում։ Էրկու սար մի մաշիկ գնել—փոխ. չտապեցնել. տախպել։

Մաշկել—հայ գիւղերում, ինչ-պէս յայտնի է, լաւաշ հաց են ուտում։ Մի կամ երկու ամսուայ հացը մի անգամից թխում, չորացնում և այն-պէս պահում են։ Ուտելու ժամանակ այդ հացերի վե-րայ ջուր են սրսկում, որ-պէս զի փափկանան, ապա որոշ ձևով ծալում՝ մաշ-կում և այնպէս գնում են սեղանի վերայ։

Մաջ—գութանի մաս, որով ուղղութիւն են տալիս գու-թանին։

Մաջալ—միջոց. ժամանակ. հնար։ Մաջալ տալ—սպա-սել. միջոց տալ։

Մաջայ—բազուկ։ Մա՛ջէդ կու-րուի (անէծք)։

Մաջկալ—մաճկալ։

Մասալայ—առած. ասացուած։

Մասլահաթ—զրոյց. խորհուրդ։ Մասլահաթ անել—խոր-հրդակցել։ Մասլահաթ ա-նել—զրուցել։

Մասիլ—բերք։

Մասխարայ—ծաղրածու։

Մասխարութիւն—ծաղրածու-թիւն։

Մատ—ձեռքի մատ. որթի ճիւղ։ Մատը կծել—փոխ. գլխի ընկնել. հասկանալ։ Մատը լպստելով մնալ—ձեռնունայն մնալ։ Մատին փաթթան անել—միևնոյն բանը մշտապէս պատճառ բերել։

Մատաահ—հազուագիւտ։

Մատուռ—արձան։ Մատուռ կապել—արձան կանգնել։

Մարան—Մարիամ (յատ. ան. կին.)։

Մարգ—ածու։ Մարգ կապել—ածու պատրաստել որ և է բան ցանելու համար։

Մարագ—մարագ. յարդ և խոտ պահելու տեղ:

Մարալ—եղջերու. փոխ. գեղեցկուհի (օր. էն աղջիկը մա՜րալ ա, մա՜րալ):

Մարաղ մննել—ղարան մտնել (օր. կատուն մարաղ ա մտէ):

Մարանդի—ցորեն հնձելու գործիք:

Մարգամիջի—խնձորի տեսակ:

Մարդ—մարդ. ամուսին. կրտրիճ. վեհանձն: Մարդ-մադաթ չը կայ—ոչ ոք չը կայ: Մարդի տալ—աղջկան պսակել: Մարդի էթալ, Մարդ ուզել—ամուսին գտնել՝ պսակուել (աղջկայ վերաբերութեամբ):

Մարխոչ—խնձորի տեսակ:

Մարկոս—մարգեր կապելու գործի. յատուկ անուն:

Մարկոսաւոր—մարկոսով աշխատող մշակ:

Մարմանդ—հանդարտ. մեղմ (օր. մարմանդ ջուր):

Մարջ—գրազ. գրաւ: Մարջ գալ—գրազ գալ:

Մարջան—կորալին:

Մաքեան—հայրենիք. բնավայր: Սաի մաքեան ա—սաստիկ ստախոս է:

Մաքի—էգ ոչխար:

Մաքո—Մարգարիտ (յատ. ան. կանանց):

Մեղաւոր—մեղաւոր. յանցաւոր: Մեղաւորին ո՞վ ա տուէ արքայութին—եթէ մէկը ամեն կերպ աշխատում է, բայց միշտ անյաջողութեան մէջ է գտնում՝ գործ է ածում այդ դարձուածքը:

Մեղր—մեղր:

Մեղրակենի—խնձորի տեսակ:

Մեղրի ճանճ—մեղրաճանճ: ճանճն ածի, ճիճուն կրի—ուրիշի վաստակը վատնել:

Մեղրոտել—մեղրոտ լինել (օր. իմ գլուխը մեղրոտել ա, մնաց քունը՝ եղածի):

Մեղք—մեղք. յանցանք: Մեղա՜յ գալ—շնորհ խնդրել (օր. ընկան նրա ոտները՝ մեղա՜յ էկան): Մեղքը շլինքն առնել—յանցանքը խոստովանել (օր. չունքի ձեր մեղքը շլինքներդ առաք՝ ես էլ իմ մեղքն եմ շլինքս առնում): Մեղքը գալ—մեղկանալ. խղճալ: Մեղքը վեր ունել—անխրատաբար մէկին մեղադրել մի յանցանքի մէջ:

Մենծ—մեծ: Մենծ մենծ—մեծ մեծ:

Մենծախօս—մեծախօս. պարծենկոտ:

Մենծակեր—շատակեր:

Մենծանալ—մեծանալ. աճել:

Մենծութին—մեծութին. բարձր աստիճան:

Մեռել—մեռեալ. ննջեցեալ:

էրկու մեռլի կշտով անց կենայ՝ մինը կը գողանայ-- հմուտ աւազակ է։

Մեռլատէր—ննջեցեալի ազգական։

Մեռլատուն—ննջեցեալի տուն։

Մեռլաւոր—յուղարկաւոր։

Մերան—այն մածունը, որով տաքացրած կաթը մերում, մածուն են շինում։

Մերել—կաթը մածուն շինել։

Մզել—քամել. ճմլել. սեղմել։

Մզրախ—նիզակ։

Մէկել—միւս։

Մէկ էլ—նորից. դարձեալ։

Մէհտար—ձիապան։

Մէյդան—հրապարակ։ Մէյդան հանել—հրապարակ հանել. հռչակել։

Մէյիդ—դիակ։

Մէնակ—միայնակ. միայն։

Մէնակակեր—միայնակ ուտող։

Մէշայ—անտառ։

Մէշաչի—անտառապահ։

Մէչիդ—մզկիթ. մահմեդականների աղօթատուն։

Մէջ—մէջ. միջուկ (օր. պօպօքի մէջ)։ Մէջ անել—կարել. կէս անել։

Մէջք—մէջք։

Մէջքատել—մէջքը, ողնաշարը կտրել։

Մէր—մայր։

Մէրուն—թռչունների մայր։

Մըժ—մէգ. մառախուղ։

Մթնաղշեր—մութը գիշեր (օր. ընենց մթնաղշե՛ր էր, որ մատդ մարդի աչք կոխէիր՝ չէր իմանայ)։

Մթնաժեռ—սաստիկ մութը։

Մթնով—մութը ժամանակ։

Մի—մէկ (օր. մի տուն. մի գեղ)։

Միաժում—ծոմ։ Միաժում ըլնել—ծոմ պահել։

Միալար—շարունակաբար. մըշտապէս։

Միամիտ—պարզ. միամիտ։

Միամտուել—սիրտը հանգստանալ. կասկածը փարատել։

Միթամ—իբրև թէ։

Միլլէթ—ցեղ. ազգ. տոհմ։

Միղաֆիլ—յանկարծ։

Մին—մէկ (օր. մին, էրկու, իրեք և այլն)։ Մին ու ճար—մի հատիկ դուակ.

Մինարայ—որտեղից մօլլէն ազան է տալիս։

Մինթանայ—կանանց շրջազգեստ։

Միջին—մէջը։

Միջնակ—լայն ճանապարհ այգու մէջ տեղը։ Միջնակ ախպէր—երեք եղբայրներից միջին հասակ ունեցողը։

Միս—միս։ Իրար միս ուտել—կռուել. իրար հետ թշնամանալ։ Մնի միսը բերանը տալ—մէկին սաստիկ չարչարել, կատաղեցնել։

Միտք—միտք. յիշողութիւն: Մտահան անել, Մտիցը գցել, Մտիցն ընկնել—մոռանալ: Մտին ըլնել, Միտն ըլնել—յիշել (օր. բակի մտի՞ս էր...): Մտներն էլ չէր ընկնում—նրանից մտքով էլ չէր անցնում: Մտներդ ըլնի—չը մոռանաք. յիշէք: Մտքի հեննայ ընկնել—մտասոյզ լինել: Միտն ընկնել, Միտը գցել, Միտը բերել, Միտը գալ—յիշել: Միտք անել—մտածել. խորհել: Երկէն ու բարակ միտք անել—խորը մտածել:

Մլաւել—կատուի ձայն հանելը (օր. կատուն մլաւում ա):

Մլաւան—մլաւող (օր. մլաւան կատուն մուկը չի կալնի.-առած):

Մլաւոց—կատուի մլաւոց:

Մլոլ տալ—մի բանով երկար զբաղուել:

Մխակ—Միքայէլ (յատ. ան.):

Մխակի-ծաղիկ—պարտիզի ծաղիկ:

Մխելլ—միքիչ:

Մխլու—ձուից և իւղից պատրաստած ուտելիք (եքստ):

Մկամ, Մկար—միթէ:

Մհալ—գաւառ:

Մհանայ—պատճառ. պատրուակ: Մհանայ բռնել—պատճառ բռնել:

Մհուլ—ժամանակամիջոց (օր. մի էրկու օր մհուլ ուզեց):

Մհրել—կնքել. կնիք դնել:

Մղկտալ, Մղկտահար գալ—ցաւել. կսկծալ. սաստիկ խնդրել:

Մղկտոց—կսկիծ. ցաւ:

Մղուր գալ—յանցանքը խոստովանել:

Մղրր—մութը: Մղրրը կոխել—սկսել մթնել:

Մմել—մոմ քսել (օր. թելը մմել):

Մնալ—սպասել. մնալ:

Մնել—մտնել: Նի մնել—ներս մտնել: Մէր մնել—մայր մտնել (օր. արեւը մէր մտաւ):

Մնողը—մնացածը:

Մնձրուել—այրուել (օր. չորը էրուեց, մնձրուեց):

Մողի—արու հորթ: Մողի անել—մողու պէս ջուր խմել (օր. ջրի վրէն մողի ա անում, որ խմի):

Մոլորած—շփոթուած:

Մոլորացնել—շփոթել:

Մոլորել—շփոթուել (օր. գըլխի վրէն մոլորել ա, չի իմանում ինչ անի):

Մոհրաթ—յարգանք. պատիւ:

Մովլի—միտաքսեայ նուրբ գործուածք:

Մովրով—ջրաժան. գուտառապետ:

Մութը—մթնութիւն. խաւար:

Մթնածեծ անել — մութը տեղը որ և է գործ կատարել: Մութը գետինը կոխել ա, Մութը գետինն առել ա — սկսել է մթնել:

Մուլք — կալուածք. հարստութիւն:

Մուխաննաթ — անհաւատարիմ. դաւաճան. նենգ:

Մուխաննաթութիւն — անհաւատարմութիւն. դաւաճանութիւն:

Մուխտաջ — ակնկալու. մուրացող (օր. Աստօծ էս ձեռը էն ձեռին մուխտաջ չ'անի):

Մուխսի — մահտեսի:

Մուխրիադ — ընտանի կենդանիների աղբից պատրաստած աման՝ աղբ դուրս ձգելու համար:

Մուկը — մուկն:

Մուկուչ — Մկրտիչ (յատ. ան.):

Մուհր — կնիք:

Մուղայիթ — զգոյշ: Մուղաթ կենալ, Մուղայիթ կենալ — զգոյշ լինել. պահպանել. հսկել:

Մուղարար — մշտապէս. միաչափ:

Մում — մոմ:

Մուննաթ — աղաչանք. խնդիրք: Մուննաթ անել — աղաչել. խնդրել:

Մուշամբայ — մեղրամոմի հալուածքի մէջ ձգած ու հանած կտաւ:

Մուշտուլուղ — աւետիք:

Մուռ — վրէժ: Մուռը հանել մնից — մէկից վրէժխնդիր լինել:

Մուռտառ — պիղծ:

Մուռտառել — պղծել (օր. կատուն օթախը մուռտառել ա):

Մուրաղ — ուխտ. իղձ. խընդրուածք: Մուրաղ անել — ուխտել: Մուրաղը փորումը մնաց — իղձը անկատար մընաց:

Մուրախաս — արձակ. ազատ: Մուրախաս անել — արձակել. ազատել:

Մուրուցկան — մուրացկան. աղքատ:

Մուք — մոյգ:

Մռմռալ — կսկծիլ. ցաւիլ. (օր. եարէս շա՛տ ա մռմռում. սիրտս շա՛տ ա մռմռում): Գործ է ածվում նաև շան և կատուի վերաբերութեամբ (օր. կատուն մռմռում ա, շունը՝ գռմռում):

Մռով — ջրպետ:

Մսխալի — խաղողի տեսակ:

Մսմար — ցից:

Մսուրք — մսուր. կենդանիների խոտ դնելու տեղը:

Մտքամոլոր — մտքով մոլորուած:

Մտքափոխ — արտասուզելիք ու-

նեցող ծննդական (օր. մըռքափոխ կնիկ)։

Մռքով—խելացի. ուշիմ. լաւ յիշողութեան տէր (օր. մըռքով էրեխայ)։

Մրել—յանդիմանել (օր. նրան մի լա՛ւ 'թքեց, մրեց՝ վէ դրեց)։

Մրկել—փոքր ինչ այրել (օր. շորը էրեց, մրկեց)։

Մրջիմ—մրջիւն։

Մրչովայ—ծներեկ (բոյս)։

Մքուք—գործի, որով կտաւ են գործում։

Մօթալ—մօթալ. պանրի տեսակ։

Մօլլա—մահմեդական հոգերական. փոխ. խորամանկ (օր. նա ընե՛նց մօլլէն ա, որ չեմ կարայ ասի)։

Մօյգա—պար եկող երեխայ հարսանիքի ժամանակ։

Մօնթ—աչակերտ (դպրոցի)։

Մօտ—մօտ. մերձ։

Մօտանալ, Մօտկանալ—մօտենալ։

Մօտացնել—մօտեցնել։

Մօտիկ—մօտ. մտերիմ։

Մօրի-հաւող—խաղողի տեսակ։

Մօքիր—մօրաքոյր։

# Յ

Յարգեոր—պարկեշտ. ամօթխած. (օր. յարգեոր հարս)։

Յիգի—այգի։

Յիգաթաղ—այգին թաղելու ժամանակը։

Յիգատէր—այգետէր։

Յուշ, Յուշք—ուշ. գիտակցութիւն. ճանաչողութիւն. յիշողութիւն։ Յուշքի գալ—ուշքի գալ։ Յուշքի բերել—ուշքի բերել։ Յուշը էթալ, Յուշագնայ ընել—ուշագնաց լինել։ Յուշ չ'ընել վրէն—ուշը գնալ. ճանաչողութիւնից զրկուել։ Յուշը վրէն ընել, Յուշը վրէն պահել—ուշ ունենալ. զգոյշ լինել. հսկել։

Յուս—ուս (օր. մի շորի միջի փաթթում ա, գնում յուսին, տանում տուն)։

Յուսաշոր—ուսի վերայ ձգելու շոր՝ ջրի գնալիս։

Յուսել—ուսի վերայ վերցնել (օր. կուժը յուսեց՝ գնաց ջուրը)։

# Ն

Նա՛—նա։ (Նրա կամ ընդրա — նրա։ Ընդոնք—նրանք։ Ընդոնց—նրանց)։

Նմբադայ—մի գուցէ. կարելի է։

Նաբաթ—շաքարապատիկ։

Նազ—նազելը. նազ անելը։ Նազ անել, նազ ծախել, նազ ու դուզ անել—նազել. նազ անել։

Նազիր—թագաւորի նախարար. պալատական։

Նալ—պայտ։

Նալլաթ—անէծք (օր. նա՛լլաթ չար սատանին)։

Նալբանդ—պայտող վարպետ։

Նալնել—պայտել (օր. ձին նալնել)։

Նալչայ—կօշկի կամ մաշկի տակը կպցրած երկաթը։

Նախիր—նախիր. տաւարի երամ։

Նախրաթող—նախիրը թողնելու ժամանակը. աշնան Ցխենակայ պահոց շաբաթ։

Նախրչի—նախրորդ։

Նաղդ—պատրաստի. առձեռն։

Նաղդել—ծախել. ապառել։

Նաղլ—առակ. պատմութիւն։ Նաղլ անել—պատմել. ասել։

Նամ—խոնաւ։

Նամարդ—ամարդի։

Նամարդութիւն—ամարդութիւն։

Նամութիւն—խոնաւութիւն։ Նամը քաշել—խոնաւութիւնը անցնել. փոխ. պաշտպանել (օր. աղէն հօր նամն ա քաշում)։

Նանօ—Նունէ (յատ. ան. կան.)։

Նաշ—դագաղ։

Նաշխ—գոյնզգոյն նկար։

Նաշխել—գոյնզգոյն նկարել։

Նաշխուն—գոյնզգոյն. գեղեցիկ. սիրուն. (յատուկ անուն կանանց)։

Նանի—մայրիկ։

Նանիկ—օրօր։ Նանիկ անել—օրօրել. ննջել (մանկանց)։

Նաչար—անճար. խեղճ. թշուառ։

Նառ—արու ուղտ։

Նարգիզ—պարտիզի ծաղիկ։

Նարգիլան—սանդուղք (շարժուն)։

Նարին—շատ մանր (օր. պօպօքի պճեղը լաւ նարին ծեծում ա)։

Նաւ—նաւ. փայտէ խողովակ, որով ջրաղացի ջուրը հո-

սում է։

Նաւղան—փայտէ խողովակ՝ տանիքի անձրևի ջուրը հոսելու համար։

Նափաս—շունչ։ Նափաս քաշել—շնչել. փոխ. հանգստանալ։

Նեխուր—նեխուր (կանաչեղէն)։

Նեղատերև—նեղատերև։

Նեռ—նեռն. փոխ. դաժան. չար։

Նետ գնել—մաղով գուշակութիւն անել։

Նետուանեղ—նետ ու անեղ։

Ներկել—ներկել. գոյն տալ. փոխ. անպատուել (օր. Նըրան մի լաւ, քու հաւան կացած ներկեցի վէ գրի)։

Ներքև—ցածր։

Ներքևանալ—ցածրանալ։

Ներսև—ներս։ Ներսև մննել—ներս մանել։

Նըխտից ընկնել—ուժասպառ լինել քաղցածութիւնից։

Նիգեարան—երկմիտ։ Նիգեարան ըննել—երկմտել։

Նիգօ—Նիկողայոս (յատ. ան.)։

Նիլնել, Նի ըլնել—բարձրանալ. հեծնել (օր. նի էլաւ ծառը. ձին նիլաւ)։

Նի տալ—ներս լցնել (օր. լաւ ես նի տալի)։

Նհախ—իզուր։ Նհախ տեղը—իզուր տեղը (օր. Նհախ տեղը գլխներդ շաւի մէջ կը գցէք)։

Նհար—նախաճաշ։ Նհար անել—նախաճաշել։

Նդդալ, Ննջալ—նիրհել։

Նշան—նշան. ամուսնութեան նշան։ Նշան տալ—նշանի տալ. ամուսնութեան նշանարան տալ։ Նշան գնել—պատրաստել նշանի տալու. աղջկան, աղային նշան գնել։

Նշանդրէք—նշանադրութիւն։

Նորել—նորոգել (օր. լախինը նորել ա)։

Նուալ—թոյլ ձայնով լալ։

Նուաղել—ուշաթափ լինել։

Նուբար—հաղուագիւտ պտուղ. նոր դուրս եկած միրգ։ Նուբար անել—նոր դուրս եկած միրգ ուտել։

Նութ—ոյժ. զօրութիւն։ Վրէս նութ չը կայ—ուժասպառ եմ եղած։

Նունջ—նինջ. նիրհ։

Նուոց—թոյլ ձայնով լաց։

Նստել—նստել։

Նստատել—գործ է ածվում շատերի վերաբերութեամբ։ (Բերենք դոյնանման մի քանի օրինակներ.—կարել՝ կըտրատել. ջարդել՝ ջարդատել. մորթել՝ մորթատել. պոկել՝ պոկատել. հանել՝ հանատել. կտորել՝ կտորատել. թափել՝ թափատել. սրբել՝ սրբատել. կապել՝

կապոտել. չարել՝ չարոտել. քնել՝ քնոտել. կծել՝ կծոտել և այլն)։
Նորաթ—հերթ։
Նորաթով—հերթով։
Նօթեր—դէմքի կնճիռներ։ Նօթերը կիտել—յօնքերը կախել. դէմքը մռայլել։
Նօթոտ—կնճռադէմ (օր. նօթոտ մարդ)։
Նոխտայ—սանձ՝ առանց բերանի երկաթի։
Նոխտակոթ—նոխտի պարան։
Նօքար—ծառայ։
Նօքարութիւն—ծառայութիւն։ Նօքարութիւն անել—ծառայել։

## Ճ

Ճարաշ—դրամ, որ հանդիսականները, հարսանիքի ժամանակ, նուիրում են երաժիշտներին։ Ճարաշ տալ—հանդիսականների դրամ նուիրելը։
Ճալախ—սեխի տեսակ։
Ճալակ—ծանրութիւն. բեռն (օր. մի ճալակ ցախ)։ Ճալակը տալ մնի—բեռը դնել մէկի մէջքի վերայ (օր. ի՞նչ կ՚ընի էս ցախը ճալակս տաս, քեզ վմրձք ա)։
Ճալակել—որ և է բեռը ճալակել (օր. ցախը ճալակեց՝ տարաւ)։
Ճահ—տակոս. վառատակ։
Ճահացնել—ճահեցնել (օր. փողը ճահացրեց)։
Ճաննաբաթ—ծիրանի տեսակ։
Ճաղ—ցօղ։
Ճաղ տալ—սփռել. տարածել. սրսկել։
Ճաղ անցնիլ—ցրուիլ։
Ճաղ էթալ—մեսաքսի որդը երբ սկսում է ոստայն գործել, ասում են՝ ճիճուն շաղ ա էրում։
Ճաղակօլօլ—ցօղախոտն։
Ճաղդել—չաղախել։
Ճամաղան—մամակալ։
Ճամամ—սեխի ամենափոքր տեսակը, որ շատ դուրեկան հոտ ունի. փոխ. կլոր. փոքրիկ (օր. քեաֆուր աղջկայ ճամամ ծծերը մարդի քէֆ ին բերում, խելքամաղ անում, թողում)։

Ճայի, Ճըհի—հինգ կոպէկանոց ռուսական դրամ։

Ճանթել—խայթել (օր. օձը ճանթեց)։

Ճանց տալ—ցոյց տալ. սպառնական խօսք (օր. եաւա՛շ, ես նրան ճա՛նց կը տամ)։

Ճաշտամարը թեքել—վզակոթին խփել. ծեծել։

Ճառ—գրպարտութիւն. փորձանք (օր. էս մարդը տեղն ու տեղը ճա՛ռ ա, ճա՛ռ)։ Ճառ գցել մնի վրէն—գրպարտել մէկին (օր. ինքն արել ա, նրա վրէն ա ճառ գցում)։ Ճառի մէջ գցել գլուխը—իրեն փորձանքի մէջ գցել։ Ճառի մէջ ընկնել—փորձանքի մէջ ընկնել։ Ո՛նչ ճառդ եմ ուզում, ո՛նչ խէրդ—քեզ հետ ո՛չ մի յարաբերութիւն չեմ ուզում ունենալ։

Ճառոտ—գրպարտող. կռուարար. (օր. ճառոտ մարդ)։

Ճատակեր—շատ ուտող։

Ճատախօս—շատ խօսող։

Ճատարար—մազի մի տեսակը՝ մեծ ծակոտիներով։

Ճատուոր—շատ. բազմաթիւ (օր. նրանք ճատուոր են)։

Ճար—մրգի շար՝ ձմեռուայ համար պահելու (օր. հաւողի շար. շուջուխի շար)։

Ճափաղ—երեսի գեղեցկութիւն, լոյս։

Ճեղջ—կալում ժողոված մաքուր ցորենի կոյտ։

Ճերեփ—փայտից շինած մեծ գդալ՝ կերակուր ածելու համար։

Ճէմք—սեամք. դռան տակ։

Ճէն—հարուստ. բարեկից։ Ճէ՛ն կենաս—Աստուած տանդ լիութի՛ւն տայ։

Ճէնլիկ—մարդարմնակ տեղ։

Ճէնքս—շինութիւն. շինուածք (օր. գնաց տեհաւ լա՛ւ լաւ ճէնքսեր, լա՛ւ լաւ ամարաթներ)։ Ճէնքով, ճնորքով—ճնորհալի. գեղեցիկ. դուրեկան։

Ճէպել—հարուածել։

Ճէս—մէգ (օր. մկան ճէսը ջաղացին օգուտ ա. տուած)։

Ճէք—ոտերի արանքը։ Ճէք տալ—մի բանի վերայով ոտը գցել անցնել (օր. ճէք տուեց, տռուն անցկացաւ էն գիհը)։

Ճըյոբի—սալորենի (ծառ)։

Ճըհաղ—վկայ. ջրաղացում աղալու վարձ (ցորեն, ալիւր)։ Ճըհադութիւն տալ—վկայութիւն տալ։ Ճըհադ ըլնել—վկայ լինել։

Ճըհար—քաղաք. գիւղաքաղաք։

Ճըշկլացնել—շփոթել. խանգարել։

Ճըշմել—մոլորուել. ուշաթափ լինել։

Ձըշկլունել — սխալուել. շփոթուել. գլուխը կորցնել։
Ձըռնել — միզել։
Ձըվլի — սրինգ։
Ձիրէք — փայտից շինած փոքրիկ խողովակ, որ ծառայում է երեխաներին օրօրոցի մէջ միզելու համար։ Արու և էգ մանուկների ձիրէքը զանազան կազմութիւն ունին։
Ձիգակ — ստոյգ. ճիշտ։
Ձիգակութիւն — ճշտութիւն։
Ձիլայ — կատաւ. բրնձով արգանակ։
Ձիճուկ — կտրուած կամ մերած կաթի ջրային մասը։
Ձինել — անել. սարքել. դուռը կողպել (օր. դուռը դայիմ շինեց, թողաց գնաց։
Ձիշ — շամփուր. միս խորովելու երկաթ։
Ձիշակ — մատաղ. նորահաս (օր. ձիշակ խիար)։
Ձիվան — սուգ։ Սուգ ու ձիվան անել — սուգ անել։
Ձիվար — մոլորուած։
Ձիրայ — քաղցու։
Ձիրախանայ — ներքնատուն. նըկուղ։
Ձիրշիրի — խաղողի տեսակ։
Ձիւ — գալար սառ։
Ձլթայ — բարձի երես։
Ձլինք — պարանոց։ Ձլինքդ կոտրուի (անէծք)։ Մէնի ձլինքին դնել — մէկին պարտաւոր անել (օր. էս բանը քու ձլինքին եմ դնում, ինչ ըլնի՝ պտի անես. ինձ ակլեր տաս, ցախ բերիլը՝ իմ ձլինքին)։ Ձլինքն առնել — յանձն առնել. համաձայնել։
Ձլաղել — պապակել։
Ձղպիկ — անկոթ դանակ։
Ձնթակել — քնել (այս խօսքը անարգական նշանակութիւն ունի)։
Ձնորք — շնորհ։
Ձնորքով — շնորհալի։
Ձողք — ճառագայթ. ստուեր։
Ձողշողալ, Ձողշողահար գալ — փայլել։
Ձոռ — թանից պատրաստած հասարակ պանիր։ Ձոռը հանել — մի բանի համը հանել. մի բան ծայրայեղութեան հասցնել (օր. լա՛ւ, բօ՛լ ա, դու էլ չ՛ափը հանեցիր)։
Ձոր — չոր. հագուստ։ Ձորերը հանել, Ձորահան ըլնել — մերկանալ։ Ձորահան անել — մերկացնել. փոխ. կատաղեցնել։ Ձո՛ր տու՝ շնորք տամ (առած)։
Ձորորալ սիգաճեմել։
Ձորվայ — բրնձով եփած արգանակի մի տեսակը։
Ձուաք — ստուեր. շողք։ Նրա ձուաքի տակին են ապրում — նրա հովանաւորութեան տակ են ապրում։

Ճուլալ—հաստարակ կար։

Ճուլալել—իրարից հեռու հեռու կարել։

Ճուլալուել—բարձրանալ մի բանի վերայ (օր. շուլալուեց ծառը)։

Ճուն—շուն։ Ճմտ շունն ա—սաստիկ խորամանկ է։ Ճան ու գլխի փայ անել—վատնել. փչացնել (օր. իրա հարստութիւնը շան ու գլխի փայ արեց)։ Ճան ծիծ կերած—շան կաթով սնուած. գարշելի. անպիտան (հայհոյանք)։ Ճանսատակ անել—շան պէս սատկեցնել։ Ճանսատակ ըլնել—շան նման սատկել։

Ճուշան—դաշտային ծաղիկ։

Ճուշան—յատ. անուն կանանց։

Ճուշտակ—թասանման շոր, որ կանայք, գլուխ կապելիս, դնում են բկալաչակի տակից)։

Ճուշօ—Ճուշանիկ (յատ. ան. կան.)։

Ճուշա—ապակի. սրուակ։ Սիրտը շուշա ա, որ կոտրուեց՝ էլ չի սաղանայ (առած)։

Ճուջուխ—քաղցուից պատրաստած միրգ (շուշխէլ)։

Ճուռ տալ—շրջել. միւս կողմը դարձնել (օր. թուղթը շո՛ւռ տու, արասին կո՛ւլ տու)։

Ճուռ գալ—շրջել. շրջուիլ։

Ճվացնել—սուլել։

Ճվոց—սուլումն։

Ճրէշ—բանջարեղէն. շոհ(թուղթ կպցնելու շաղախ)։

Ճփլթոց, Ճփլթու—անակնկալ ոտնաձայն. շշուկ։

Ճփօթ—շաղախ. ալիւրից և իւղից պատրաստած կերակուր։

Ճօղեր—Ճօղակաթ (յատ. ան. կանանց)։

Ճօղոմքոր—մարդելոյգ. դրաւիչ. ուրիշին հաճոյանալու յատկութիւն ունեցող (օր. շօղոմքոր գառը երկու մէր ա ծծէ.—առած)։

Ճօք—արևի սաստիկ տաքութիւն։ Ճօքու պատուել, լերդ ու ջիգեարը էրուել—սաստիկ շօքից նեղանալ։ ճնջոթան շոք—սաստիկ շոք։

Ճօքել—տաքութիւնից նեղանալ։

# Ո

Ո՛նչ—ո՛չ (օր. ո՛նչ կը հաղամ, ո՛նչ էլ կաղամ.-առած)։

Ոնց—ինչպէս։

Ոչխարախոտ—դաշտային խոտ։

Ոչխարատեղ—տես Բէր։

Ոռաէն—ձիու կամ իշի պօչի տակով ձգած կաշին, որը կարուած է թամբից։

Ոռք—տակ (օր. կժի ոռք. պուլկի ոռք. բդդի ոռք. թուանքի ոռք)։

Ոսկէ—ոսկեայ։

Ոսկի—ոսկի։

Ոսկի—յատուկ ան. կանանց։

Ոսպ—ոսպ։

Ոսպախաշու—ոսպնաթան։

Ոտ—ոտ։ Թուանքի ոտ—հրացանի ոտ։ Ջաղացի ոտ—ջրաղացի ոտ։ Ոտի տակ—ներքան։ Ոտատակ տալ—ոտնակոխ անել։ Ոտի տակ տալ—շրջել. անցնել. (օր. սա՛ղ աշխարքը ոտի տակ ա տուէ՝ նրան չի գտէ)։ Ոտը չէմքից դուս դնել—դուրս գնալ տանից։ Ոտով, գլխով կորչել—անհետ կորչել։ Ոտ ու գլուխը դրտել—ոտից մինչև գլուխ զարդարուել. փոխ. զանակոծ անել։ Ոտիս տակը կրակ ա վառւում—սաստիկ շտապում եմ։ Ոտի՛ դ տակին մեռնեմ—փաղաքշական խօսք։ Ոտքը խաղացնել—երթևեկութիւնը դադարել։ Ոտներն ընկնել—գետնատարած մէկի ոտների տակ փռուել՝ մի բան խնդրելու համար։ Ոտները քաշել—կօշիկները քաշել, հանել։ Ոտը գերեզմանումը—զառամեալ. ծերունի։ Ոտը ծանրը ա—յղի է։ Ոտը կտրել մի տեղան—դադարել մի տեղ գնալ-գալուց։ Ես քու ոտի տակի փողն եմ—ես անարժան եմ քեզ։

Ոտաբոբիկ—բոկոտն։

Ոտաւոր—հետևակ։

Ոտնալեղ—լողի մի տեսակը, երբ միայն ոտներով են լողում։

Ո՞րդէ—ո՞րտեղ։

Ո՞րդիան—ո՞րտեղից։

Որդնել—որդերով լցուել. հոտել։

Որձ—արու։

Ուզարլուկ—դաշտային խոտ։

Ուզել—կամենալ. սիրել (օր. ինձ չա՛տ ա ուզում, էս աշ-

քից էն աչքը չի փոխում).
աղջկայ ձեռքը խնդրել (օր. ֆլանի աղջիկն ա ուզում)։

Ուլ—այծիկ. ուլ։

Ուլունք—ուլն.

Ուխտ—փափագ. ուխտ։ Ուխտ անել—ուխտել. սրբի դուռը գնալ, մատաղ մորթել (օր. գնացին սրբի դուռը, ուխտները արեցին, վէ կայան՝ էկան)։

Ուղուփ—հասկացողութիւն. խելացիութիւն. ձիրք. շնորհ։

Ուղուփով—խելացի. շնորհալի (օր. շատ ուղուփով մարդ ա)։

Ումբր—կեանք։ Ումբրն ուտել, Ումբրը քանդել, Ումբրը փչացնել—կեանքը մաշել։ Ո՞ւմբրըդ լօրի պօչ ըլնի (անէծք)։

Ումուդ—յոյս։ Ումուդ տալ—յուսադրել։ Քու ումուդով դո՛ւշմանս մնայ—քո յուսով թշնամիս մնայ։

Ունթուլ—թոյլ. անշնորհ։

Ունկ—կոթ. բռնելու տեղ (օր. կուժը կոտրուեց, ունկը մնաց ձեռիս)։

Ունցել—հունցել (օր. խմորն ունցել). փոխ. ծեծել (օր. քեզ ընե՛նց ունցեմ, որ աչքերդ դիք մնայ)

Ունք—յօնք։ Ո՛վ կարս ; ասի՝ աչքիդ վերևը ունք կայ—ո՛վ կը համարձակուի քեզ որ և է բան ասել։ Ունքերը վէ թողալ, Ունքերը կիտել—մտածութեան մէջ ընկնել. սաստիկ խորհել։ Ունքը շինելու տեղը՝ ա՛չքն էլ հանեց—մի բան ուղղելու փոխանակ՝ աւելի փչացրեց։

Ուշունց—հայհոյանք։ Ուշունց տալ—հայհոյել։

Ուշունցարերան, Ուշունցնատու—հայհոյանք սիրող։

Ուռել—ուռչել. փքուել. հպարտանալ։ Աչքս դաթի ո՛ւռել ա նրա համար—կարծես միայն նրա՛ մասին եմ մտածում։

Ուռուցվորած—փորը ուռած. հիւանդ։

Ուռուցվորել—փորը ուռչել. հիւանդանալ։

Ուստայ—վարպետ. խելացի. հնարագէտ (օր. շատ ուստայ մարդ ա)։

Ուսուլով—զգուշութեամբ. յուշիկ.

Ուտացնել—ուտեցնել (օր. էրեխուն հաց ա ուտացնում. իրա աշխատանքը խալխին ա ուտացնում. ընե՛նց սիլլէք ուտացնեմ, որ քէփդ գայ)։

Ուտել—ուտել (օր. իրա հացն ա ուտում. իրա աշխատանքն ա ուտում. փողս կերաւ՝ չը տուեց. համա՛յ ծեծ կերաւ, հա՛. սուտ երդում կերաւ)։

Ուտել-խմել, Կեր ու խում—

խրախճանք։ Կերկոխ ըլնել—չափազանց ուտել (օր. ի՞նչ ես ըտենց կերկոխ ըլնում, կասեննաս ըսկի հացի երես չես տեհէ՝ ընե՞նց գիլլի նման վրա ես պրծնում հացին)։

Ուրախութին—ուրախութին։ Ուրախանալ՝ աշխարով մին ըլնել—անչափ ուրախանալ։ Ուրախութինից ոնները գետնից կտրւում ա—սաստիկ ուրախ է։ Ուրախութին անել—ուրախանալ. ուրախ ժամանակ անցնել։ Ուրախութինիցը քիչ էր մնացէ խելքը գլխիցը թռնի—նա անչափ ուրախացել էր։ Ուրախութիններիցը քիչ էր մնացէ խելքները գլխներիցը թռնի—նրանք անչափ ուրախացել էին։ Լա՛ւ քէֆ, յա՛ւ ուրախութին արեց—լաւ քէֆ արեց. լաւ ուրախացաւ։

Ուրախանալ—ուրախանալ. քէֆ անել։

Ուրագ—ուրագ (ատաղձագործի գործիք)։

Ուրբաթ—ուրբաթ օր։ Ուրբաթախօս ա—սակաւախօս մարդ է։ Էնքա՛մ կը տամ, որ ուրբաթէ ուրբաթ կը գըժուես—այնքա՛ն կը ծեծեմ, որ շաբաթը մի անգամ կը գժուես։ Ուրբաթ օրւայ չո՛րովն ա, շաբաթ օրւայ փո՛րովն ա—անփոփոխ է մնացել։

Ուրխան—սաստիկ աղքատ։

Ուրիշ—ուրիշ. օտար։ Ուրշի հացին եղ քսել—իւրայիններին թողած՝ օտարին պիտանի լինել։ Ուրշի ձեռով մարդ պտի օձ բռնի—օտարին երբէք հաւատալու չէ։

Ուրց—դաշտային բանջարեղէն։

Ուրուր—ցին (գիշատիչ թըռչուն)։

Ուքուր ուքուր լաց ըլնել—դառնապէս լալ։

# Չ

Չաղիր—վրան։ Չաղիր տալ—վրան խփել։

Չադրաւոր—վրանաբնակ։

Չաթել—բռնել. վրա հասնել. ձեռքը մի բան ընկնել (օր. ուրշները ի՞նչ են չաթէ, որ

դու ինչ չաթես)։

Չաթմիշ անել—մէջտեղից կտրել։

Չաթու—պարան։

Չալ—խայտաբղէտ։ Չալ չալ—շատ բծեր ունեցող։

Չալաքի—մատաղահաց։

Չալել—պտուղը սկսել հասնել (օր. հաւողը դեռ նոր ա չալէ)։

Չալթուկ—բրնձի արտ։

Չալիշ գալ—չարչարուել. աշխատանք գործ դնել որ և է նպատակի հասնելու։

Չալու—դժնիկ (փշոտ ծառ)։

Չախմախ—կայծահան։ Թուանքի չախմախ—հրացանի կայծահան։ Չախմախի քար—կայծաքար։ Չախմախին տալ—կայծ արձակել (օր. ընե՛նց չափալախ տուեց, որ աչքերը չախմախին տուին)։

Չաղ—գէր. պարարտ։ Չաղ թիքայ—խղալի պատառ. փոխ. արդիւնաւէտ ձեռնարկութիւն։

Չաղութիւն—գիրութիւն (օր. չաղութիւնիցը տղի շլինքը էնքա՜մ էր հաստացէ, կասենաս գոմշի շլինք ըլնէր)։

Չամի—անտառային ծառի տեսակ։

Չամիշ—չորացրած խաղող. քիշմիշ։

Չայիր—սէզ. կանաչ խոտով ծածկուած տարածութիւն։

Չայիր չիման տեղ—սիզաւէտ տեղ։

Չանայ—ծնօտ. կզակ։ Չանայ տալ—սակարկել. շատախօսել։

Չանաղ—կաւէ աման փռան մէջ կերակուր եփելու համար (օր. բոօր չանաղ ենք տուէ փուռը)։

Չանաք—բամբակաքաղ։ Չանաքը ընկել ա—բամբակաքաղը սկսել է։

Չանաքել—բամբակը քաղել։

Չանգ—մառախուղ. մշուշ։

Չանկ—մագիլ. ճիրան։

Չանկռել—մագլել։

Չանչ—ողկոյզների մնացորդը ճմլելուց յետոյ։

Չանչել—մէկին բաց ձեռքով անիծել։

Չար—չար. բարկացկոտ։ Չար սատանայ—սատանայի պէս չար։ Մնի չարը տանել—մէկի չարը իր վերայ առնել. մեռնել (օր. չա՜րդ տանեմ. աղէքանց չարը տարու)։ Չար Յուլիանոս—չարաճճի. անհանգիստ (օր. էս աղէն ընե՛նց չար Յուլիանոսն ա, որ էլ չ'էլած)։

Չարայ—ճար. հնար (օր. չարէս ինչ, ո՞նց որ ասում ես, պտի ընե՛նց անեմ)։

Չարաղ—չոր միրգ։ Չարաղ անել—չոր միրգ ուտել։

Ձարդախ—հաստարակ ծածկուած չինութին թոնրի վերայ, ուր հաց թխելիս աշխատում են։

Ձարխ—մեքենայի անիւ. Ձարխ ու ֆալաք—աշխարհ. ճակատագրող։

Ձարմխել—կաշկանդել։

Ձարչարանք—տանջանք։ Ձարչարանք տալ—տանջել. չարչարել։ Յուդի չարչարանք տալ—Յուդայի պէս չարչարել։

Ձարչարել—տանջել. չարչարել։

Ձարչի—թափառաշրջիկ մանրավաճառ։

Ձարսաւ—սպիտակ սաւան, որով կանայք ծածկւում են եկեղեցի գնալիս։

Ձարվադար—ձի, էշ, ջորի և ուրիշ կենդանիներ վաճառող. բեռնակիր կենդանիներ վարձու տուող. ուղեցոյց։

Ձարք—սատանայ։

Ձարքաշ—ճարպիկ. փորձառու. դիմացկուն։

Ձաւ անել, Ձաւ գցել—հռչակել. հրատարակել։

Ձաւ ընկնել—հռչակուել։

Ձափալախ—ապտակ։ Ձափալախ ուտացնել—ապտակել։

Ձափալախել—ապտակել։

Ձափ գցել—արշաւել։

Ձաքմայ—գիւղական կօշկի մի տեսակը։

Ձբեր—ամօլ. երեխայ չբերող կին (օր. էս կնիկը չբեր ա)։

Ձեմ ու չում անել—նազ անել. դժուարանալ մի բան ընդունելու։

Ձեշաքար—փափուկ քար՝ տների կեղտը մաքրելու համար։

Ձեշոտ—երեսի վերայ ծաղկից առաջացած փոսիկներ ունեցող (չօփուռ)։

Ձէ—ո՞չ (օր. մի հետ չէ էր ասէ՝ էն դիհը կաննէ)։ Ձէ որ—ո՞չ ապաքէն։

Ձէշուտ—տեսակ. նման (օր. դուքանումը ապրանքի չէշուտ չ'ունի)։ Ձէշուտ չէշուտ—տեսակ տեսակ։

Ձիբուխ—չիբուխ։

Ձիթ—չիթ (ճօթեղէն)։

Ձինարի—սոսեբաշուք բարձր ծառ (թեղու տեսակ)։ Ձինարի բօյ—փոխ. բարձր, վայելուչ հասակ։

Ձինիաման—ճենապակեայ աման։

Ձինումաչինա—Ձինաստան։

Ձիր—չորացրած մրգեղէն (տանձ, խնձոր, ծիրան և այլն)։

Ձիփլախ—մերկ. տկլոր. աղքատ։

Ձլաւ—քաշովու մի տեսակը։

Ձլբուր—վանական արգանակ։

Ձխօսկան—չխօսող. (գործ է ածվում նորահարսի վերա-

ընթրութեամբ, որ համեստութիւնից, ամուսնութեան առաջին տարիները, հասակաւոր մարդկանց հետ չի խօսում):

Չկամ—նախանձոտ. ուրիշներին բարիք չը կամեցող:

Չղնամիշ անել—սատակեցնել. սպանել. մահացնել:

Չղըէխ—բամբակի հունդը հանելու գործիք:

Չմթել—ձեռքից մի բան յափշտակել (օր. փողը ձեռիցը չմթեց՝ փախաւ):

Չնգիլ—քարակոյտ. կարկառ:

Չոնթ—անդամալոյծ:

Չոնթանալ—անդամալոյծ լինել:

Չոր—չոր. ցամաք:

Չորանալ—ցամաքել. փոխ. մեռնել (օր. նստած տեղը դիք չորացաւ):

Չորացնել—ցամաքեցնել (օր. շորերը լուաց, տարաւ թունդրի վրէն չորացրեց, հագաւ):

Չորուկ—ծառի չորացած ճիւղ: Չորուկ-մորուկ—չոր փայտի կտորտանք:

Չորս—չորս: Չորս բոլորը—չուրջը: Աչքերը չորս բաց արեց—աչքերը լայն բացեց. ուշադրութեամբ սկսեց նայել (օր. նրա ձեռին ոսկիքը որ տեհաւ, աչքերը չորս բաց արեց):

Չու տալ—կռուի խրախուսել. գրգռել:

Չուան—պարան. թոկ:

Չութ—արօր: Չութ անել—արօրով վարել:

Չութչի—արօրով վարող մշակ:

Չուլ—հին շորի կտոր: Չուլ ու փալաս—հին շորեր: Չուլ ու փալասը հաւաքել—ունեցած, չ'ունեցածը ժողովել գնալու, հեռանալու:

Չուխայ—շալէ կամ մահուդէ վերնազգեստ. չուխայ:

Չունենալ—մի բան չ'ունենալ: Մնի հեննայ չ'ունենալ—մէկին չը սիրել, չը համակրել (օր. նրա հեննայ ըսկի չ'ունի, աչքով աչք չ'ունի վրէն մտիկ տայ):

Չունքի—որովհետև:

Չուռ—մանուկների վէգ կամ ընկոյզ խաղալու ժամանակ եթէ մի օտար մանուկ անցնելիս լինի նրանց մօտով, խաղացողները պարտաւոր են ջուռ ասել. հակառակ դէպքում անցնողը կարող է նրանց վէգերը կամ ընկոյզները վերցնել և խլացնել: Չուռ ասել—չուռ ասել: Չուռ անել—չուռ անել:

Չփի տալ երեսովը—լուացուել՝ ջուրը ամուր երեսին սրսկելով:

Ջռել—լայն բանալ (օր. աչքերը ջռել. մանները ջռել)։

Ջրաղ—ճրագ։

Ջրաղդան—ճրագալոյս։

Ջրթել—սեխի կամ ձմերուկի կորիզը կտրել, ուտել (օր. կորիզ ջրթել). փոխ. դուզել, զարդարել (օր. այ կնիկ, էդ լա՞ւ ես գլուխդ ջրթէ)։ Ջրթմիչ անել—մանր կտորել (օր. սոխը խորովածի վրէն ջրթմիչ ա անում, թողում)։

Ջփջփացնել—ցեխը կամ ջուրը ամուր կոխելով անցնել։

Ջփջփոց—այդ գործողութեան ձայնը։

Ջօրան—հովիւ։

Ջօրան-խարուկ—թռչունի մի տեսակը, որի մասին աւանդութիւն կայ, թէ ջօրանին խաբել է։

Ջօլ—վայրի տեղ. դաշտ։ Մենն ջօլերը գցել—փոխ. խաբել մէկին. մի բանի հետքը կորցնել (օր. ուզում ա ինձ ջօլերը գցի, գլուխս թըլըսորի)։

Ջօլախ—կաղ։ Ջօլախ ջօլախ—կաղէ կաղ։

Ջօլախութիւն—կաղութիւն։

Ջօ՛չ—էշերը քշելու և կանգնեցնելու բացականչութիւն։

Ջօռ—ցաւ. կենդանիների և բոյսերի հիւանդութիւն։ Ջօռլամիշ ընել—լափել (անարգական ձև)։ Ջօռ ու ցաւ ուտես (անէծք)։

Ջօռոտ—ցաւոտ. հիւանդոտ։

Ջօռոտել—ցաւոտել. հիւանդանալ։

Ջօփ—չիւղ. ծեղ։ Ջօփ-մօփ—փայտի կտորանք։ Ջօփ դառնալ—փոխ. սաստիկ նիհարել (օր. խեղճը ջօփ ա դառէ՝ էնքա՛մ լղարել ա)։

Ջօփատեղ—չանաքած բամբակատեղի։

Ջօփչի—փայտի կտորանք ժողովող։

# Պ

Պադրիկ—պատրոյկ։

Պադրիս—պատուասար. Պադրիսը կպել ա, Պադրիսը բռնել ա—պատուասար յաջողել է։ Պադրիս գնել, Պադրիս անել—պատուասատել.

Պաղրհան—պատի մէջ շինած պահարան՝ ամանեղէնները պահելու համար։

Պակաս—կիսատ. անկատար։ Նրա ձեռը պակաս ա—նա չքաւոր է։

Պակացնել—պակասեցնել (օր. ինձանից զադ չես պակացնի)։

Պակասութիւն—նեղութիւն. արատ։

Պակսել—պակասել. փոխ. մեռնել (օր. պա՛կսես դու էս տանից, պա՛կսես—անէծք)։

Պահունի—խնձորի տեսակ, որ պահւում է ձմեռուայ գործածութեան համար։

Պաղի տալ—սառույցի վերայ սլլալ, խաղալ։

Պաճ—հացահատիկի պատեան։

Պաճուճ—թելից գործած ճիտք՝ սրունքների վերայ հագնելու համար։

Պաշ—համբոյր։

Պաշել—համբուրել։

Պաշպշորել—շատ անգամ համբուրել։

Պապ, Պապի—պապ. մեծ հայր։

Պապանձուել—պապանձել. լռել (օր. պապա՛նձուես դու, պապա՛նձուես.—անէծք)։

Պառաւ—պառաւ։

Պառաւել—պառաւել։

Պառաւացնել--պառաւեցնել։

Պառաւութիւն—պառաւութիւն։

Պատիճ—պատիժ։ Պատիճ տալ—պատժել։

Պատճառաւոր—յղի (օր. էս կնիկը պատճառաւոր ա)։

Պատճել—պատժել։

Պատռել—պատառել (օր. աչքըդ քա՛ր կը պատռի)։

Պատռտորել—պատառոտել։

Պարապ—անգործ. պարապ։ Պարապ-սարապ ման ա գալի—անգործ շրջում է։

Պարապութիւն—անգործութիւն։

Պարան—պարան. հաստ թոկ։

Պարզ—յստակ. զուտ։ Պարզ բան ա—յայտնի բան է։

Պարզացնել—զտել. մաքրել։

Պարզել—մաքրուել (օր. ջուրը պարզեց. երկինքը պարզեց)։

Պարզերես—երեսը պարզ. իր պարտքը կատարած։ Պարզե՛րես կենաս—յանդիմանական ոճ (օր. պարզե՛րես կենաս, յու՛ հիւանդի դեղ հասցնող ես)։

Պարզըկայ—ցուրտ (օր. պարզըկայ գշեր)։

Պարոնբանջար—բանջարեղէն։

Պարտակել—զողացած բանը ծածկել. ամօթը ծածկել։

Պարտք—պարտք. պարտականութիւն։ Պարտ ընել մինին—մէկին պարտ լինել (գրամ)։ Պարտական մնալ—պարտ

մնալ։ Պարտական ըննել—պարտ լինել. պարտաւոր լինել (օր. կնիկը պարտական ա մարդին հնազանդ ըլնի, նրա խօսքիցը դուս չը գայ)։

Պետօ—Պետրոս (յատ. ան.)։

Պէծ—կայծ։ Աստու պէծ ու կրակ ա—չար, անհանգիստ է։ Պէծ պէծին տալ—շողշողալ. փայլել։

Պժժան—փոքրիկ բզզան։

Պինչ—քիթ։ Պինչը բռնեն՝ ֆոգին կը տայ—ստտիկ նիհարել է. սաստիկ հիւանդ է։ Պնչիցը հաննել—հարամ աննել (օր. կերածը մարդի պնչից հանում ա)։ Պնչերիցս մուխը դուս էր գալի—չա՛տ էի ափսոսում, զղջում։

Պիպ—ծայր (օր. քարի պիպ. վէգի պիպ)։ Պպին կաննել—յամառել։

Պիպիկ—բիբ։ Պի՛ պլիկդ կարեմ, Պի՛ պլիկդ փորեմ (անէծք)։

Պլըղացնել—աղքատացնել։

Պլիկ—դրամ։

Պլուղ—աղքատ։

Պլպլալ—փայլել։

Պլպլոց—փայլ։

Պլտուխ—փքած այտեր (թշեր)։

Պլօկել—կաշին, կեղևը հաննել (օր. ջանիս կաշին պլօկեց). փոխ. բոլորովին թալանել, յափշտակել (օր. գողերը նրան պլօկեցին, թողին լափ դարտակ քեաֆրի ֆողումը)։

Պլօկուել—կաշուահան լինել (օր. ջանիս կաշին ինքն իրան պլօկւում ա)։

Պղինձ—պղինձ. կաթսայ։

Պճեղ—պճեղ. կճղակ. կտոր (օր. պօպօքի պճեղ. սխտորի պճեղ)։

Պճղել—հացահատիկը և ընդեղէնը պատեանահան անել (օր. սխտորը պճղել. պօպօքը պճղել)։

Պճպճալ—եռալ (օր. մածունը թթուէ՝ կճճումը պճպճում ա)։

Պճպճան—եռացող (օր. պըճպճան մածուն)։

Պնդացնել—ամրացնել։

Պնդերես—անամօթ. անպատկառ։

Պնդի—ամուր (օր. ձուն պնդի ա)։

Պնդուկ—կաղին։

Պոկել—կարել. բաժանել իրարից (օր. թրով տուեց գլուխը կարեց, պոկեց՝ դէն գցեց). զոռով մէկից մի բան ստանալ (օր. զոռով, գիջով՝ ինչ հալօն նրանից մի բանի կմպէկ եմ պոկէ)։

Պոկուել—կարուել. բաժանուել իրարից։

Պողպատ—պողովատ։ Նրա ջանը պո՛ղպատ ա, պո՛ղպատ—

փոխ. ամուր կազմուածք ու-
նի:
Պըրինջան—բադրջան:
Պուլիկ—խուղի փոքրիկ աման:
Պուլպուլակ—կաւէ նեղաբերան ջրի շիշ:
Պուկ ընել—փախչել մէկի ձեռ-քից (օր. ինձ որ տեհաւ՝ պուկ էլաւ):
Պուճախ—անկիւն: Ի՞նչ ես տան պուճախներն ընկէ՝ ման գալի—ի՞նչ ես որոնում տան անկիւններում: Օխտը պուճախը մին ա մանգալի—տան ամեն անկիւնը շրջում է. ամեն բանով հետաքրքր-ուող է:
Պուճուր—փոքր: Պուճուր աղ-պէր—փոքր եղբայր:
Պուտ—կաթիլ: Պուտ պուտ—կաթիլ կաթիլ: Մնին պո՛ւտ պուտ, մնին փո՛ւթ փութ. (առած):
Պպզել—կկզել:
Պռաս—պռաս (կանաչեղէն):
Պռճոկել—պոկատել (օր. մա-գերը պռճոկել): Ա՞յ դու պռճոկուած (անէծք աղջկան):
Պռունգ—շուրթն. ծայր (օր. գեօլի պռնգին կանգնել ա): Պռաէ պռունգ—լի. գեղուն):
Պռտեհար—ամբողջովին լի:
Պռօշ—շրթունք: Պռօշը պռօ-շին տալ, Պռօշը պռօշին կպցնել—խօսել. խօսակցել:
Պողպալ—շողշողալ:
Պողպոց—շողշողումն:
Պտտացնել, Պտտել—պտոյտ տալ:
Պտի—պէտք է:
Պտիտ—պտոյտ: Պտիտ տալ—պտոյտ տալ: Պտիտ գալ—պտոյտ գալ (օր. գլուխս պտիտ ա գալի). շրջել. դրօ-նել (օր. գնացինք մի քիչ պտիտ էկանք, եդ դառանք):
Պտղունց—պտղունց (օր. մի պտղունց թութուն տո՛ւր):
Պտուկ—պտուկ (օր. կովի պտուկ):
Պտուղ—այգեկութից աչքաթող եղած խաղող. բիր (օր. պտո՛ւղդ հանեմ. պտո՛ւղդ փորեմ.—անէծք): Պտուղ ա-նել—աչքաթող եղած խա-ղողը ժողովել:
Պրծացնել—փրկել. ազատել. առողջացնել:
Պրծնել—աւարտել. ազատուել:
Պօղ—եղջիւր:
Պօղահարել—եղջիւրով հա-րուածել. փոխ. կշտամբել:
Պօղաւոր—եղջիւրաւոր: Պօղա-ւոր սուտ—մեծ սուտ:
Պօլ—կիսալուսնաձև կանանց գլխի զարդ, որ դնում են բասմինգի վերջից:
Պօլօլիկ—կլոր. ամբողջ (օր. մի պօլօլիկ տարի սուգ ա անում):

Պօչ—ագի. սայլի յետին մասը։ Պօչը ղըրաղ քաշել—հեռու պահել իրան մի բանից (օր. ինքն արել ա, հմի պօչը ղըրաղ ա քաշում)։ Պօչը նըրա տակին ա—նմ է տեղեակ ամեն բանի։ Պօչը խուզել—հեռացնել մի տեղից. պաշտօնազուրկ անել։ Պօչը հաղցնել—ծածկաբար գըրգռել մէկին։

Պօչուկ—դաշտային խոտ (alepacurus prateus)։

Պօպօք—ընկոյզ։

Պօպօքի, Պօպօքի ծառ—ընկուզենի։

Պօրտ—պօրտ. փորի մէջտեղի կարը։ Պօրտը տեղը գցել—փոխ. վրէժխնդիր լինել։ Պօրտս էս բանումն ա կըտրուէ—էս բանի մէջ եմ ծնուել, մեծացել։

# Ջ

Ջադուքեար—վհուկ. կախարդ։ Ջադու անել—կախարդել։

Ջադուքեարութիւն—կախարդութիւն։

Ջախաթթու—թթու դրած ճակնդեղ։

Ջահէլ—երիտասարդ։ Ջահէլ ջուհուլ—երիտասարդներ։ Ջահէլ ջիվան—մատաղահաս. նորատի։

Ջահէլութիւն—երիտասարդութիւն։

Ջահրայ—ճախարակ. թել մանելու գործիք։

Ջաղաց—ջրաղաց։

Ջաղացքար—ջրաղացի քար։

Ջաղացպան—ջրաղացպան։

Ջաղացպանութիւն—ջրաղացպանութիւն։

Ջամալ—տեսք. կերպարանք (օր. չ'ուտես, չը խմես, չը հագնես, չը մաշես՝ հէնց նրա գիւլ ջամալին թամաշ անես)։

Ջամուկ-ծիրան—ծիրանի տեսակ։

Ջամդաք—գէշ. դիակ։

Ջամդաքակեր—գիշակեր (օր. ջամդաքակեր ղուշ)։

Ջամդաքով—յաղթանդամ (օր. ջամդաքով մարդ)։

Ջան—անձն. մարմին (օր. ջանըս շա՛տ ա ցաւում նըրա համար, համայ ինչ անեմ,

ձեռքս ճար չը կայ). փաղաքշական խօսք (օր. հո՛գի ջան, ա՛ղպէր ջան). ուրախ բացականչութիւն (օր. ջա՛ն, էգուց կիրակի ա). գովասանական բացականչութիւն (օր. ջա՛ն, ա՛յ ըտենց, ըտենց). աղաչական խօսք (օր. ա՛յ ջանըմ, ա՛յ գեօղըմ, մի՛ անի, մի՛ ընի)։ Ջանս դուս էկաւ չարչարուելօն—հոգիս դուրս եկաւ չարչարուելուց։ Քանի ջանումը ջան կար՝ ձէն տուեց—որչափ ուժը ներում էր՝ ձայն տուեց։ Ջա՛նից ղուրբան—քե՛զ մատաղ։ Ջանով մարդ—ուժեղ մարդ։

Ջանաւար—գազան։

Ջանլաթ—դահիճ։

Ջանլաթութիւն—դահճութիւն։

Ջանսաղ—առողջ. ամրակազմ։

Ջանսաղութիւն—առողջութիւն։

Ջառ դռռալ, Ջառ կանչել—հռչակել. յայտարարել. իմաց տալ։

Ջառմայ—տուգանք։ Ջառմէն քաշել—տուգանքը վճարել։

Ջարդել—փշրել. մանրացնել։ Ջարդ տալ—յաղթել. գանակոծ անել։ Ջարդ ու խուրդ անել, Ջարդ ու փշուր անել—կտոր կտոր անել. սաստիկ մանրացնել։ Սալջարդ անել—սաստիկ ծեծել։

Ջաւահիր—գոհար. թանկագին քար։ Էն աղջիկը տեղն ու տեղը ջաւա՛հիր ա, ջաւա՛հիր—փոխ. աննման, օրինակելի աղջիկ է։

Ջաւահիր—յատուկ ան. կանանց։

Ջղիր—ձիարշաւ։ Ջղիր հաղալ—ձիարշաւել։ (Այս խաղի ժամանակ իրար հեռուից նշան են դնում մականով և խփում)։

Ջերկ—կարգ։

Ջերկուն—կարգով։

Ջէբ—գրպան։

Ջէյրան—եղնիկ։

Ջէջիմ—կապերտի ազնիւ տեսակը։

Ջըրջըռ—սեխի ամենաքաղցր տեսակը։

Ջիգեար—փայծաղ. գութ. սէր։

Ջիգեարով—գթոտ. սիրայորդոր (օր. ջիգեարով քիր)։

Ջիդայ—տէգ (օր. գրողի ջիդէն փո՛րդ մննի—անէծք)։

Ջին—դև։ Ջները գալ, Ջները բռնել—փոխ. բարկանալ. կատաղել։

Ջինս—ցեղ. ազգ. տոհմ։ Ջի՛նսըդ չորանայ (անէծք)։

Ջիվան—մատաղ. նորատի. երիտասարդ։

Ջիրիդ—մական։

Ջիք—վէգի փոս ընկած կողմը։

Ջլիս—բոլորովին։

Ջխտուել—զոյգ դառնալ։

Ջկել—բաժանել. իրարից հեռացնել. զատել։

Ջհանդամ—դժոխք։ Ջհա՛նդամն էթաս, խորի պուճախը (անէծք)։

Ջնջխել—ջախջախել (օր. դագանակով տուեց՝ գլուխը ջնջխեց)։

Ջոկ—զատ. առանձին։ Ջոկ ջոկ—առանձին առանձին։

Ջոկել—տես Ջկել։

Ջոմարդ—առատաձեռն։

Ջամարդութիւն—առատաձեռնութիւն։

Ջուալ—հաստ փալասից կարած տոպրակ (օր. ալրի ջուալ)։

Ջուլ—կապերտի կտոր. փալաս (ընտանի անասունների վերայ ծածկելու)։

Ջուխտ—զոյգ։ Ջուխտ ջուխտ—զոյգ զոյգ։ Ջո՞ւխտ թէ կե՞նտ—մանկական խաղի մի տեսակը։ Առտօծ որ մէկին տալիս ա՝ ջո՛ւխտ ձեռով ա տալի (առած)։ Ջո՛ւխտ աչքիս վրէն տեղ ունես—ամենաթանկագին հիւր ես։

Ջուհար—փայլ (մետաղների)։

Ջուհարդար—երկաթի ազնիւ տեսակը։

Ջուհլակ—կտաւագործ. ոստայնանկ։

Ջուհլակութիւն—ոստայնանկութիւն։

Ջուղաբ—պատասխան։ Ջուղաբ անել—ճանապարհ ձգել. մերժել. հեռացնել։ Ջուղաբ տալ—պատասխանել. պատասխան տալ (օր. ընե՛նց սաղը ջուղաբ տուեց, որ մնացի արմացած)։ Կոշտ ու կոպիտ ջուղաբ տալ—կոպիտ կերպով պատասխանել։

Ջուռայ—տեսակ։ Ջուռայ ջուռայ—տեսակ տեսակ։

Ջուր—ջուր. փոխ. ամօթ. պատկառանք։ Էլ էն ջո՛ւրը, էլ էն ջո՛ղացը—նոյնն է մնում. վատ բնաւորութիւնը չի փոխում (օր. ինչքամ ասում եմ, խրատում, չինում՝ էլ էն ջո՛ւրը, էլ էն ջո՛ղացը, էլի իրա էշն ա քշում)։ Էրկսի ջուրը մի առուով չի էթում—բնաւորութիւնները չեն յարմարւում. հաշտ չեն ապրում իրար հետ։ Մնի ջրջրանքը ընկնել—մէկի պատճառաւ որ և է բարեաց արժանանալ։ Անջախ ա ջուրը ջրամանից հանում—հագիւ հազ ծայրը ծայրին հասցնելով ապրում է։ Երեսի ջուրը գնացել ա—ամօթ չ'ունի։ Ա՜յ ջրատար (անէծք)։ Ջուր ընկնել—պտուղը նոր սկսել հասնել։ Ջո՛ւր տուքչի—մանկական խաղի մի

տեսակը։ Մնի տակը ջուր կապել—փոխ. մէկին խաբել։ Դարմանի տակի ջուր ա—սաստիկ խորամանկ է։ Ջրին չը հասած մի բոբկանայ (առած)։ Ձուկը ջրումը բազար չեն անի (առած)։ Ջուրը իրա ճամփէն կը գանի (առած)։ Ջուրը կտրում ա—այս դարձուածքը գործ է ածվում, երբ սառը ջրում լողալիս՝ սաստիկ ազդում է մարմնի վերայ։

Ջրատար—ջրից տարուած։

Ջրել—ջրել (օր. ձին ջրեց. բոխչէն ջրեց). փոխ. մէկի ասածները հերքել։

Ջրջրհանել—ջուր շաղ տալ։

Ջրփոր—ջրհոր։

# Ռ

Ռադ անել—իրանից հեռացնել (օր. մ՛նջախ նրան գլխիցս ռադ արի)։ Ռադ ըլնել—հեռանալ (օր. ռա՛դ իլ գնա՛ ըստխան)։

Ռազի—բաւական. համաձայն։ Ռազի կենալ, Ռազի ըլնել—բաւական մնալ. համաձայնել։

Ռահաթ—հանգիստ. անդորր։

Ռահաթութիւն—անդորրութիւն։

Ռահմ—գութ. խիղճ։ Մնի սիրտը ռահմ գցել—մէկի գութը շարժել (օր. բալի Աստօծ քու սիրտը ռահմ գցի)։

Ռահի գալ—հպատակութիւն խոստանալ։

Ռամ գցել—գիր բաց անել. գուշակել։

Ռանգ—գոյն։ Ռանգ ռանգ—գոյնզգոյն։ Ռանգ-մռանգը գցել—գունատել։ Ռանգ ու ռուչը տեղն ա էկէ—գոյնը տեղն է եկել, առողջացել է։

Ռաշիդ—քաջ. կտրիճ։

Ռաշիդութիւն—կտրճութիւն։

Ռաստ գալ—պատահել։ Ռաստ բերել—պատահեցնել։

Ռափաթայ—լաւաշ հաց թխելու բարձ. բաթաթ։

Ռէհան—կանաչեղէն։

Ռըզգ—ապրուստ (օր. դարտ մի անի, Աստօծ քու որդկերանց ռըզգը կը տայ)։

Ռըհաթ—գեղջուկ. չինական:
Ռըհաթութիւն—չինականութիւն:
Ռըշպար—երկրագործ:
Ռըշպարութիւն—երկրագործութիւն:
Ռումբի—գինու ամենամեծ տիկ (եզան կամ գոմշի կաշուից):

# Ս

Սա—սա (Սրա, Ըստրա—սրա: Ըստոնք—սրանք: Ըստոնց—սրանց):
Սաբաբ—պատճառ (օր. սաբաբ քեզ էս բանն արի): Սաբաբ դառնալ—պատճառ դառնալ: Սաբաբի տո՛ւնը քանդուի (անէծք):
Սաբր անել—սպասել. համբերել:
Սաբր—փռշտոց (օր. դշերուայ սաբրը խէր ա): Սաբր գալ—փռշտալ:
Սադաղին—ի սէր (օր. քու արևի սադաղին՝ մի կտոր հաց տո՛ւ):
Սադայ—զուտ. ամբողջովին (օր. ջիբխս փողերը սադայ ոսկի ա):
Սազ—վին: Սազ ածել—նուագել սազի վերայ: Սազ ածող—սազի վերայ նուագող:
Սազանդար—երաժիշտ:
Սազել, Սազ գալ—յարմարել (օր. էդ շորը քեզ սազում ա, համայ էն շորը դհա՛ ա սազ գալի):
Սալթ—բոլորը. ամբողջովին:
Սալըղ—լուր. համբաւ. տեղեկութիւն: Սալըղ տալ—տեղեկութիւն տալ. հաղորդել. բացատրել: Սալըղ առնել—տեղեկութիւն ժողովել մի բանի մասին:
Սախաթ—արատաւոր. մարմնի որ և է պակասութիւն ունեցող (օր. սախաթ մարդ):
Սախաթել—մարմնի որ և է տեղը վնասել (օր. վեր ընկաւ, ոտը սախաթեց):
Սածիլ—մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրած ծաղիկ կամ բանջարեղէն: Սածիլ անել, Սածիլ դնել—ծաղիկը կամ բանջարեղէնը տեղափոխել, տնկել:
Սաղ—ողջ. առողջ. ամբողջ (օր. սա՛ղ ջանս ցաւում ա):

Սաղ սալամաթ, Սաղ ու կենդանի—ողջ և առողջ։

Սաղանալ—առողջանալ. փոխ. ալրանքը ծախուել՝ վերջանալ։

Սաղացնել—առողջացնել. փոխ. ապրանքը ծախել, գլխից ռադ անել (օր. փթած ապրանքը ծախեց, սաղացրեց)։

Սաղութիւն—ողջութիւն։

Սաղլիկ—սաղր. ծանծաղ։

Սաղկայ—վէգի մեծ տեսակը (ջիլա)։

Սաղրի—կաշուի մի տեսակը, որից գլխաւորապէս մաշիկներ են կարում (օր. սաղրի մաշիկ)։

Սամթ—յարմարաւոր դէպք։ Սամթը գցել—յարմարաւոր միջոց գտնել։

Սամթլն—յարմարապէս. յարմարաւոր։

Սամի—սամի. երկու ծուռը փայտեր, որոց մէջ անցնում են, լծելու ժամանակ, եզան կամ ուրիշ լծկան կենդանու պարանոցը։

Սամիթ—սամիթ. կանաչեղէնի մի տեսակը։

Սամոտէն—սամոտիք. այսպէս է կոչւում այն թօկը, որով սամիքը կապում են։

Սամօ—Սամփսոն (յատ. ան.)։

Սայիշ տանել—կասկածել (օր. Նրա վրէն են սայիշ տանում)։

Սայմիշ ընել—գլխի ընկնել. հասկանալ։

Սանահէր—սանահայր։

Սանամէր—սանամայր։

Սանադ—պարտամուրհակ։

Սանդ—ծանր. ամուր։

Սանդ—սանդ. ցորեն ծեծելու տեղ։ Սա՛նդն էլ ա իրա ձեռին, դա՛ստէն էլ—փոխ. ամեն իրաւունք իր ձեռքին է։

Սանդերք—բուրդ գզելու գործիք։

Սանդր—սանտր։

Սանդրել—սանտրել։

Սապերափ—խաղողի տեսակ։

Սառաֆ—սեղանաւոր։

Սառել—սառչել. փոխ. անհոգ վերաբերուել դէպի իր գործը (օր. իրա փէշակիցը սառել ա. դուքանիցը սառել ա. տուն ու տեղիցը սառել ա)։

Սառուց—սառոյց։

Սաս—ձայն։ Սաս ու սամուրը կտրել ա—բոլորովին լռել է։ Սա՛սդ կտրուի, Սաս ու սա՛մուրդ կտրուի (անէծք)։

Սասում—ցասումն։

Սատանայ—սատանայ. խորամանկ (օր. սատանայ մարդ)։ Սատանի ձին նիլնել—յամառել։ Սատանէն թարս ա նալնէ—փոխ. սատանի խորամանկ է։

Սատանութիւն—խորամանկութիւն։

Սարեկ—սարեակ (թռչուն)։
Սարսաղ—յիմար. տխմար։
Սարսաղանալ—յիմարանալ։
Սարսաղացնել—յիմարացնել։
Սարսաղութիւն—յիմարութիւն։
Սարվացնել—սովորեցնել։
Սարվել—սովորել։
Սարք—շինուածք. կազմութիւն։ Սարք ու կարգ—տան կահ կարասիք։ Սարք ու կարգ գցել—կարգի բերել. կանոնաւորել։
Սարքել—շինել. յարմարեցնել։
Սուայի—բացի (օր. ինձանից սուայի էլ մարդ չը գտա՞ր)։
Սուաջաղ—ջրաղացի փայտէ խողովակի բերանը։
Սուղի—կանաչեղէնի ամեն տեսակը։
Սաքի, Սաքիթէ—իբրեւ թէ։
Սաքու—ախոռ։
Սաքօ—Սարգիս (յատ. ան.)։
Սելաւ—հեղեղ։ Սելաւը տարել ա—հեղեղել է։
Սեկ—սեկ. բարակ կաշի։
Սեղանտախտակ—սեղան, որի վերայ խմորի գնդեր են պատրաստում։
Սեղանք—սեղանատամներ։
Սեր—մածնի երես։
Սերգեւիլ—սերկեւիլ։
Սերգեւլի—սերկեւիլենի։
Սերմ—սերմ։ Սե՛րմդ չորանար (անէծք)։
Սեփօ, Սեփան—Ստեփան (յատ. ան.)։
Սէլ—սայլ։ Սէլը գոռալու տեղ՝ սէ՛լւորն ա գոռում—փոխ. փոխանակ արդարը խօսելու՝ անարդա՛րն է խօսում։
Սէլւոր—սայլապան։
Սէհրակ—նօսր. ցանցառ։
Սէհր—զբօսանք։ Սէհր անել—զբօսնել։
Սէր—սէր։ Սէր անել—սիրային ցանկութիւններ յայտնել իրար։
Սըխ—մօտիկ. մտերիմ (օր. նրանք սըխ բարեկամ են)։
Սընէյվազ—սեխի տեսակ։
Սըպանել—սպանել։
Սըպանուել—սպանուել։
Սըռ—գաղտնիք։ Մնի՛ն սըռ տալ—մէկին գաղտնիք հաւատալ։
Սըրթըղ—համարձակ. լկըտուած։
Սթար—ապրուստ։ Սթարից ընկնել, Սթար-մթարից ընկնել—աղքատանալ. միջոցներից զրկուել։ Սթար անել—ապրել։
Սթրել—հանգիստ մնալ. երկար մնալ մի տեղ (օր. ըսկի իրա տեղը չի սթրում, միալար դէս, դէն ա էթում)։
Սիբեխ—բանջարեղէն։
Սիլայ—լիքը. գեղուն։
Սիլի-բիլի—հաճոյախօսութիւն։

Սիլի-բիլի անել—հաճոյախօսել։

Սիլլայ—ապտակ։ Սիլլայ հասցնել, Սիլլայ ուտացնել—ապտակել։

Սիլլել—ապտակել։

Սիմինդ—եգիպտացորեն. հորմած-կորեկ։

Սին—սիւն. Նեցուկ։

Սինի—սկուտղ։

Սիպտակ—սպիտակ։

Սիպտակել—սպիտակել։

Սիպտկացնել—սպիտակեցնել։

Սիպտակ-օրդըցի—խաղողի տեսակ։

Սիսեռ—սիսեռ։

Սիսեռակեր—սիսեռ ուտող։

Սիրաքստկուել—սիրային խօսքեր ասել իրար։

Սիրտ—սիրտ։ Մենծասիրտ ա, Մենծ սրտի տէր ա—մեծամիտ է։ Սիրտը կտրել—վիրաւորել. վհատեցնել (օր. սիրտը չուչա ա, որ կտրուեց, էլ չի սաղանայ.-առած)։ Սրտէս չի տալի—սիրտս չի ուզում (օր. սրտէս չի տալի ըտախան ձեռ վեր ունեմ)։ Սրտիցը ջուր խմել—համակարծիք լինել մէկին։ Սրտովը ո՞վ գիտայ ընչե՞ր ա անցկենում—ո՞վ գիտէ՝ ի՞նչ բաների մասին է երազում։ Սրտին դիպաւ, Սրտին կպաւ—նեղացաւ (օր. էս խօսքը նրա սրտին դիպաւ)։ Սիրտը վեր ունել—հաւանել. սիրել (օր. բալի էն փէշակը սիրտը վեր ա ունում, մնում ա՝ մարդ դառնում)։ Սիրտը ուզել—ցանկանալ. ուզենալ (օր. հիւանդի սիրտը նուռ ա ուզում)։ Սիրտը գցել—սիրտը բաբախել։ Սիրտը հովանալ—սիրտը հանգստանալ։ Սիրտը բաց ըլնել, Սիրտը բացուել—ուրախանալ. զուարճանալ։ Սիրտը բաց անել աղաքին—սրտի գաղտնիքը մէկին յայտնել։ Սիրտը մաշել—մորմոքել. վշտացնել։ Սիրտ առնել—քաջալերուել (օր. ընկորտանցը որ տեհաւ, դհա՛ սիրտ առաւ, ղօչաղացաւ)։ Սիրտս պօրտիս գըլուխը թռաւ, Սիրտս կըտրուեց, Սրտաճաք էլայ—սաստիկ վախեցայ։ Սիրտս լիքն ա—վշտացած եմ։ Սիրտ ու թօքը տրորել—ցաւեցնել. վշտացնել։ Սիրտ ու թօքը տրորուել—ցաւել. վշտանալ։ Սիրտը էթալ—ուշաթափ լինել (օր. սոված սիրտս էթում ա)։ Սիրտ անել—վստահանալ։ Սիրտ տալ—ոգեւորել. քաջալերել։ Սիրտ վեր ածել—փոխել։

Սիրուն—գեղեցիկ։

Սիրունացնել—գեղեցկացնել։
Սիրունութիւն—գեղեցկութիւն։
Սիրի-սիրի—դաշտային խոտ (որանով վիճակ են հանում՝ թէ ո՛վ ո՛ւմ է սիրում)։
Սիքայ—հին դրամ։
Սլլալ—սահիլ. սայթաքիլ։
Սխկել—մանրացնել. փոխ. ծեծել։
Սխտոր—սխտոր (օր. թէ սըխտոր չես կերէ՝ խի՞ ա մըռմռում)։
Սկուել—խորասուզուել ջրի տակը։
Սկոկալ, Սվսվալ—կիսասիրտ մէկին մի բան տալ։
Սհաթ—ժամ. ժամացոյց։ Է՛ն սհաթին, է՛ն սհաթը—իսկոյն. նոյն ժամին.
Սհարի—խաղողի տեսակ։
Սղալել—փաղաքշել. շոյել. մազերը սանտրել, ուղղել (օր. ա՛ղջի, մազերդ սղալում ես)։
Սմբուլ—դաշտային խոտ։
Սնաքար, Սնքար—սեան տակի քար։
Սնգոնգալ—ձիու կամ իշի վերայ նստած տեղը վեր վեր թռչել։
Սնդկալ—թոնրի սնդուն խփելու փայտ։
Սնդու—թոնրի դրսի կողմից փոքրիկ անցք՝ կրակը բորբոքելու համար։
Սոխ—սոխ։ Սոխ ու հաց՝ սիրտը բաց (առած)։
Սոխտայ—անտառակ (կին)։
Սոված—քաղցած։
Սովածանալ—քաղցել։
Սովածութիւն—քաղց։
Սովդաքեար—մեծ վաճառական։
Սովդաքեարութիւն—մեծ վաճառականութիւն։
Սովոր—սովորած, վարժուած մի բանի (օր. սերը սովորը կ'ուտի, թանը՝ մոլորը)։
Սովորութք—սովորութիւն։ Սովորութք անել—սովորութիւն անել։
Սուբահ—մէնակ. ամուրի։
Սուգ—սուգ։ Սուգ անել, Սուգ ու շիվան անել—սգալ. սուգ անել։
Սուկի—մսի ամենափափուկ մասը, որ գտնւում է կովի կամ եզան ողնաշարի երկու կողմը (ֆիլէ)։
Սունկը—սունկ. սօկօ։ Սո՛ւնկ ընի տունդ—տունդ հիմնայատակ լինի (անէծք)։
Սուչ—յանցանք. մեղք։
Սուս—լուռ։ Սուս կենալ—լռել։ Սուս ու փուս մարդ—լուռ, համեստ մարդ։
Սուսամբար—պարտիզի հոտաւէտ բոյս։
Սուտ—սուտ։ Սուտի մանգղիլը կարճ կ'ընի (առած)։ Սուտ ասել—ստել։ Սուտասան—

ստախօս։ Սուտը-մուտ—սուտ։ Ստե՛րի թագաւոր—ամենամեծ ստախօս։ Սուտասանի տունը կրակ ընկաւ, մարդ չ՚աւատաց (առած)։

Սուրաթ—պատկեր. դէմք։

Սուրայի—բարակ և երկայն։ Սուրայի բոյ—փոխ. գեղեցիկ հասակ։

Սուրբ—սուրբ. արդար։ Սուրբ մարդ—արդար մարդ։ Սուրբ սուրբ անել—պաշտել. յարգել (օր. Նրան սուրբ սուրբ ա անում)։

Սուրգին անել—աքսորել. քշել։

Սուրու—հօտ (ոչխարի)։

Սուրութմիշ ընել—գետնին փորսող անելով գնալ (օր. ի՞նչ ես գետնին սուրութմիշ ընում)։

Սուփրայ—սփռոց։

Սպաս—թանից պատրաստած կերակուր։ Մնի սպասը էփել—մէկից վրէժխնդիր լինել. ծեծել։

Սպռել—տես Սփրթնել։

Սռնի—առանցք (օր. սէլի սռնին կոտրուեց)։

Ստերչ—չբեր կով։

Սրայ—կարգ. հերթ։

Սրթսրթալ—ցրտից դողդողալ։

Սրով—կարգով. հերթով։

Սրտալի—անկեղծ. համարձակ. եռանդուն։ Սրտալի սրտալի խօսել—համարձակ խօսել (օր. ընե՞նց մի սրտալի սրտալի խօսում ա, հէնց իմանաս սա՛ղ աշխարքը իրանն ա)։

Սրտառուչելիք—սրտի ուզած բան։

Սրտոտ—քաջ. համարձակ (օր. սրտոտ մարդ)։

Սփրթնած—գունատ։

Սփրթնել—գունատել (օր. վախից սփրթնել ա, դառէ պատի ծէփ)։

Սև—սև։ Երեսդ սև ընի (անէծք)։

Սև-օրդըցի } խաղողի տեսակներ։
Սև-հաւող }

Սևասոնիչ—պարտիզի բոյս։

Սևասիրտ—տխուր. սգաւոր։

Սևասրտել—սուգ մտնել. տխրել։

Սևացնել—սևացնել. սև գունով ներկել։

Սեցնել—մի բան տալ անարգական ձևով (օր. էս փողը տա՛ր՝ նրա՛ն սեցրա)։

Սօթլիկ—սայթաք։ Սօթլիկ տեղ—սայթաք տեղ։ Սօթ տալ—սայթաքել։

Սօթլկացնել—տաշել. սրել. բարակացնել. հարթել։

Սօյ—ցեղ. սերունդ։ Սօ՛յդ չորանայ (անէծք)։

Սօփօ—Սօֆիա (յատ. ան. կան.)։

Սփթա—առաջ. օրուայ առաջին վաճառը։ Սփթա անել—օրուայ առաջին վաճառը անել (օր. ըսօր ըսկի սփթա չեմ արէ)։

# Վ

Վադայ—միջոց. ժամանակ։ Վադայ տալ—միջոց տալ. պայմանաժամ նշանակել։ Վադէն անց ա կացէ—ժամանակը անցել է (օր. թամասկի վադէն անց ա կացէ)։

Վազ—որթ։

Վազել, Վազ տալ—վազել։ Վազէ վազ անել—վազելով պտոյտներ անել։ Վազէ վազ—վազելով. շտապով։

Վազը գալ մնից—մէկից ձեռք վերցնել. հանգիստ թողնել մէկին (օր. իմ դարտիցը վազը չես գալի. ինձանից վա՛զն արի)։

Վաթան—հայրենիք. ծննդավայր։

Վալադ—տեղեակ. հմուտ (օր. նա էս տեղարընքին վալադ ա)։

Վախ—ահ. երկիւղ։ Վախլութիւնիցը—երկիւղիցը։

Վախացնել—վախեցնել. երկիւղ պատճառել։

Վախել, Վախենալ—երկնչել։

Վախկութիւն—երկչոտութիւն։

Վախլուկ—երկչոտ։

Վախտ—ժամանակ. միջոց։ Իրա վախտին—իւր ժամանակին (օր. խի՞ չիր իրա վախտին գալի)։ Էն վախտերքը—այն ժամանակներում։ Վախտի բէվախտի—ժամանակ անժամանակ։

Վախտով—շուտով. ժամանակին։

Վա՜յ—բացականչութիւն վտանգի, նեղութեան ժամանակ (օր. վա՜յ, ըսպանե՜ցին, մորթե՜ցին, էկէք, հա՜սէք)։ Հա՜յհայը գնացէ՝ վա՜յ-վայն ա մնացէ—ծերութիւնից ուժասպառ է եղել։ Վա՜յ տալ գլխին—սուգ անել. ափսոսալ (օր. շատ վա՜յ տուեց գլխին, համայ էլ ուր՝ բանը բանից անց էր կացէ)։ Վա՜յն էկել ա մեզ տարէ, թէ ընկել ենք նրա ձեռը—եթէ

նրա ձեռքն ընկնենք, էլ փըր-կութեան յոյս չը կայ։

Վայխ—չարաննեղ։ Վայխ մարդ—չարաննենգ մարդ։ Վայխ ըլնել—պատճառ դառ-նալ դժբախտութեան։

Վառեկ—վառեակ։

Վառօ—Վառվառէ (յատ. ան. կան.)։

Վասխաթ—աւանդ. ուխտ. պա-տուէր։ Վասխաթ անել—ուխ-տել. պատուիրել։ Վասխաթդ չո՛ւնն ուտի (անէծք)։

Վար—վար։ Վար անել—վարել։ Վար ու ցանքս—վարել և ցանելը։

Վարագ—վայրի խոզ։

Վարար—յորդահոս (օր. վարար գետ)։

Վարարել—յորդանալ (օր. գե-տը ընե՛նց ա վարարէ, կա-սեննաս հետը արին ա բե-րում)։

Վարամնոտել—բարկանալ. ցա-ւել։ Քեզ տեսնամ՝ վարամնո՜-տես (անէծք)։

Վարամնոտացնել—բարկացնել. ցաւեցնել։

Վարաւուրդ—դիտումն. նշմա-րումն։ Վարաւուրդ անել—նշմարել. դիտել. գննել։

Վարաւուրդով—ըստ երևոյթին (օր. վարաւուրդով՝ ըսօր չեմ կարայ ճամփայ ընկնեմ)։

Վարդ—վարդ։ Վարդի ծառ, Վարդի—վարդենի։ Մնից վա՛րդն եմ քաղէ, մէկելիցն էլ գի՛ւլաբը կը քաղեմ—եր-կուսից էլ օգուտ չի կարելի սպասել։

Վարդաջուր—վարդից պատ-րաստած ջուր։

Վարդիվոր—Վարդավառ. տօն Այլակերպութեան։

Վարդեան—յատուկ անուն։

Վարել—վարել. վար անել։

Վարձք—վարձք. բարի գործ։ Վարձք անել—բարեգործու-թիւն անել։ Վարձք դէ՛ն—որպէս բարեգործութիւն։ Վարձքդ չո՛ւնն ուտի (ա-նէծք)։

Վարոց—բարակ մահակ. խա-րազան. վարոց։

Վարս—կանանց գլխի մազ (օր. վարսը գլխին սփպաակել ա)։

Վարսանդ—սանդխտոռն։

Վեր ածել—թափել (օր. ջուրը վեր ածել)։ Սիրտ վեր ա-ծել—փսխել. սիրտը ետ տալ։

Վեր ունել—վերցնել։ Պօպօքին չա՛տ բար ա վէ կալէ—ըն-կուզենին շատ միրգ է տուել։ Քու արածը Աստօծ վէ՛ կու-նի—քո արածը Աստուծուն հաճելի՛ կը լինի։

Վեր ընկնել—վայր ընկնել (օր. քարով տալու բաշտան՝ պօ-պօքը վեր ընկաւ)։ Քամին

վեր ընկաւ—քամին դադարեց։

Վէ կենալ—նստած տեղից վեր կենալ։ (Վէ՛—վեր կաց)։

Վէ կացնել—նստած տեղից կանգնեցնել. զարթեցնել (օր. քնած տեղիցը վէ կացրեց)։

Վէ դնել—վայր դնել (օր. բեռը ձիուցը վէ դրեց)։

Վէ գցել—վայր գցել. սպանել (օր. դուշ վէ գցեց)։

Վէ գալ—իջնել (օր. ծառիցը վէ գալու բաշտան, վրա հասաւ նրան կոխեց տակը՝ հեղտեց)։

Վէ տալ—թափել (օր. ծառի բարը վէ տուեց. գլխի մազը վէ տուեց). խրել. ամրացնել մի բանի մէջ (օր. բհիրը գեննին վէ տուեց). հնձել (օր. խոտը վէ տուեց՝ տարաւ)։

Վէ թռնել, Վեր վեր թռնել—ցատկել նստած տեղից (օր. վէ թռաւ քնատեղիցը)։

Վէ դիպնել—նիհարել. հիւանդանալ. (օր. շա՛տ ա փոխուէ, վէ դիպէ)։

Վէգ—վէգ. կօճի։ Վ՚էգդ ա՞լչու ա թէ թօխան—գործդ յաջո՞ղ է թէ անյաջող։

Վէզիր—նախարար. պալատական։

Վէլ անել—թափառել։

Վէջ—փոյթ. պէտք (օր. քոռի ի՞նչ վէջն ա՝ թէ մումը թանկացել ա). վէճ. դանգատ։ Վէջ ունենալ մնի հեննայ—մէկի հետ վէճ ունենալ։

Վիլլանկ, Վիլլայրիկ—թել յետ տալու գործիք։

Վիշապ—մեծ օձ (առասպել.)։

Վիտվիտ—թեթեւամիտ։

Վիրունի—վայրենի։

Վիրև—վերև. բարձր։

Վիրևանալ—վերև գնալ. առաջանալ. բարձրանալ։

Վնգստալ—կաղկանձել (օր. շունը վնգստում ա)։

Վնգստոց—կաղկանձումն։

Վռազ—շտապ։ Ճա՛տ վռազ եմ—շա՛տ եմ շտապում։ Վըռազ վռազ—շտապով։

Վռազել—շտապել։

Վռազող—շտապող (օր. վռազողին ադայ չինի (առած)։

Վռթալ—բռնկել (օր. բարութը բիրդան վռթաց)։

Վռթվռթալ—տես Վռթալ։

Վռշալ—տնքալ (օր. ի՞նչ ես տնքում, վռշում)։

Վրա, Վրէն—վերայ (օր. ծառի վրէն. գեննի վրա)։

Վրա պրծնել, Վրա քշել, Վրա հասնել, Վրա տալ—յարձակումն գործել։

# Տ

Տազ—ճաղատ: Տազ քաչալ—բոլորովին ճաղատ:

Տազ անել—լռել (օր. մրդի, աչքերդ խփի՛ր, տա՛զ արա՝ քունդ կը տանի):

Տալ—կինը իր մարդի քրոջը տալ է կոչում:

Տալ—տալ (օր. մեկլի ջուր տո՛ւր). խփել. ծեծել (օր. էնքա՛մ կը տամ, որ բանֆու-գի կ'ըլնես). վնասել. չան-թել. կծել (օր. օձը տուեց. արեը գլխիս տուեց). գործ է ածվում ծառերի վերաբե-րութեամբ (օր. էս պտուղին էնքա՛մ պտուղ ա տուէ, որ հա՛լ ու հէսաբ չը կայ):

Տալացուկ—տալիք. պարտ: Տա-լացուկ ըլնել—պարտ լինել. տալիք լինել (օր. փող ա տալացուկ՝ էնքա՛մ տարի ա չի տալի):

Տալղայ—պատապարուած. մե-կուսի. ապահով: Տալղայ տեղ—ծածուկ, ապահով տեղ: Տալղայ անել—պա-տապարել ուրիշի տեսողու-թիւնից:

Տալղայ—ալիք: Տալղայ ա տա-լի—ալէկոծւում է:

Տախտ—գիւղական տներում նստարաններ չը կան, որանց փոխարինում է տախտը, որի վերայ շատ մարդիկ են տե-ղաւորւում և որը շինուած է լինում փայտից (նաև հողից):

Տախտակ—տախտակ: Տախտա-կը պակաս—փոխ. յիմար. թեթեւամիտ:

Տակ—ճակնդեղ. փոքրիկ ափսէ թէյի համար:

Տակաթթու—ճակնդեղի թթու:

Տականք—տակը մնացածը (օր. ցորնի տականք. կերակրի տականք): Տականք-մա-կանք—տակը մնացած բա-ները (օր. կերակուրը ինքն ա ուտում, տականք-մական-քը թողում խա՛լխին):

Տակը—տակը (օր. դրեց տակը, վրէն նստեց): Տակով ա-նել—մի բան ծածկել. գո-ղանալ: Տակն ու վրա ա-նել—խառնել. շփոթել (օր. արար աշխարքը տակն ու վրա ա անում, ման գալի՝ չի գտնում): Տակն ու վրա ըլնել—խառնուել. շփոթուել (օր. ջուրը տակն ու վրա էլաւ):

Տակէտակ—ծածկամիտ. խորամանկ։
Տակնըհան—տակիցը. փոխ. ծածկամիտ. խորամանկ։
Տակտեղ—տակտեղ. ծիծակա. պղպեղ։
Տաղ—երգ։ Տաղ ասել—երգել։
Տաղաբան—երգաբան։
Տամար—երակ։ Մնի տամարը մննել—մէկի հետ մօտ ծանօթանալ որ և է նպատակով։ Նրա կակող տամարը գտել ա—նրա թոյլ կողմը գտել է։
Տանել—տանել. կրել (օր. էսքա՞մ տանջանքը ես ո՞նց պտի տանեմ). խաղում փասակել (օր. չուփթ հաղաց, աշխարքի փող տարաւ)։ Տանող տանողի ա—ո՞վ ուզում է՝ տանում է, ուշադրութիւն դարձնող չը կայ։
Տանձի—տանձենի։
Տանուտէր—քեօխվա (старшина)։
Տանտէր—տանուտէր։
Տաշեղ—տաշած փայտի կտորտանք։
Տաշտ—տաշտ. նաւաձև խոր կարաս, որ գիւղացիներին ծառայում է յատկապէս խմոր հունցելու համար։ Տաշտ ու մաղը կապել—տան բոլոր հացն ուտել, վերջացնել։
Տաշտադրէք—հարսանեաց նախընթաց երեկոյեան պատրաստութիւն։
Տաշտակ—միջքալող։ Տաշտակ ընկնել—լողալիս ջրի երեսին փռուել միջքի վերայ։
Տապակ—կէս. կտոր (օր. խընձորի տապակ)։ Տապակ անել—մէջտեղից կտրել, կէս անել (օր. նրանք էնքա՞մ իրար նման են, ո՞նց որ խընձորը էրկու տապակ արած)։
Տապակայ—խորոված ձուկը։
Տապակել—իւղի մէջ խորովել (օր. ձուկը տապակել)։
Տապակուել—խորովվել։
Տառեխ—մանր ձուկ, որ ստացւում է Վանայ լճից։
Տատ—մեծ մայր. տատ։
Տատաշ—տատասկ. փուշ (օր. էկած ճամփէդ փուշ ու տատաշ դուս գայ.-անէծք)։
Տատմէր—մանկաբարձուհի։ Տատմէրութիւն անել—մանկաբարձութեամբ պարապել։
Տարաղաջ—կախաղան։
Տարթ—բասմից բահով կտրած աղբի կտոր, որ չորանալուց յետոյ՝ որպէս վառելիք է ծառայում։
Տարուել—խաղում կորուստ ունենալ. անձնատուր լինել մի բանի (օր. ի՞նչ ես գինուն տարուէ)։
Տարս—տարիք. հասակ (օր. բարով իմ տարսը հասնես)։

Տուար—անասուն. փոխ. յիմար. կոպիտ։

Տափ ու տարաղ անել—քանդել. աւերել։

Տափակ—հարթ։

Տափակացնել, Տափել—հարթել. հաւասարել։

Տափ կենալ—թագչել։

Տափ-կենալուկի—մի տեսակ մանկական խաղ, ուր մանուկներից մէկը աչքերը խփում է, իսկ միւսները թագնւում են, որ նա գտնի։

Տաքար—հնձանի մէջ շինուած հոր՝ քաղցուն ժողովելու համար։

Տեգերակին—տագեր կին։

Տեգր—տագր։ (Տեգօր—տագեր)։

Տեղ (յոգ. տեղարէնք)—տեղ. կողմ. երկիր. անկողին (օր. իրա տեղը մտաւ՝ տաք արեց. տեղները մտան՝ քնեցին)։ Տեղըհան անել—տեղից հանել, հեռացնել։ Տեղը տեղին—նշանացի կերպով. որոշակի։ Տեղ ա գալի—ցաւալի է. վիրաւորական է (օր. մարդի տե՛ղ ա գալի, որ ըսկի մեր տունը չի մըննում, հալներս հարցնում)։ Ընե՛նց տեղ չես նստի, որ տակդ ջուր մննի—այնպիսի գործ չես սկսի, որ խաբուես։

Տեղակ—փոխանակ։

Տեղակել—հարցնել մէկի մասին. տեղեկանալ։

Տեղաշոր—անկողին։

Տենալ—տեսնել։ Տես ու ճանաչ—ծանօթ։

Տեփուր—փայտեայ բոլորաձև մատուցարան։

Տեփրել—տեփուրով բրինձ կամ ցորեն մաքրել։

Տէր—տէր. պաշտպան. փոխ. ամուսին (օր. բա՛ջի, տէ՛րդ ապրի.-օրհնութիւն)։ Տէր, տիրական չ'ունի—անտէր, անպաշտպան է։ (Տիրոնչ—տիրոջ)։

Տէրտէր—քահանայ։

Տէրտէրակին—քահանայի կին. տիրուհի։

Տըուկ—տուող (օր. տըուկ ծառ)։

Տժժալ—ականջի ձայն հանելը, խշշալը։

Տիղիմալա—դիւրագրգիռ. շուտ լաց լինող. թուլամորթ։

Տիլ—տիղմ։

Տիկնակլունձ—աչքի կոպի վերայ դուրս եկած պզուկ (ձիրձիղա)։

Տիկօ—Տիգրան (յատ. ան.)։

Տիմախւ—թռչուն։

Տլոտ—ցեխոտ. տղմուտ։

Տկլոր—մերկ. փոխ. աղքատ (օր. տկլորը տկլորի եղևիցը կպաւ. տսին՝ ինչ էք անում.

թէ՝ այիր ինք պարտակում)։

Տկլոր-ծիրան—ծիրանի տեսակ։

Տկլորացնել—մերկացնել. փոխ. աղքատացնել։

Տկլորութիւն—մերկութիւն։

Տղայ—տղայ։ Տղա՞յ ես թէ աղջիկ—ինչ նպատակի գնացիր՝ յաջողո՞ւմ է թէ ոչ։

Տղդան ծաղիկ—պարտիզի ծաղիկ։

Տմբամբալ—կամաց շարժուելով գնալ (օր. դուլթիկը ջրի երեսին ամբամբալօն էթում էր)։

Տմբամբացնել—կամաց շարժել (օր. միրուքը ամբամբացնում էր)։

Տմռկուել—սաստիկ թրջուել։

Տնազ—ծաղր (օր. տնազը մարդ չի սըպանի.-առած)։ Տնազ անել—ծաղրել։

Տնանկ—աղքատ (օր. անկ ա, տնանկ ա)։

Տնարար—աշխատաւոր. գործունեայ. ժիր։

Տնաւորուել—պսակուել. տուն ու տեղ դառնալ։

Տնաքանդ, Տնքանդ—ծոյլ. անհոգ. վատնող։

Տնդղել—դիտել. նայել. գննել։

Տնկել—խրել. ցցել (օր. ծառ տնկել)։

Տնկի—տունկ. մատաղ ծառ։

Տնկուել—մէջը խրուել (օր. ցխի մէջը տնկուեց)։

Տնորդովի—ամբողջ տնով, ընտանիքով (օր. տնորդովի վէ կայան գնացին)։

Տնփեսայ—տան փեսայ։

Տնքալ—ցաւից նեղանալ. յոգւոց հանել։ Տնքալ վաչալ—սաստիկ նեղանալ ցաւից։

Տնքտնքալ—հեծել. հառաչել. սաստիկ ա՛խ քաշել ցաւից։

Տոնիր—տորոն (ներկ)։

Տոպրակ—տոպրակ։ Էս մարդը սափ տոպրակ ա—ստախօս է։ Տոպրակը դարակուել ա, Տոպրակը թափ ա տուէ—խօսակցութեան նիւթը վերջացել է. ամեն գաղտնիք ասել, վերջացրել է։

Տոտաչոր—մանկան ոտները փաթաթելու չոր՝ օրօրոցում քուն գնելիս։

Տուղի դուչ—թութակ (թըռչուն)։

Տուն—տուն։ Տուն դառնալ, Տուն ու տեղ դառնալ—պսակուել, տուն ու տեղ դառնալ։ Տուն անել—քշել, գոռով տուն տանել (օր. գնա՛ հաւերին տո՛ւն տար)։ Տունը հէնց իմանաս պօղօքի մէջ ընկի—տունը լի է ամեն բարիքով։ Մի տուն կը շալակի, ման կ'ածի—շատ գործունեայ, անտեր կին է։ Մեր տունը որ լակ ձու անեմ, տամ պառավը՝ մարդ չի ծըլ-

տայ—փոխ. մեր տան մէջ ինքնիշխան եմ։

Տուա—ծայր (օր. Թելի տուա)։ Ուշունցի տուաը էլի բաց արեց—դարձեալ սկսեց հայհոյել։ Տենանք սրա տուաը ո՞րդի ա կարւում—տեսնենք այս բանը ինչպէս է վերջանում։

Տուր—ծեծ. Տուր տալ—ծեծել։ Տուր ու դմփոց, Տուր ու ծեծ—խրար ծեծելը։

Տոլնգալ—գոմէշի ձայն հանելը (օր. գոմէշը տոլնգում ա)։

Տոճինգ տալ, Տոճինգ տոճինգ տալ. Տոճնգի տալ—ցատկել. թռչկոտել. վազելով ոստումներ անել։

Տուուղ—լիքը (օր. տուուղ պօպօք)։

Տրաքացնել—փոխ. բարկացնել։

Տրաքել, Տրաքուել—ճեղքուել. փոխ. սիրտը նեղանալ բարկութիւնից (օր. էլ քո՛ւ սիրտը խի ա տրաքում). հրացանի պայթելը (օր. թուանքը տրաքեց)։ Կէ, տրա՛քուի (անէծք)։

Տրաքտրաքել—միրանի տեղից ճեղքուել (օր. տանը միրանի տեղան տրաքտրաքել ա)։

Տրեխ—արեխ. չարուխ. տաւարի կաշուց պատրաստած ոտնաման։

Տրորել—ոտնակոխ անել. մառաների մէջ մի բան մանրացնել (օր. գեղը մաններրի մէջին տրորեց՝ գցեց աչքը)։ Տրորատ տալ—ոտատակ տալ. ոտնակոխ անել։

Տրանջալ—արանջալ. ալատունջ յայտնել։

Տօթ—տօթ. տաքիկ շօք (օր. էսօր ինչ տօթ ա)։

Տօթել—փոխ. անպատուել. յանդիմանել։

Տօլար—պահարան պատի մէջ՝ ամաներէններ դարսելու համար։

Տօլու—յախճապակեայ գինու կամ ջրի աման։

Տօնլուղ—թօշակ. ռոճիկ։

# Ց

Ցախ—փուշ եղափայտ (ծառի ճիւղերից)։

Ցախատուն—փայտ պահելու տուն։

Ցախուել—ծառի ճիւղերից պատրաստած աւել։

Ցամաք—չոր (օր. ցամաք հացի կարօտ ա)։

Ցամաքացնել—ցամաքեցնել. չորացնել. փոխ. մի ակնթարթում մի բան գողանալ, ծածկել։

Ցամաքել—չորանալ. ցամաքիլ (օր. ծովը ցամաքեց. չորը ցամաքեց)։ Բերանս ցամաքել ա—փոխ. սաստիկ ծարաւ եմ զգում։

Ցան—աթարի մանրունք (վառելիք)։

Ցանել—սփռել. ցանել (օր. սերմ ցանել). փոխ. մէկին գլխիցը ռադ անել, հեռացնել (օր. ինչ արեց, չ'արեց՝ նրան չը կարաց ցանի)։

Ցանքս—ցանելը։ Ցանքս անել—ցանել։ Վար ու ցանքս—վարել և ցանելը։

Ցաւ—ցաւ. կսկիծ։ Ցաւը բռնել—ծննդականի ցաւը սկսել։

Ցաւացնել—ցաւեցնել (օր. ի՜նչ ես մարդի ցաւացնում. խի՜ ես գլուխս ցաւացնում)։

Ցաւաքեար—ցաւոտ. հիւանդոտ։

Ցաւել—խղճալ. ցաւել. ցաւ զգալ. ծննդաբերութեան ցաւը սկսել (օր. կնիկը ցաւում ա)։ Սիրտը շա՜տ ա ցաւում—շա՜տ է խղճում։

Ցգնել—տես Ցոթել։

Ցել—ցանած արտ։

Ցելուր—սերմանող մշակ։

Ցեխ—ցեխ։ Ցեխ անել—ցեխ պատրաստել. փոխ. խաբել. մի բան վերցնել՝ չը տալ (օր. նա իմ փողերը լա՛ւ ցեխ արեց)։ Մաստաքը ցեխն ընկնել—մէկի բանը չը յաջողել։

Ցէթ—մէգ։

Ցէթել—միգել։

Ցնթած—խելագար։

Ցնթել—խելագարուել։

Ցուրտ—ցուրտ։ Ցուրտ-դիմաթ ա—սաստիկ ցուրտ է։ Ցըրտեր ա անում—սկսում է ցրտել։ Ծառերը ցուրտը տարաւ—ցուրտը ծառերը փչացրեց։ Գեննախնձորը ընչանք լա՛ւ ցուրտը չ'ուտի՝ չեն հանի—գետնախնձորը ցրտերը սկսելուց յետոյ են հանում։ Ցուրտը տուեց, ծառաբարը խարար արեց—մրգերը ցուրտը փչացրեց։ Ցուրտն ընկաւ—ցուրտը սկսեց։

Ցոթել—ծնել (գործ է ածւում կենդանիների վերաբերութեամբ (օր. գէլը ցոթեց. կատուն ցգնեց)։ Անարգական նշանակութեամբ տւում է և կանանց։

Ցվրուել—ցրուիլ. թափուիլ (օր. փողը դէն ա ցվրվում)։

Ցրուել—սփռել. տարածել. բաժանել։

Ցրակօն—ջրի ցայտիւն։

Ցօղ—արեգակի ճառագայթ։

# Փ

**Փաթթել**—փաթաթել (օր. մի թղթի մէջի փաթթեց, տուեց իրան)։

**Փաթթուել**—փաթաթուել (օր. ճտովը փաթթուեց. շլնքովը փաթթուեց)։

**Փալան**—համետ. փալան (օր. իշի փալանը վեր ընկաւ)։ Խաղի ժամանակ մանուկներից ով քանի անգամ տարւում է, այնքան անգամ «փալան» է դրւում նրա վերայ։

**Փալանել**—փալան դնել (օր. գնաց էշը փալանեց, բեռը դրեց վրէն՝ ընկաւ ճամփայ)։

**Փախնել**—փախչել։ Փախնող փախնողի ա—ով կարողանում՝ փախչում է (վտանգի ժամանակ)։

**Փախցնել**—փախցնել. խլել (օր. աղջիկ փախցնել)։

**Փահլեան**—ըմբիշ. գօտէմարտ. լարախաղաց։ Սուտ փահլեան—փոխ. պարծենկոտ։ Փահլեանութիւն անել—գօտէմարտութեամբ զբաղուել։

**Փահլեանութիւն**—գօտէմարտութիւն։

**Փայ**—բաժին. մասն։ Փայ անել—բաժին անել։ Փայ փայ անել—բաժին բաժին անել։

**Փանջարայ**—լուսամուտ. պատուհան։

**Փանջայ**—կօշկի վերայ կարկատած փոքրիկ կտոր։ Փանջայ գցել—կօշկի ճղուած տեղը կտոր գցել, կարկատել։

**Փաշաշել**—փոքր ինչ չորանալ, ցամաքել։

**Փառ**—թաղանթ։

**Փասայ փուչէն քաշել, Փասայ փուչէն հաւաքել**—գալիք վտանգը նախատեսելով՝ հեռանալ, փախչել։

**Փարայ**—ձկան թեփ (чешуя). ամենափոքր դրամ։

**Փարդայ**—վարագոյր։ Փարդէն քաշել—վարագոյրը ծածկել։ Երեսի փարդէն պատռել ա—անամօթ է։

**Փարխաջ**—դոյլ։

**Փարչ**—ջրի աման (կաւից պատրաստած)։

**Փարչայ**—կտոր. մասն։ Փարչայ փարչայ անել, Փարչալամիշ անել—յօշոտել. կըտրատել. մաս մաս անել։

**Փարս ընկել**—երեսի վերայ

վայր ընկնել, փռուել։

Փարվանայ—խնձորի տեսակ։

Փափախ—գիւղական գտակ (ոչխարի մորթուց)։

Փափախչի—մորթէ գտակ կարող. փոխ. խաբեբայ։

Փեթակ—փեթակ. մեղրաճանճի բուն։

Փէյին—աթարի մանրուք։

Փէշ—քղանցք շորի։ Իմ ձեռն ա քու փէշը—յոյսս միայն դու ես։ Փէշերից կախ ըլնել—սաստիկ խնդրել մէկին։ Փէշիցը բռնել—մէկի օգնութեան դիմել. խնդրել (օր. Աստու փէշիցը բռնմ, բանդ աջ կ՚էթայ)։

Փէշակ—արհեստ։

Փէշաքեար—արհեստաւոր։

Փէշքաշ—պարգև (օր. փէշքաշ ձիու ատամները չեն համրրի.-առած)։ Փէշքաշ անել—պարգևել։

Փէշկիր—դենջակ. երեսսրբիչ։

Փէտ—փայտ։ Փէտը վեր ունես՝ գող շունը կ՚իմանայ (առած)։

Փէտանալ—փոխ. մեռնել. ցրտից սառչել՝ մնալ (օր. ցրտիցը փէտացանք՝ մնացինք)։

Փըստացնել—փըստացնել (օր. չիբուխը փըստացնում ա. պապիրոսը փըստացնում ա)։

Փըստ անցկենալ—վրիպել. չըյաջողել (օր. Թուանքը դաբաւեց՝ տուեց, համայ փըստ անցկացաւ)։

Փթիր—ձիու, իշի աղբ։

Փթրել—փթիր վեր ածել (օր. ձին փթրեց, ոտկի վէ գցեց)։

Փխանդաղ անել—որ և է բան մէկի ոտի տակը փռել (օր. ուզածս որ անես, գլուխս ոտիդ տակին փխանդաղ կ՚անեմ)։

Փիլաքան—սանդուղք. աստիճան։ Փիլաքան փիլաքան—աստիճան աստիճան։ Աշխարքս մի փիլաքան ա, մինը նի ա ըլնում, մէկելը՝ վէ գալի։

Փիլթայ—պատրոյգ (վէրքի վերայ) Փի՛լթայ բանի ջանից վրէն (անէծք)։

Փինաչի—հնակարկատ. Փինաչի են ասում մէկին, եթէ նա իր արհեստին հմուտ չէ (օր. նա հօ ո՛ւստայ չի՝ փինա՛չի ա)։

Փիս—վատ. անպիտան։

Փիր—սրբութիւն. սկզբնապատճառ (օր. նա հէքաթների փիր ա)։

Փիփերթ—բանջարեղէն։

Փլաւ—փլաւ։ Ղաբլու փլաւ—մրգեղէնով համեմած փլաւ։ Փլաւը յա՛ւ բան ա, մի օր մէր տանը, մի օր ձէր տանը (առած)։

Փլչել—ջարդել. կտրել.

Փխլուել—ջարդուել (օր. ձուն փխլուեց)։

Փղփուչ—փափլիկ։ Փղփուչ փղփուչ—փափլիկ փափլիկ (օր. փղփուչ փղփուչ գաթէք)։

Փնթփնթալ—քթի տակ կամացուկ խօսել. տրտնջալ։

Փնթփնթոց—քթի տակ կամացուկ խօսելը. տրտունջ։

Փնովել—վատաբանել. փնել։

Փշոտ—փշոտ. փշերով ծածկուած։

Փշտել—նեղացնել. յանդիմանել. ատել։

Փշտով—ատրճանակ։

Փշրել—փշրել. մանրացնել. կտոր կտոր անել։

Փշրուել—փշրուել. մանրանալ. փոխ. սաստիկ ամաչել (օր. նրան տեսնելիս ընե՛նց փըշրուեց, որ էլ ասել չի ուզի)։

Փշրունք—փշրանք (օր. հացի փշրունք. շաքարի փշրունք)։

Փոթոթել—սաստիկ այրել, խորովել (օր. տաք, եռման ջուրը շուռ տուեց նրա վրէն, էրեց, փոթոթեց)։

Փոթոթուել—սաստիկ այրուել, խորովուել։

Փոխարայ—փոխադարձ աշխատանք։ Փոխարայ բանել—փոխադարձաբար մի ուրիշի համար աշխատել (օր. էթում ա ուրշի հմար փոխարայ բանում, որ նրանք էլ իրա բանի վախտը գան իրան օգնեն)։

Փոխ—փոխանակ. փոխարէն. փոխ։ Փոխս գցել—չփոթել (օր. չաքմէքը փոխս ա գցէ ուրշի չաքմէքի հեննայ)։ Փո՛խ ընի բեղ—տես Թիքումդ գանուի։ Փոխ առնել, Փոխ վեր ունել—մի բան ուրիշից փոխ վերցնել (օր. հարեւանիցը միքանի հաց փոխ առաւ)։

Փոխել—փոխել։

Փոխինձ—փոխինդ. բոված ցորենի ալիւրից պատրաստած ուտելիք (քումելա)։

Փոխփոխել—փոփոխել։

Փոշաման—ալիւրի կճուճ։

Փոշի—ալիւր, որ յատկացրուած է կերակուրի մէջ բանեցնելու համար։

Փոր—փոր։ Փորը վեց վեց ա անում—սաստիկ քաղցած է։ Փորը գեննին քսել—փոխ. սաստիկ աղաչել, խնդրել։

Փորքաշ—թամբի այն երկայն կաշին, որ ձիու փորի տակով անց են կացնում, կապում, որպէս դի թամբը վայր չ՚ընկնի։

Փորձանք—վտանգ։ Գլուխը փորձանք գալ—վտանգի մէջ ընկնել։ Մնի գլուխը փորձանք բերել—մէկին փոր-

ձանքի մէջ գցել։

Փոցխ—փոցխ. մարգերի քարերը, խոտերը հանելու գործի։

Փոցխաւոր—փոցխով աշխատող մշակ։

Փոցխել—փոցխել. մարգերի քարերը, խոտերը հանել։

Փոքրաւոր—ծառայ։

Փոքրաւորութիւն—ծառայութիւն։

Փուդ—արատ. պակասութիւն։ Փուդ դնել—մի բանի չը հաւանել։

Փուլ գալ—քանդուել. աւերուել։

Փուչ—փուչ։ Իմ մառիցը փո՛ւչ հանող չի—նա ինձ օգտակար չի լինելու։ Ամառուայ փուչը՝ ձմեռուայ նուշը (առած)։

Փուչ—անպէտք. դատարկ։ Փո՛ւչ մարդ—վատ մարդ։ Փո՛ւչ կենդանի (հայհոյանք)։

Փչաղատում—վառնող. չռայլ (օր. չմ՛ա փչաղատում տղայ ա)։

Փշշել—փէթթիլ. ծաղկել։

Փռել—տարածել. փռել (օր. չորերը փռեց, որ չորանայ)։

Փռթկալ, Փռթկացնել—յանկարծ ծիծաղել։

Փռթկոց—յանկարծակի ծիծաղ։

Փռթկոն անել—տես Փռթկալ։

Փռնչի—հացթուխ։

Փռշտալ—փռնկտալ։

Փռշտուկ—մի տեսակ բոյս, որի տերևները փռնկտացնելու յատկութիւն ունին։

Փռշտոց—փռնկտալը։

Փսանալ—վատանալ։

Փսութիւն—վատութիւն։

Փսոր, Փսոր-մսոր—փորոտիք։

Փսփսալ—շշնջել։

Փսփսոց—շշունջ (օր. փսփսոցը տուն կը քանդի-առած)։

Փտրուկ—փտած։

Փրթել—բրդել. կտորել (օր. հաց փրթել)։ Մենծ մենծ փրթել—մեծախօսել։ Կուշտը սովածին մանդր կը փրթի (առած)։

Փքել—ուռցնել։

Փքուել—ուռչել. փոխ. հպարտանալ (օր. չեմ գիտայ՝ ընչի՞ վրէն ա ուռում, փքւում)։

Փօլատ—պողովատ։

Փօխան—վարտիկ (օր. փօխանը կատու ա ընկէ)։

Փօշմանել—ափսոսալ. զղջալ։ Փօր փօշման եղ դառաւ—փօշմանած ետ դառաւ։

Փօստ—ոչխարի մորթի։

# Ք

Քալաւայ—աւերակ շինութիւն:

Քախան—մարգերի աւելորդ խոտերը հանելը:

Քախանել, Քախան անել—մարգերի աւելորդ խոտերը հանել:

Քախանաւոր—քախանող մարդ կամ կին:

Քաձ—էգ գոմէշ, որ միքանի անգամ ձագ է ծնել. փոխ. գործ է ածվում և կանանց վերաբերութեամբ (անարգական մտքով):

Քաղալաղ—ուռի ոստերից գործած կլորաձև փոքրիկ կողով:

Քամակ—ետև: Քամակն ընկնել, Քամակիցն ընկնել—մէկի յետևից ընկնել բռնելու:

Քամբախ—դժբախտ:

Քամի—քամի. փոխ. ստախօս (օր. նա քա՛մի ա, քա՛մի): Քամին կտրեց, Քամին վեր ընկաւ—քամին դադարեց: Հին դարմանը քամուն տալ—փոխ. անցած, գնացած բաների մասին խօսակցել:

Քանդել—աւերել: Քանդըքունդ անել—աւերակ դարձնել: Տո՛ւնդ քանդուի (անէծք):

Քանդուել—աւերուել: Քանդուել քարատակուել—բոլորովին աւերուել:

Քանց—քան:

Քանքան—ջրանցք. առու:

Քանքանչի—ջրանցք մաքրող:

Քաշ—ծանրութիւն: Իրա քաշովը մին—իր ծանրութեան չափ (օր. իրա քաշովը մին ոսկի տուեց):

Քաշել—ձգել. կշռել (օր. քա՛շա տես ինչքա՛մ ա գալի):

Քաշկայ—երանի թէ:

Քաշ անել—քարշ անել (օր. պարանը կապեց մէջքը, քաշ արեց ֆորը):

Քաշուել—հեռանալ (օր. խալխը ժամիցը նոր էն քաշուէ). փոխ. ամաչել (օր. ըսկի մարդից չի քաշւում):

Քաշքշել—ձգձգել:

Քաչալ—կնդակ. բաչալ (օր. քաչալը դեղ իմանայ՝ իրա գլխին կ՚անի-առած):

Քաջք—սատանաներ. դևեր: Է՛լի քաջքերը բռնեցին—փոխ. դարձեալ սկսեց բարկանալ, կատաղել:

Քաջքոտել—սաստիկ բարկանալ:

Քառ—խուլ։

Քառանալ—խլանալ։

Քառնկաջ—անուշադիր. անհնազանդ (օր. շա՛տ քառնկաջ տղայ ա)։

Քառասուն—քառասուն (սեռ. քառասնի)։

Քառասունք—ծննդականի քառասնօրեայ ժամանակամիջոցը։

Քար—քար։ Քա՛րն էլ ա իրա ձեռին, պօպօքն էլ—ամեն իրաւունք իր ձեռքին է։ Քար ու քանդ անել—աւերակ դարձնել. աւերել։ Քարի հեննայ քաղուել աչ աւաղի հեննայ մաղուէ—անչափ նեղութիւններ կրելով տոկալ է։ Քարհերեց անել—քարկոծել։

Քարափ—ժայռ. քարաժայռ։ Քարափիցը վէ գցեմ՝ վէ կ'ընկնի—անպայման հնազանդ է ինձ։

Քարգահ—ձեռագործութիւն. ասեղնագործութիւն։ Քարգահ անել—ասեղնագործել։

Քարհանք—քարի հանք։

Քարմաղ—մաղի մի տեսակը, որով ցորենի միջից քարերը հանում, մաքրում են։

Քարտաշ—քար տաշող (արհեստաւոր)։

Քարտաշութիւն—քար տաշելու արհեստ։ Քարտաշութիւն անել—այդ արհեստով զբաղուել։

Քարւան—կարաւան։ Ձունը կը հաչայ, քարւանը կ'էթայ (առած)։

Քարփինջ—աղխտ։ Քարփինջ գցել—աղխտ շինել։

Քացի—աքացի։ Քացի տալ, Քացով տալ, Քացի գցել—աքացել։ Իշի քացուցը բէզամաղ չեն ընի (առած)։

Քաւթառ—վատ պառաւ կին (անարգական մտքով)։

Քաւոր—կնքահայր։

Քաւորամէր—կնքամայր։

Քաւորակին—կնքահօր կին։

Քաւքիր—մետաղեայ մեծ դըրկալ ծակոտիներով՝ կերակրի քափը քաշելու համար։

Քափ—փրփուր (օր. կերակը քափ. գինու քափ)։ Քափ ու քրդինքը կոխել ա—սաստիկ քրտնել է։

Քեաբաբի—ձմերուկի տեսակ։

Քեաթիրայ—կանացի վերնազգեստ։

Քեալլայ—գլուխ. գանգ։ Հա՛մայ քեալլայ ա, հա՛—փոխ. ի՛նչ խելացի, իմաստուն մարդ է։ Քեալլայ անել—գլխատել։

Քեալփաթին—ունելիք. քեալփաթին։

Քեահլան—նժոյգ։

Քեահրբար—սաթ. ելեքտրոն։

Քեամալ—խելք. միտք։ Խելք ու քեամալը տարել ա—ուշք ու միտքը գրաւել է։

Քեամանչայ—ջութակ։

Քեամանչի—ջութակահար. ջութակագործ։

Քեանթըրաղ—լարախաղաց։

Քեասիբ—խեղճ. աղքատ։ Քեասիբ-ֆուկարա—աղքատ մարդիկ։ Քեասըբի օ՛րը, հարսանի հօր գեօ՛րը (առած)։ Քեասիբ չես էլէ՝ հօ՛ քեասիբ հարևան ունեցել ես։

Քեասբութիւն—աղքատութիւն։

Քեարգեարդան—ընգեղջիւր. փոխ. քաջ. կտրիճ։

Քեար անել—ազդել. ներգործել։

Քեարիմ-զանդի—խաղողի տեսակ։

Քեաւշան—ամայի դաշտ։

Քեաֆուր—անգութ. անխիղճ։ Մնացել ա քեաֆրի փողումը—փոխ. աղքատացել, սընանկացել է։

Քեղ—բանջարեղէն (աղաջրի մէջ պահելու)։

Քենի—կնոջ քոյր։

Քենթիկ—ագահ. շատակեր։

Քենթկութիւն—ագահութիւն. շատակերութիւն։

Քեոթել—մաշկել (օր. փողի համար շո՛ւն են քեոթում, դու ասում ես՝ ըսենց չի, ընենց ա)։

Քեոփ—մօրեղբայր։

Քերեզան—կերակրի աման (կաւից պատրաստած)։

Քեօնդալան—ուղղահայեաց։

Քէչայ—թաղիք։

Քէֆ—ուրախութիւն. զուարճութիւն. հացկերոյթ (օր. լաւ քէ՛ֆ ա սարքում, օ՛խտն օր, օ՛խտը գշեր հարսանիք անում). կամք (օր. քէֆս չի ուզում՝ չեմ անում, ո՛ւմ ինչ). տրամադրութիւն (օր. քէֆդ ո՞նց ա, լա՞ւ ա)։ Քէֆը բերել—սաստիկ հաւանել (օր. էս աղջկայ սիրունութիւնը շա՛տ ա քէֆս բերէ)։ Քէֆ քաշել, Քէֆ անել—զուարճանալ. ուրախանալ։ Քէֆը չաղ, Քէֆը քօք—ուրախ. զոհ. լաւ տրամադրուած։

Քէֆով—արբեցած։

Քէֆովանալ—արբենալ։

Քըրչ—ցնցոտի։ Քըրչ-մըրչ—հին շորեր։

Քըս տալ—շներին գրգռել յարձակուելու։

Քը՛շ, քը՛շ—այս բացականչութիւնով հաւերը քշում, տուն են անում։

Քթէթ—նորահարսի հանդերձեղէն։

Քթոց—մեծ սակառ. կթոց. կողով։

Քինթ—քիթ։ Քինթը աղաղուել ա—շարութիւնը թո-

դել է. խելօքացել է։ Քինթ ու պռունգը ջարդել—սաստիկ ծեծել (օր. ընչանք նրա քինթ ու պռունգը չը ջարդեմ՝ դինջ չի կենայ)։ Քնթի մազ—փոխ. զզվեցնող (օր. քնթի մազի նման ինձանից ձեռ չի վեր ունում)։ Մնի քնթին մխալ—վրէժխնդիր լինել մէկից։ Քինթ ու պռունգը վէ թողալ, Քինթ ու պռունգը կիտել—դէմքը մռայլել (օր. խէ՛ր ըլնի, էդ խի՞ ես բինթ ու պռունգդ վէ թողէ, նօթերդ կիտէ, հէնց իմանաս սո՛ղ աշխարքի պարտքը քեզանից են ուզում, եա արար աշխարքի դարտը քեզ են տուէ)։

Քիշմիշի—խաղողի տեսակ։

Քիչ—սակաւ (օր. քիչ մի տայ, շատ կ'ուզի-առած)։ Քիչըմիչ—փոքր ինչ։ Քչութին անել—չը բաւականանալ. պակասել։

Քիսա, Քիսիկ—քսակ։

Քիր—քոյր։ (Քվօր—քրոջ)։

Քիւլֆադ—գերդաստան (օր. էս մի տուն քիւլֆադը բա պահիլ չի՛ ուզի)։

Քիքիր—քոյրիկ (գործ են ածում ոչ-ազգական կանանց վերաբերութեամբ)։

Քլմտորել—կատակով մէկին վայր գցելով հետը խաղալ (օր. իրար քլմտորում են, հաղ անում)։

Քնթկալ—կանանց քիթը և բերանը ծածկելու թաշկինակ։

Քնձրոտ, Քնձրոտ մնձրոտ—հասարակ. անպիտան. աննշան։

Քնջիթ—քնջութ, որի հատիկներից քաղցր ձէթ են պատրաստում (օր. քնջթի ձէթ)։

Քշել—հեռացնել (օր. ճանջերը քշա՛). աքսորել (օր. ես նրան էս գեղիցը թէ չը քշեմ՝ մա՛րդ չեմ)։

Քշեռք—կշիռ։

Քշռել—կշռել։

Քոզառ—խոշոր յարդ։

Քոս—քոր։ Քոր ու քոսը ջանը վեր ա կալէ—սաստիկ բորոտել է։

Քոսոտ—բորոտ. փոխ. աննշան մարդ (օր. էն քոսո՛տին մտիկ արէք, նա՛ էլ մարդի չի հաւանում)։ Ձեների քո՛սոտն ա կատաղէ (առած)։

Քոսոտել—բորոտել։

Քոր—քոր։ Եռ ու քորը ընկնել ջանը—մարմինը սաստիկ քոր գալ. փոխ. վրդովուիլ. անհանգիստ լինել։

Քորել—քորել (օր. ջանը քորել, գլուխը քորել)։

Քորփայ—մանուկ. ծծկեր. մատաղ (օր. քորփայ խիար)։

Քութութ—քթութ։

Քուլթուլթել, Քուլթուլթ անել—քլթուլթել։

Քուլ—մոխիր։ Քո՛ւլը գլխիդ (անէծք)։

Քուլայ—ձեան փաթիլ. բամբակի մեծ կտոր։ Քուլայ քուլայ—փաթիլ փաթիլ (օր. ձին ա գալի քուլայ քուլայ)։

Քուն—քուն։ Քուն դնել—քնացնել։ Քնով անցնել—երկար քնել։ Քունը գլխին, Քունը աչքերին—քնի մէջ։ Քունը տանել—քնել. ցանկութիւն ունենալ քնելու։ Քնել՝ քունն առնել—քնից յագենալ։ Քունը փախնել—քունը հեռանալ. չը կարողանալ քնել։

Քուչայ—փողոց։ Քուչայ քուչայ ընկնել—փողոցէ փողոց շրջել։

Քուջուջ—քջուջ։

Քուջուջել, Քուջուջ անել—քջուջել։

Քուռակ—մտրուկ. ձիու կամ իշի ձագ։

Քուսպ—կոպտոն. քնջթի ձէթ հանելուց յետոյ մնացած ամուր մասը, որով կերակրում են ընտանի անասուններին։ Քուսպ դառնալ—փոխ. պընդանալ. ամրանալ (օր. կերակուրը քուսպ ա դառէ)։

Քուրայ—հնոց. բով։

Քուրսի—հայ գիւղերում առհասարակ վառարանի գործածութիւն չը կայ. դորան փոխարինում է քուրսին, որը քառակուսի ձեւով մի տախտ է, տակը փոքրիկ թոնիր շինած, ուր կրակ են ածում և ոտները այնտեղ պարզելով՝ տաքանում։ Որպէս զի քուրսու տաքութիւնը աւելի տեւողական լինի, նրա վերայից վերմակներ են ծածկում։

Քուրք—մուշտակ։

Քուրքչի—մուշտակագործ։

Քուքուրթ—ծծումբ։

Քուֆթայ—քուֆթայ (քուլթայ)։ Քուֆթայ շիլայ—քուֆթից պատրաստած արգանակ։

Քշանալ—պակասել։

Քշացնել—պակասեցնել։

Քշութիւն—սակաւութիւն. պակասելը։ Քշութիւն կ'անի—կը պակասի. չի բաւականանայ (օր. հացներս քշութիւն կ'անի)։

Քշքշալ—կարկաչել (օր. ջուրը քշքշալէն էթում ա)։

Քշքշոց—կարկաչիւն. ջրի ձայն։

Քշփշալ—կամացուկ խօսակցել։

Քշփշոց—շշուկ (օր. քշփշոցը տուն կը քանդի.-առած)։

Քոթել—տես Հեջունել։

Քսպել—մէկին խաղում տանել։

Քտքտացնել—կօշիկները գետնին քսելով մանդալ։

Քաքսատոց—կօշիկների հանած ձայնը ման գալու ժամանակ։

Քրդինք—քրտինք։ Քրդինքախաշ ըլնել—քրտնքից խաշուել։

Քրդնել—քրտնել (օր. քնի, քնի՝ քրդնի)։

Քրէհ—վարձ։ Քրէհով տալ—վարձու տալ։

Քրէհել—վարձել։

Քրէհդար—բեռնակիր կենդանիներ վարձու տուող։

Քօթակ—ծեծ։ Քօթակ տալ, Քօթակ ուտացնել—ծեծել։

Քօթակել - ծեծել։

Քօթուկ—փայտի հաստ կտոր. կոճղ. փոխ. ծերունի. տան նեցուկ (օր. տատս մեր տան քօթուկն ա՝ էս տանիցը անպակաս ըլնի)։

Քօթօթ—արջի ձագ։

Քօլ, Քօլ ու քօռ—անպիտան իրա։

Քօլաշ—ցորենի դէզ։

Քօմմայ—բոլորը։

Քօմքով—բոլորը միասին։

Քօշք, Քօշք ու սարայ—ապարանք. պալատներ։

Քօչ—չու։ Քօչ ու բարխանայ անել—ունեցած չ'ունեցածը ժողովել, կապոտել չուելու համար։

Քօչացնել—գաղթել տալ. աքսորել. քշել։

Քօչել—չուել. գաղթել։

Քօչի—զուռնի մի եղանակ, որ նուագում են նորահարսին տանելու ժամանակ։

Քօռ—կոյր։ Քօռէ քօռ ման գալ—կոյր շրջել։ Քօռ ու փուչ անել—վատնել. փչացնել (օր. ինչ ունէր չ'ունէր՝ քօռ ու փուչ արեց, մնաց մատը լպստելօն)։

Քօռանալ—կուրանալ։ Քօռանա՜ս, պատերը բռնած ման գաս (անէծք)։

Քօռաղաղնայ—հակառակի պէս։

Քօռուղուփ—բթամիտ. անըն-դունակ։

Քօսայ—անմազ (մօրուս, բեխեր չ'ունեցող)։

Քօմփուրք—բանջարեղէն։

Քօփակ—ծերունի (անարգական նշանակութեամբ)։

Քօք—ծառի արմատ. փոխ. ցեղ. սերունդ (օր. քօ՛քդ աղանձուի, քօ՛քդ. անէծք). առողջ. գէր (օր. տաւարը լաւ քօք ա)։ Քօքըհան անել—արմատախիլ անել։

Քօքանալ—գիրանալ։

Քօքել—լարել (օր. սհաթը քօքեց). սկսել (օր. էլի նաղլը քօքեց. էլի լացը քօքեց)։

# Օ

Օգտել—օգնել։

Օեաղ—սթափ. զգօն (օր. նա չմ՛տ օեաղ ա քնում)։

Օթախ—սենեակ։

Օլրան—ճանապարհ պտոյտներով. կռման (գործածական Դիլիջանում)։

Օլորել—ոլորել (օր. թել օլորել)։ Կուռը օլորել—բազուկը ոլորել, ծռել։

Օլորուել—ոլորուել. ծռուել։

Օլու—դիակ։

Օխլաւ—գռնակի փոքր տեսակը, որով գաթի կամ ուրիշ քաղցր թխուածքի խմորը բաց են անում։

Օխնել—օրհնել։

Օխնած—օրհնած։ Հէ՛ր օխնած—հա՛յրդ օրհնուի։

Օխտը—եօթ։ Օխտը հացակեր—փոխ. շատակեր։ Օխտը տալ—ննջեցեալի եօթնեակը կատարել։ Օխտը պուճախը մին ա մանդալի—տան ամեն անկիւնը շրջում է. ամեն բանով հետաքրքրւում է։

Օձ—օձ. փոխ. խորամանկ. սատանայ։ Օձի լեզու հանել—սաստիկ աղաչել, պաղատել։ Օձի լեզու ունի—ճարտար, համոզիչ լեզու ունի։

Օղիայ—փորձանք։ Օղիայ բերել մնի գլուխը, Օղիայ հաղալ մնի գլուխը, Օղիայ գալ մնի գլուխը—մէկին պատուհասի մէջ գցել։

Օղլուշաղ—գերդաստան. կին։

Օղողել—ողողել (օր. բերանը ջրով օղողեց)։

Օղորմակոթ—բանջարեղէն։

Օղորմաթաս—ննջեցեալի վերայ խմած բաժակ (գինի)։

Օղորմի—ողորմի։ Օղորմի տալ—ողորմի տալ։ Օղո՛րմի նրա կողքի մեռելներին (անէծք)։ Օղո՛րմի հօրդ (օրհնութիւն)։

Օյին—խաղ. փորձանք։ Օյին բերել մնի գլուխը, Օյին գալ մնի գլուխը, Օյին հաղալ մնի գլուխը—մէկին փորձանքի մէջ գցել։

Օյինբազ—ծաղրածու (օր. ի՛նչ օյինբազ մարդ ա)։

Օշօշի ծաղիկ—դաշտային ծաղիկ։

*Օջաղ*—*կրակարանի. փոխ. ընտանիք. գերդաստան։ Օջաղ անել—կրակ անել օջաղում։ Օ՜ջաղդ քանդուի (անէծք)։*

*Օջորք*—*առաստաղ։*

*Օռնալ*—*ոռնալ (օր. շները ոռնում են)։*

*Օսալ*—*վատ (օր. օ՜սալ ա արէ՝ քեզ նեղ տեղից ազատել ա)։*

*Օսան*—*Օսաննա (յատ. ան. կան.)*

*Օր*—*օր. փոխ. կեանք (օր. օ՜րդ խաւարի.-անէծք)։ Օր տեսնալ—ուրախութիւն տեսնել. ուրախանալ (օր. հօրնը մօրս ձեռին ըսկի օ՜ր չը տեհայ)։ Օր տալ—սիրել. հանգիստ տալ։ Օր մեծութիւն, Օր ծերութիւն—ծերութեան օրերում։ Օրուց մանկուց, Օրուց քօրփուց—մանկութիւնից։ Օրով ջօրով—հազիւ հազ։ Ցէքսի օրը—հետեւեալ օրը։*

*Օրայ*—*որայ։*

*Օրդակ*—*վայրի սագ։*

*Օրդուրաթ*—*ծիրանի տեսակ։*

*Օրդանգու*—*ապանդակ։*

*Օրըգել*—*ձիուն կապել, թողնել արածելու։*

*Օրթում*—*երդում։ Օրթում ուտել, Օրթում կրակն ընկնել—երդուել։*

*Օրհնանք*—*օրհնութիւն։ Օրհնանք տալ—օրհնել (օր. որդկերանցը մի լաւ օրհնանք ա տալի, նրանց չարը տանում)։*

*Օրձկալ*—*փախել. սիրտ վեր ածել։*

*Օրպակաս*—*օրպակաս։ Երբ մանուկը ժամանակից շուտ է աշխարհ գալիս, ասում են՝* էս երեխեն օրպակաս ա։

*Օրօրել*—*որորել։*

*Օրօրծածկան*—*որորանի ծածկոց։*

*Օրօրոց*—*որորան։ Մաէ օրօրոց ա դառէ—փոխ. ամբողջ օրը ոտի վերայ աշխատում է։*

*Օրօփել*—*կերակուրը եփելիս մեծ դրգալով նրա երեսի ջուրը վերցնում են և կրկին կաթսայի մէջ լցնում, որ կերակուրը չը թափուի։ Այս գործողութիւնը կոչվում է՝* օրօփել։

# Ֆ

Ֆալ—գուշակութիւն։ Ֆալ բաց անել—գուշակել։ Ֆալ բաց անող—գրբաց։

Ֆալչի—գուշակող. գրբաց. փուխ. խարդախ. լիրբ. անզգամ (կին)։

Ֆահլայ—մշակ։

Ֆահլաբաշի—մշակների վերակացու։

Ֆահլութիւն—մշակութիւն։

Ֆահմ—հասկացողութիւն. իմացականութիւն։

Ֆահմել—հասկանալ. գլխի ընկնել (օր. ինչ ուզում ես՝ ասա, նա դադ չի ֆահմի)։

Ֆանդ, Ֆանդ ու ֆէլ—հնարագիտութիւն։ Ֆանդը գցել, Ֆըսանդը գցել—տես Ֆանդել։

Ֆանդել—յարմարաւոր դէպք գտնել՝ որ և է մտադրութիւն յաջողեցնելու համար։

Ֆանդով—հնարագէտ. վարպետ. փորձառու. խորամանկ (օր. շա՛տ ֆանդով մարդ ա)։

Ֆարագի—թէև։

Ֆարշ—սալայատակ։

Ֆարշել—տան յատակը աղիւսով կամ քարով ծածկել։

Ֆըռընչացնել—մռնչալ (ձիու)։

Ֆըրըրալ—վերևից թռչելով վայր ընկնել (օր. թռով տալու բաշտան՝ գլուխը ֆըրըրաց, վեր ընկաւ)։

Ֆըրֆըրալ, Ֆըրֆըրահար գալ—շողշողալ։

Ֆիլ—փիղ։

Ֆլան—այս ինչ. Ֆլան ֆըստան—այս ինչ, այն ինչ։

Ֆշշացնել—օձի ձայն հանելը (օր. օձը ֆշշացնում ա, վրա հասնում, տալու բաշտան՝ տեղն ու տեղը չորացնում ա)։

Ֆշշոց—օձի հանած ձայնը։

Ֆոգի—հոգի։

Ֆող—հող։ Ֆողէց ֆոգի կորչել—յաւիտեանս կորչել, անհետանալ.

Ֆոն—հոն։

Ֆոնի—հոնի ծառ.

Ֆոնի ձմերուկ—ձմերուկի մի տեսակը։

Ֆոտ—հոտ. Ֆոտ քաշել, Ֆոտ առնել—հոտ զգալ. հոտոտել։ Ֆոտ գալ—հոտ գալ։ Ֆուտը աշխար վեր ունել—սաստիկ հոտել (օր. հաւը

սատկել ա, որդնէ, ֆռան աշխարը ա վեր ունում)։

Փոտած—հոտած։ Փոտած մարդ—դժներես. վատ լեզուի տէր մարդ։

Փոր—հոր։

Փորել—հորել։

Փորթ—հորթ։

Փորթաթող—տարուայ այն ժամանակամիջոցը, երբ, ձմրան մօտենալու պատճառով, հորթերն այլ եւս դաշտը չեն տանում արածացնելու։

Փորթարած—հորթարած։

Փորոլի—հորսելի. հեծանոց։

Փունդատ—ձկները թունաւորելու բոյս։

Փռանգստան—Ֆրանսիա (օր. Ֆրանգստանայ թագաւոր)։

Փռանգի պորինջան—պամիդոր։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ